

ISSN 1829-1155

Հիմնադիր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ**

Խմբագրական
խորհուրդ՝

Ն. Թովմայան
Ա. Գյուլումյան
Ֆ. Թոխյան
Ա. Թունյան
Ա. Խաչատրյան
Ն. Նազարյան
Ա. Պետրոսյան

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81(189)

ՏԵՂԵԿԱԳԻՐ

3-4(99-100)
2020

© ԳԳ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

• ՀՀ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1547-1571)

- * «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1547, 2 հոկտեմբերի 2020 թվականի).....7
- * 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՎԱՐԿԵՐԻ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ II, ՓՈՒԼ 3 – ՄԱՍՀԱՆՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄ» ՆԱՍԱԿ-ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1548, 2 հոկտեմբերի 2020 թվականի).....13
- * «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՎԱՐԿԵՐԻ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ. «ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (ՋՈՀԿ) /ԱՌՈՒՐՅԱՆ ԳԵՏ. ՓՈՒԼ 1» ՄԱՍՀԱՆՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄ» ՆԱՍԱԿ-ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1549, 2 հոկտեմբերի 2020 թվականի).....17
- * 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԱՊՈՆԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1550, 2 հոկտեմբերի 2020 թվականի).....21
- * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՎԱՐԿԵՐԻ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԿՈՎԿԱՍՅԱՆ ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ՑԱՆՑ III (ԾՐԱԳՐԻ 2-ՐԴ ՓՈՒԼ). ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ՀԱՂՈՐԴԻՉ ԳԻԾ/ԵՆԹԱԿԱՅԱՆՆԵՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄ ԵՎ

- ՀԵՏՎՃԱՐՄԱՆ ՓՈՓՈԽՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» ՆԱՄԱԿ-ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1551, 2 հոկտեմբերի 2020 թվականի).....26
- * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՎԱՐԿԵՐԻ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 1-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԿՈՎԿԱՍՅԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆՑ I - ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ՀԱՂՈՐԴԻՉ ԳԻԾ/ԵՆԹԱԿԱՑԱՆՆԵՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՄԱՍԶԱՆՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄՈՒՄ ԵՎ ՀԵՏՎՃԱՐՄԱՆ ՓՈՓՈԽՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» ՆԱՄԱԿ-ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1552, 5 հոկտեմբերի 2020 թվականի).....32
- * «ՎԱՐՁԿԱՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՖԻՆԱՆՍՄՎՈՐՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԵՄ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՏԻԱՑՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1553, 26 հոկտեմբերի 2020 թվականի)37
- * 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1554, 27 հոկտեմբերի 2020 թվականի).....44
- * 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ԱՇԽԱԲԱԴՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԱԶՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՀԵՏ ՉԿԱՊՎԱԾ ՊԱՏԻԺՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՎԵՆՏԻԱՑՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1555, 27 հոկտեմբերի 2020 թվականի).....56
- * 2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՏԻԱՑԻ ԿԱՄԸՆՏԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1556, 27 հոկտեմբերի 2020 թվականի).....61
- * 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՐԵՎԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՏԻԱՑԻ՝ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԸՆՏԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1557, 27 հոկտեմբերի 2020 թվականի)65

- * 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 7-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ԱՐԲՅՈՒՐՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1558, 6 նոյեմբերի 2020 թվականի).....69
- * ԱՆԴՐԱՆԻԿ ԳԱԼՍՑՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 385-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 397-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ԵՎ 414²-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1559, 17 նոյեմբերի 2020 թվականի).....74
- * 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՆԱԶ ԿԼԻՄՅԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1560, 24 նոյեմբերի 2020 թվականի).....100
- * ԼՈՒՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԵՎ «ՅՈՒԷՄԷՅ ԻՆՏԵՐԿԱՐԳՈ ԲՍԵ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 128-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ 134-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1561, 24 նոյեմբերի 2020 թվականի).....104
- * 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-ԻՆ ԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՆ ՀԱՅՏԱԳՐԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՁԵՎՈՎ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-Ի՝ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՅԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՏԻԱՑԻ ԵՎ ԴՐԱՆ ԿԻՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ՝ ՌԵԶԻԴԵՆՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՃԱՆԱԶՄԱՆ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1562, 1 դեկտեմբերի 2020 թվականի)123
- * 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-ԻՆ ՄՈՍԿՎԱ ՔԱՂԱՔՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ, ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1563, 1 դեկտեմբերի 2020 թվականի)127

- * ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 93-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆՆԵՐԻՆ՝ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1564, 1 ղեկտեմբերի 2020 թվականի)135
- * ՆԵԼԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 124-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆՆԵՐԻՆ՝ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1565, 1 ղեկտեմբերի 2020 թվականի)147
- * 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 16-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՂԱԶԱԽՍԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱՎԹԱՄԹԵՐՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆՆԵՐԻՆ՝ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1566, 8 ղեկտեմբերի, 2020 թվականի)160
- * 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ՄՈՆՐԵԱԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՅՈՒՄԻ 50-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ «Ա» ԿԵՏՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆՆԵՐԻՆ՝ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1567, 8 ղեկտեմբերի 2020 թվականի)164
- * 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ՄՈՆՐԵԱԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՅՈՒՄԻ 56-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆՆԵՐԻՆ՝ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1568, 8 ղեկտեմբերի 2020 թվականի)167
- * 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱԿՑԻՋՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆՆԵՐԻՆ՝ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1569, 8 ղեկտեմբերի 2020 թվականի)170
- * 1989 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԳՐԻ՝ ՍԱՀՄԱՊԱՏԻՎ ԿԵՐԱՅՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՍԸՆՏԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆՆԵՐԻՆ՝ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1570, 8 ղեկտեմբերի 2020 թվականի)174

* «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 339-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ, ԴՐԱ ՀԵՏ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՌՈՒՄՈՎ
ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ
ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 16-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ԴՐԱՆՑ
ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ՏՐՎԱԾ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ,
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1571, 8 դեկտեմբերի 2020 թվականի).....178



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ
ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻԶԵՎ 2020
ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ
ՀԱՄԱՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ» ՎԱՐԿԱՅԻՆ
ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

2 հոկտեմբերի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Խաչատրյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի Ա. Դիլանյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Վ. Տերտերյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների, դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 3-4(99-100)2020
7

բանկի միջև 2020 թվականի ապրիլի 21-ին ստորագրված «Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2020 թվականի հունիսի 18-ի N 988-Ա որոշմամբ «Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2020 թվականի ապրիլի 21-ին ստորագրված «Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագիրում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Հայաստանի Հանրապետության վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի հունիսի 25-ին:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի հունիսի 25-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ վարկային համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը Պ Ա Ը Ե Ց.

1. «Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2020 թվականի ապրիլի 21-ին՝ համայնքային և միջհամայնքային ենթակառուցվածքների որակը, օգտագործումը և հասանելիությունը բարելավելու նպատակով:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությանը տրամադրվում է 17.900.000 (տասնյոթ միլիոն ինը հարյուր հազար) եվրո գումար՝ համայնքային և միջհամայնքային ենթակառուցվածքների որակը, օգտագործումն ու հասանելիությունը բարելավելու նպատակով:

3. Համաձայնագիրը բաղկացած է 3 առդիրներից. Առդիր 1-ով ներկայացվում է ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) նկարագրությունը,

Առդիր 2-ը վերաբերում է Ծրագրի կատարմանը, Առդիր 3-ով սահմանվում է պարտավորությունների մասով պարբերական մարումների ժամանակացույցը:

Համաձայնագիրն ունի Հավելված, որը դրա անբաժան մասն է կազմում, և որով ներկայացվում են Համաձայնագրում օգտագործված որոշ եզրույթների սահմանումները:

4. Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, Համաձայնագրով ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

- որպես Վարկառու հայտարարել Ծրագրի նպատակների իրականացման իր հանձնառության մասին: Այդ նպատակով տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կամ վերջինիս ցանկացած իրավահաջորդի միջոցով ապահովել, որ Ծրագիրն իրականացվի ընդհանուր պայմանների V հոդվածի և Համաձայնագրի Առդիր 2-ի դրույթներին համապատասխան (Հոդված III, 3.01.),

- Ծրագրի իրականացման նպատակով և ըստ կիրառելիության՝ ինչպես որոշվի Վերակառուցման և զարգացման միջազգային Բանկի (այսուհետ՝ Բանկ) կողմից, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կամ վերջինիս ցանկացած իրավահաջորդի միջոցով վարկի միջոցները տրամադրել Ծրագրի իրականացման համար պատասխանատու մարմնին՝ Հայաստանի Հանրապետության և նշյալ մարմնի միջև իրականացման համաձայնագրի շրջանակներում՝ Բանկին բավարարող պայմանների համաձայն (Իրականացման համաձայնագիր), (Առդիր 2, բաժին I, կետ Ա, ենթակետ 1),

- որպես Վարկառու Իրականացման համաձայնագրի (Համաձայնագրի Առդիր 2-ի Բաժին I.Ա.1-ում հիշատակված համաձայնագիրը, ըստ որի՝ Վարկառուն Ծրագրի իրականացման համար պատասխանատու մարմնին տրամադրում է Վարկի միջոցները (Հավելված, կետ 7-ի) շրջանակներում իր իրավունքներն իրականացնել և պարտականությունները կատարել այնպես, որ պաշտպանվեն իր և Բանկի շահերը և իրագործվեն վարկի նպատակները: Բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկի հետ ձեռք կրերվի այլ համաձայնություն, չփոխանցել, չփոփոխել, չվերացնել, չդադարեցնել, չեղյալ չհայտարարել կամ չկիրառել Իրականացման համաձայնագիրը կամ դրա որևէ դրույթ (Առդիր 2, բաժին I, կետ Ա, ենթակետ 2),

- որպես Վարկառու ապահովել, որ Ծրագիրն իրականացվի առողջության, անվտանգության, սոցիալական և բնապահպանական համապատասխան չափանիշները պատշաճորեն հաշվի առնելով, ինչպես նաև՝ ԲՄԿԾ-ին (Բանկի համար ընդունելի՝ Բնապահպանական և Սոցիալական կառավարման շրջանակ թվագրված 2020 թվականի հունվարով, որը կազմվել և ընդունվել է ծրագրի իրականացման համար պատասխանատու մարմնի կողմից և հրապարակվել է 2020 թվականի հունվարի 16-ին, իսկ Բանկի արտաքին կայքէջում՝ 2020 թվականի հունվարի 17-ին և հիշատակվում է Համաձայնագրի Առդիր 2-ի Բաժին I.Գ.1.(ա)(i)-ում (Հավելված, կետ 5), ԲՄԿՊ-ներին (տեղամասին վերաբերող ցանկացած Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան (պլաններ), որը կազմվելու և ընդունվելու է Ծրագրի իրականացման համար պատասխանատու մարմնի կողմից Համաձայնագրի Առդիր 2-ի Բաժին I.Գ.1.(ա) համապատասխան (Հավելված, կետ 4), ՏՔԾ-ին (Բանկի համար ընդունելի՝ 2020 թվականի հունվարով թվագրված՝ տարաբնակեցման քաղաքականության շրջանակ, որը կազմվել և ընդունվել է Ծրագրի իրականացման համար պատասխանատու մարմնի կողմից և 2020 թվականի հունվարի 16-ին հրապարակվել է, իսկ Բանկի արտաքին կայքէջում տեղադրվել է 2020 թվականի հունվարի 20-ին և հիշատակվում է Համաձայնագրի Առդիր 2-ի Բաժին I.Գ.1.(բ)-ում (Հավելված, կետ 17) և ՏԳԾ-ներին (որևէ տեղամասի վերաբերող տարաբնակեցման գործողությունների ծրագիր, որը Ծրագրի իրականացման համար պատասխանատու մարմնի կողմից պետք է կազմվի ՏՔԾ-ին համապատասխան և հաստատվի Բանկի կողմից համաձայնագրի Առդիր 2-ի Բաժին I.Գ.1.(բ)-ի համաձայն) համապատասխան:

Ինչպես նաև ապահովել, որ ձեռնարկվեն հետևյալ միջոցները.

1. եթե Ծրագրում ներառված որևէ միջոցառման համար, համաձայն ԲՄԿԾ-ի, պահանջվում է ԲՄԿՊ-ի իրականացում, ապա այդպիսի միջոցառումների համար որևէ աշխատանք չպետք է գնվի, քանի դեռ չի իրականացվել հետևյալը.

1.1. այդ միջոցառումների համար ԲՄԿՊ-ն՝ Ա) կազմվել է Բանկին բավարարող ձևով և ԲՄԿԾ-ին համապատասխան, Բ) հրապարակվել և քննարկվել է տեղի շահագրգիռ կողմերի հետ, ինչպես պահանջվում է ԲՄԿԾ-ով, և Գ) ներառվել է մրցութային փաստաթղթերում (Բանկի կողմից ընդունելի ձևով), և

1.2. եթե Ծրագրի Մաս Բ.1-ի շրջանակներում Ենթածրագրերն (Գործառնական ձեռնարկում (Ծրագրի իրականացման մասին մանրամասներ պարունակող ձեռնարկ (Հավելված, կետ 12) սահմանված չափորոշիչներին համապատասխանող ցանկացած հատուկ միջոցառում, որի շահառուն Ծրագրի Մաս Բ.1-ում հիշատակված միավորված համայնքներն են (Հավելված, կետ 18) ընդգրկող որևէ միջոցառման համար՝ ՏՔՇ-ի համաձայն՝ պահանջվի ՏԳԾ-ի իրականացում, ապա այդպիսի միջոցառումների համար որևէ աշխատանք չպետք է գնվի, քանի դեռ չի իրականացվել հետևյալը.

1.2.1. այդպիսի միջոցառումների համար ՏԳԾ-ն՝ Ա) կազմվել է Բանկին բավարարող ձևով և ՏՔՇ-ի պահանջներին համապատասխան և Բ) հրապարակվել է, ինչպես պահանջվում է ՏՔՇ-ով, և

1.2.2. կատարվել են նշված ՏԳԾ-ով պահանջվող բոլոր ձեռնարկվելիք միջոցները՝ նախքան նշված միջոցառումների մասով որևէ աշխատանք սկսելը, ներառյալ առանց վերոնշյալ սահմանափակման՝ Տարաբնակեցման փոխհատուցման և աջակցության համար միջոցների տրամադրումն այն դեպքում, երբ և եթե այդպիսի պահանջ կա ՏԳԾ-ի համաձայն, Բ) կազմվել է Բանկին բավարարող ձևով և բովանդակությամբ հաշվետվություն նշված ՏԳԾ պահանջներին համապատասխանության կարգավիճակի մասին և ներկայացվել է Բանկին, և Գ) Բանկը հաստատել է, որ նշված միջոցառումները կարող են մեկնարկել,

- որպես Վարկառու ապահովել, որ Ծրագրի միջոցառումներն իրականացվեն համապատասխան ԲՄԿՊ-ի և ՏԳԾ-ի (Ենթածրագրերի մասով) համաձայն՝ ըստ կիրառելիության,

- բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկի հետ ձեռք կրերվի այլ համաձայնություն, ապահովել, որ ԲՄԿՇ-ի, ԲՄԿՊ-ների, ՏՔՇ-ի և ՏԳԾ-ների որևէ դրույթ չվերացվի, չփոփոխվի, ուժը կորցրած չճանաչվի, չկասեցվի կամ չեղյալ չհայտարարվի՝ առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության: ԲՄԿՇ-ի, ԲՄԿՊ-ների, ՏՔՇ-ի և ՏԳԾ-ների դրույթների և Համաձայնագրի դրույթների միջև որևէ անհամապատասխանության դեպքում գերակայում են Համաձայնագրի դրույթները (Առդիր 2, բաժին I, կետ Բ, ենթակետ 1),

- որպես Վարկառու Ծրագրի յուրաքանչյուր օրացուցային կիսամյակն ընդգրկող հաշվետվություն ներկայացնել Բանկին ոչ ուշ, քան յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտից հետո քառասունհինգ (45) օր անց (Առդիր 2, բաժին 2),

- վարկային միջոցների առհանում չկատարել նախքան ստորագրման ամսաթիվը կատարված վճարումների համար (Առդիր 2, բաժին III, կետ Բ, ենթակետ 1),

- ապահովել, որ պարտավորության մասով պարբերական մարումները կատարվեն Համաձայնագրի Առդիր 3-ի աղյուսակում սահմանված ժամանակացույցին համապատասխան:

Սահմանադրական դատարանը կարևորում է վարկային միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործումը, ինչպես նաև այդ միջոցների նկատմամբ պատշաճ վերահսկողության անհրաժեշտությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2020 թվականի ապրիլի 21-ին ստորագրված «Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2 հոկտեմբերի 2020 թվականի
ՍԴՈ-1547



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 12-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆՔՆԱՆ
ՎԱՐԿԵՐԻ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ II, ՓՈՒԼ
3 – ՄԱՍՀԱՆՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄ» ՆԱՄԱԿ-
ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

2 հոկտեմբերի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Խաչատրյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի Ա. Դիլանյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Վ. Տերտերյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2020 թվականի մայիսի 12-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Վե-

րականգնման վարկերի բանկի միջև «Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II, փուլ 3 – մասհանման ժամկետի երկարաձգում» նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2020 թվականի հունիսի 11-ի N 932-Ա որոշմամբ 2020 թվականի մայիսի 12-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Վերականգնման վարկերի բանկի միջև «Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II, փուլ 3 – մասհանման ժամկետի երկարաձգում» նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Հայաստանի Հանրապետության վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի հունիսի 17-ին:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի հունիսի 17-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ նամակ-համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ը Գ Ե Ց**:

1. «Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II, փուլ 3 - մասհանման ժամկետի երկարաձգում» նամակ-համաձայնագիրը (այսուհետ՝ Նամակ-համաձայնագիր) ստորագրվել է 2020 թվականի մայիսի 12-ին՝ Հայաստանի Հանրապետության և Վերականգնման վարկերի բանկի (KfW) միջև 2013 թվականի դեկտեմբերի 27-ին ստորագրված (ուժի մեջ է մտել 21.06.2014 թ.) «Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II, փուլ 3» վարկային համաձայնագրով (այսուհետ՝ Վարկային համաձայնագիր) նախատեսված ֆինանսական միջոցների մասհանման ժամանակահատվածի երկարաձգման նպատակով:

Վարկային համաձայնագրով (փոփոխված 2018 թ. հունիսի 20-ին) Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II, փուլ 3-ի համար հատկացվում է 30.000.000 եվրո գումարի չափով արտոնյալ վարկ:

Վարկային համաձայնագիրը ստորագրելու համար նախադրյալ է հանդիսացել 2014 թվականի ապրիլի 11-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագիրը (Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2014 թվականի հունիսի 21-ին Ազգային Ժողովի ԱԺՈ-122-Ն որոշմամբ (ՄԴՈ-1155)):

Նամակ-համաձայնագիրը ներպետական ընթացակարգերին համապատասխան վավերացնելու համար նույն համաձայնագրով սահմանված է վերջնաժամկետ՝ մինչև 2020թ. սեպտեմբերի 30-ը, որպես դրանով նախատեսվող փոփոխությունների վերաբերյալ Վերականգնման վարկերի բանկի համաձայնության համար անհրաժեշտ նախապայմաններից մեկը (կետ (i): Սահմանադրական դատարանը սույն Նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության հարցը որոշելիս հաշվի է առել այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության (ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության) և Վերականգնման վարկերի բանկի միջև փոխադարձ համաձայնությամբ (Գործում առկա է Նամակ-համաձայնագրի կողմերի համապատասխան նամակագրությունը) այդ վերջնաժամկետը երկարաձգվել է մինչև 2020թ. նոյեմբերի 30-ը:

2. Նամակ-համաձայնագրով փոփոխություն է կատարվում Վարկային համաձայնագրի 3.2 հոդվածում, ըստ որի՝ նույն համաձայնագրով նախատեսված գումարի մասհանման վերջնաժամկետ է սահմանվում մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը՝ 2020 թվականի դեկտեմբերի 30-ի փոխարեն, պայմանով, եթե Հայաստանի Հանրապետությունը կրի երկարաձգման հետևանքով Վերականգնման վարկերի բանկի կողմից փոխհատուցման ենթակա ծախսերը («Երկարաձգման վերջնական վճար»), որը Հայաստանի Հանրապետության համար կազմում է 960.000 եվրո:

Սահմանադրական դատարանը կարևորում է վարկային միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործումը, ինչպես նաև այդ միջոցների նկատմամբ պատշաճ վերահսկողության անհրաժեշտությունը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 3-4(99-100)2020
15

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց 3**.

1. 2020 թվականի մայիսի 12-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Վերականգնման վարկերի բանկի միջև «Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II, փուլ 3 – մասհանման ժամկետի երկարաձգում» նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2 հոկտեմբերի 2020 թվականի
ՍԴՈ-1548



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՎԱՐԿԵՐԻ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ. «ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (ՋՌՀԿ)/ԱԽՈՒՐՅԱՆ ԳԵՏ. ՓՈՒԼ 1» ՄԱՍՀԱՆՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄ» ՆԱՄԱԿ-ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

2 հոկտեմբերի 2020թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Խաչատրյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի Ա. Դիլանյանի (զեկուցող), Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Վ. Տերտերյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դոնրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Վերականգնման վարկերի բանկի միջև 2020 թվականի հունիսի 22-ին ստորագրված՝ «Գերմանական ֆինանսական համագործակցություն Հայաստանի Հանրապետության հետ. «Ջրային ռեսուրսների համալիր կառավարում (ՋՌՀԿ)/Ախուրյան գետ. Փուլ 1» մասհանման ժամկետի երկարաձգում» նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2020 թվականի հուլիսի 16-ի N 1208-Ս որոշմամբ «Հայաստանի Հանրապետության և Վերականգնման վարկերի բանկի միջև 2020 թվականի հունիսի 22-ին ստորագրված՝ «Գերմանական ֆինանսական համագործակցություն Հայաստանի Հանրապետության հետ. «Ջրային ռեսուրսների համալիր կառավարում (ՋՌՀԿ)/Ախուրյան գետ. Փուլ 1» մասհանման ժամկետի երկարաձգում» նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Հայաստանի Հանրապետության վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի հուլիսի 27-ին:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի հուլիսի 27-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, վերոնշյալ նամակ-համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. «Գերմանական ֆինանսական համագործակցություն Հայաստանի Հանրապետության հետ. «Ջրային ռեսուրսների համալիր կառավարում (ՋՌՀԿ)/Ախուրյան գետ. Փուլ 1» մասհանման ժամկետի երկարաձգում» նամակ-համաձայնագիրը (այսուհետ՝ Նամակ-համաձայնագիր) ստորագրվել է 2020 թվականի հունիսի 22-ին Երևանում՝ Հայաստանի Հանրապետության և Վերականգնման վարկերի բանկի միջև 2014 թվականի դեկտեմբերի 19-ին ստորագրված՝ «Գերմանական ֆինանսական համագործակցու-

թյուն Հայաստանի Հանրապետության հետ. «Ջրային ռեսուրսների համալիր կառավարում (ՋՌՀԿ)/Ախուրյան գետ. Փուլ 1» վարկային համաձայնագրով (այսուհետ՝ Վարկային համաձայնագիր) նախատեսված ֆինանսական միջոցների մասհանման հայտի ներկայացման ժամանակահատվածի երկարաձգման նպատակով:

Վարկային համաձայնագրով Ջրային ռեսուրսների համալիր կառավարում (ՋՌՀԿ)/Ախուրյան գետ. Փուլ 1-ի համար հատկացվում է 50.000.000 եվրո գումարի չափով արտոնյալ վարկ: Վարկային համաձայնագիրը ստորագրելու համար նախադրյալ է հանդիսացել 2015 թվականի հունիսի 16-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագիրը (Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2015 թվականի հունիսի 23-ին Ազգային Ժողովի ԱԺՈ-169-Ն որոշմամբ (ՄԴՈ-1221):

Նամակ-համաձայնագիրը ներպետական ընթացակարգերին համապատասխան վավերացնելու համար նույն համաձայնագրով սահմանված է վերջնաժամկետ մինչև 2020թ. սեպտեմբերի 30-ը, որպես դրանով նախատեսվող փոփոխությունների վերաբերյալ Վերականգնման վարկերի բանկի համաձայնության համար անհրաժեշտ նախապայմաններից մեկը (կետ (i): Սահմանադրական դատարանը սույն Նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության հարցը որոշելիս հաշվի է առել այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության (ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության) և Վերականգնման վարկերի բանկի միջև փոխադարձ համաձայնությամբ (գործում առկա է Նամակ-համաձայնագրի կողմերի համապատասխան նամակագրությունը) այդ վերջնաժամկետը երկարաձգվել է մինչև 2020թ. նոյեմբերի 30-ը:

2. Նամակ-համաձայնագրով փոփոխություն է կատարվում Վարկային համաձայնագրի 2.2 հոդվածում, ըստ որի՝ նույն համաձայնագրով նախատեսված գումարի մասհանման վերջնաժամկետ է սահմանվում մինչև 2024 թվականի հունիսի 30-ը՝ 2019 թվականի դեկտեմբերի 30-ի փոխարեն, պայմանով, եթե Հայաստանի Հանրապետությունը կրի երկարաձգման հետևանքով Վերականգնման վարկերի բանկի կողմից փոխհատուցման ենթակա ծախսերը («Երկարաձգման վերջնական վճար»), որը Հայաստանի Հանրապետության համար կազմում է 1 300 000 եվրո:

Սահմանադրական դատարանը կարևորում է վարկային միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործումը, ինչպես նաև այդ միջոցների նկատմամբ պատշաճ վերահսկողության անհրաժեշտությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. «Հայաստանի Հանրապետության և Վերականգնման վարկերի բանկի միջև 2020 թվականի հունիսի 22-ին ստորագրված՝ «Գերմանական ֆինանսական համագործակցություն Հայաստանի Հանրապետության հետ. «Զրային ռեսուրսների համալիր կառավարում (ՋՌՀԿ)/Ախուրյան գետ. Փուլ 1» մասհանման ժամկետի երկարաձգում» նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2 հոկտեմբերի 2020 թվականի
ՍԴՈ-1549



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2020 թՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԱՊՈՆԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

2 հոկտեմբերի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Խաչատրյանի (նախագահող, զեկուցող), Վ. Գրիգորյանի, Ա. Դիլանյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի առաջին տեղակալ Ա. Ավանեսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 23 և 74-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2020 թվականի հունիսի 30-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապե-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 3-4(99-100)2020
21

տության կառավարության և Ճապոնիայի կառավարության միջև «Տնտեսական և սոցիալական զարգացում» դրամաշնորհի տրամադրման համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2020 թվականի հունիսի 30-ի N 1281-Ա որոշմամբ 2020 թվականի հունիսի 30-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ճապոնիայի կառավարության միջև «Տնտեսական և սոցիալական զարգացում» դրամաշնորհի տրամադրման համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Հայաստանի Հանրապետության վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի օգոստոսի 6-ին:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի օգոստոսի 6-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Ճապոնիայի կառավարության միջև «Տնտեսական և սոցիալական զարգացում» դրամաշնորհի տրամադրման համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2020 թվականի հունիսի 30-ին Երևանում:

Համաձայնագիրը նպատակ ունի տնտեսական և սոցիալական ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) ֆինանսավորման միջոցով զարգացնել Ճապոնիայի հետ ընդլայնվող տնտեսական համագործակցությունը և խթանել Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական զարգացումը:

2. Համաձայնագրի 1-ին պարբերության համաձայն՝ Ծրագրի իրականացմանը նպաստելու համար Ճապոնիայի օրենքներին, կանոնակարգերին և բյուջետային հատկացումներին համապատաս-

իսան, ճապոնիայի կառավարությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանը (այսուհետ՝ Ստացող) տրամադրում է չորս հարյուր միլիոն (¥400 000 000) ճապոնական իենի դրամաշնորհ (այսուհետ՝ Դրամաշնորհ):

3. Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո տասնչորս օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունը ճապոնիայում գտնվող բանկում Հայաստանի Հանրապետության անունով բացում է իեն արժույթով սովորական դեպոզիտային հաշիվ (այսուհետ՝ Հաշիվ) և Հաշվի բացման օրվանից յոթ օրվա ընթացքում Հաշվի բացման ընթացակարգի ավարտման մասին գրավոր տեղեկացնում է ճապոնիայի կառավարությանը (3-րդ պարբերություն, ենթակետ 1):

Ճապոնիայի կառավարությունը կտրամադրի Դրամաշնորհը նշված գրավոր ծանուցումը ստանալու օրվանից մինչև 2021 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում նշված գումարից Հաշվին ճապոնական իենով վճարում կատարելու միջոցով: Ժամանակահատվածը կարող է երկարաձգվել երկու Կառավարությունների պետական մարմինների միջև փոխադարձ համաձայնությամբ (4-րդ պարբերություն):

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- ապահովել, որ Դրամաշնորհը և դրա հաշվարկված տոկոսադրույքը պատշաճ կերպով և բացառապես օգտագործվի Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքների և (կամ) ծառայությունների ձեռքբերման համար, որոնք թվարկված են երկու Կառավարությունների պետական մարմինների միջև փոխադարձաբար համաձայնեցված ցանկում, ինչպես նաև Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այդպիսի վճարների կատարման համար, պայմանով, որ Ապրանքներն արտադրվում են թույլատրելի աղբյուր համարվող երկրներում, իսկ Ծառայությունները մատուցվում են իրավասու աղբյուրի երկրների քաղաքացիների կողմից (2-րդ պարբերություն, ենթակետ 1),

- ապահովել, որ Դրամաշնորհը և դրա հաշվարկված տոկոսը բացառապես հատկացվի Հաշվից Դրամաշնորհի տրամադրումից հետո 12 ամիս ժամանակահատվածում, եթե ժամանակահատվածը չի երկարաձգվել երկու կառավարությունների պետական մարմին-

ների միջև փոխադարձ համաձայնությամբ, Ապրանքների և/կամ Ծառայությունների ձեռքբերմանը և 2-րդ պարբերության 1-ին ենթապարբերությամբ նշված վճարների վճարմանը և Ծրագրի ավարտից հետո Ճապոնիայի կառավարությանը մնացյալ գումարը վերադարձնելուն պատրաստ լինելու համար (5-րդ պարբերություն, ենթապարբերություն 1, ենթակետ «ա»),

- ապահովել, որ Ապրանքների և (կամ) Ծառայությունների գնումներն ազատվեն մաքսատուրքերից, ներքին հարկերից և այլ հարկային վճարներից՝ առանց օգտագործելու Դրամաշնորհն ու դրա հաշվարկված տոկոսները (5-րդ պարբերություն, ենթապարբերություն 1, ենթակետ «բ»),

- ապահովել, որ Ապրանքները և (կամ) Ծառայությունները պահպանվեն և օգտագործվեն պատշաճ և արդյունավետ կերպով՝ Ծրագրի իրականացման համար, և դրանք չօգտագործվեն ռազմական նպատակներով (5-րդ պարբերություն, ենթապարբերություն 1, ենթակետ «ե»),

- ապահովել, որ Ապրանքները և (կամ) Ծառայությունները սկզբունքորեն օգտագործվեն վերջնական օգտագործողների կողմից (ներառյալ Հայաստանի Հանրապետությունը)՝ ոչ առևտրային նպատակներով (5-րդ պարբերություն, ենթապարբերություն 1, ենթակետ «զ»),

- Ճապոնիայի կառավարության պահանջով վերջինիս տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն Դրամաշնորհի և հաշվարկված տոկոսների վերաբերյալ (5-րդ պարբերություն, ենթապարբերություն 2) և այլն:

5. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության նման Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերի կատարման մասին գրավոր ծանուցումը Ճապոնիայի կառավարության կողմից ստանալու ամսաթվին:

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիա-

կան, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ց**.

1. 2020 թվականի հունիսի 30-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ճապոնիայի կառավարության միջև «Տնտեսական և սոցիալական զարգացում» դրամաշնորհի տրամադրման համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2 հոկտեմբերի 2020 թվականի
ՄԴՈ-1550



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ
ՎԱՐԿԵՐԻ ԲԱՆԿԻ ՄԻԶԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-ԻՆ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԿՈՎԿԱՍՅԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱԿԱՆ ՑԱՆՑ
III (ԾՐԱԳՐԻ 2-ՐԴ ՓՈՒԼ). ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ
ՀԱՂՈՐԴԻՉ ԳԻԾ/ԵՆԹԱԿԱՑԱՆՆԵՐ» ՎԱՐԿԱՅԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՄԱՍ ՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԻ
ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄ ԵՎ ՀԵՏՎՃԱՐՄԱՆ ՓՈՓՈԽՎԱԾ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» ՆԱՄԱԿ-ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

2 հոկտեմբերի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Խաչատրյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի (զեկուցող), Ա. Դիլանյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Հ. Վարդանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի կազմակերպության մասին» ՀՀ Դատաբարության և Կրթության նախարարության համատեղ հրամանի հիմամբ:

րանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դոնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Վերականգնման վարկերի բանկի միջև 2020 թվականի հուլիսի 1-ին ստորագրված «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց III (ծրագրի 2-րդ փուլ). Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ» վարկային համաձայնագրի մասհանումների ժամկետի երկարաձգում և հետվճարման փոփոխված ժամանակացույց» նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2020 թվականի հուլիսի 30-ի N 1250-Ս որոշմամբ որոշել է 2020 թվականի հուլիսի 1-ին ստորագրված «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց III (ծրագրի 2-րդ փուլ). Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ» վարկային համաձայնագրի մասհանումների ժամկետի երկարաձգում և հետվճարման փոփոխված ժամանակացույց» նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Հայաստանի Հանրապետության վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի օգոստոսի 5-ին:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի օգոստոսի 5-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, վերոնշյալ նամակ-համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Վերականգնման վարկերի բանկի միջև «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց III (ծրագրի 2-րդ փուլ). Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ» վարկային համաձայնագրի մասհանումների ժամկետի երկարաձգում և հետվճարման փոփոխված ժամանակացույց» նամակ-համաձայնագիրը (այսուհետ՝ Նամակ-համաձայնագիր) ստորագրվել է 2020 թվականի հուլիսի 1-ին՝ 2015 թվականի դեկտեմբերի 11-ով

թվագրված՝ «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց III (ծրագրի 2-րդ փուլ) . Հայաստան - Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ» վարկային համաձայնագրում փոփոխություններ կատարելու նպատակով:

2. «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց III (ծրագրի 2-րդ փուլ) . Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ» վարկային համաձայնագրով ծրագրի նպատակն է միացնել հայկական և վրացական էներգահամակարգերը վրացական սահմանին մոտ՝ Այրումում (Հայաստան) տեղակայվող 500/400/220 ԿՎ Բարձր լարման հաստատուն հոսանքի փոխակերպիչ կայանով (վերջնական հզորությունը 1050 ՄՎտ):

3. Նամակ-համաձայնագրով «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց III (ծրագրի 2-րդ փուլ) . Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ» վարկային համաձայնագրով նախատեսված պարտավորությունների փոփոխությունները Վերականգնման վարկերի բանկի համար ուժի մեջ կմտնեն մինչև 2020 թվականի նոյեմբերի 30-ը՝ Նամակ-համաձայնագրի վավերացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գրավոր հաստատումը ստանալու դեպքում և պահից:

4. Նամակ-համաձայնագրով փոփոխություն է կատարվում «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց III (ծրագրի 2-րդ փուլ) . Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ» վարկային համաձայնագրի 3.2-րդ հոդվածում, և մասհանումների պահանջներ կայացնելու վերջնաժամկետը երկարաձգվում է մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը, պայմանով, որ Հայաստանի Հանրապետությունը մասամբ կկրի այդ երկարաձգման հետևանքով Վերականգնման վարկերի բանկի կրած վերաֆինանսավորման ծախսերը, որը կհաշվարկվի Վերականգնման վարկերի բանկի կողմից կապիտալի շուկայի գործունեության՝ վերջնահաշվարկի օրվա դրությամբ գերակայող պայմանների հիման վրա:

5. Նամակ-համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է մասհանումների պահանջներ կայացնելու վերջնաժամկետը մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը երկարաձգվելու համար վճարել 1.180.000 (մեկ միլիոն հարյուր ութսուն հազար)

եվրո Վերականգնման վարկերի բանկին, եթե վերջինիս և փոխառուի՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ գրավոր համաձայնությամբ այլ բան նախատեսված չլինի:

6. Նամակ-համաձայնագիրն ունի հավելվածներ՝ Հավելված 1ա. «Պարտավորությունների պահպանումը Փոխառուի կողմից» և Հավելված 1բ. «Պարտավորությունների պահպանումը Ծրագրի իրականացման գործակալության կողմից», որոնք դառնում են «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց III (ծրագրի 2-րդ փուլ). Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ» վարկային համաձայնագրի բաղկացուցիչ մասեր:

7. Հայաստանի Հանրապետությունը Նամակ-համաձայնագրով ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

ա) սկսած 2025 թվականի հունիսի 30-ից մինչև 2030 թվականի հունիսի 30-ը՝ յուրաքանչյուր տարվա հունիսի 30-ին և դեկտեմբերի 30-ին մարել վարկը 6.916.666,66 (վեց միլիոն ինը հարյուր տասնվեց հազար վեց հարյուր վաթսունվեց եվրո և վաթսունվեց եվրոսենթ) եվրո մասնաբաժնով, իսկ 2030 թվականի դեկտեմբերի 30-ին 6.916.666,74 (վեց միլիոն ինը հարյուր տասնվեց հազար վեց հարյուր վաթսունվեց եվրո և յոթանասունչորս եվրոսենթ) եվրո մասնաբաժնով,

բ) մշտապես կատարել Նամակ-համաձայնագրով նախատեսված Հավելված 1ա-ով սահմանված պարտավորությունները,

գ) Վերականգնման վարկերի բանկին անհապաղ տրամադրել «Ճանաչե՛ք Ձեր հաճախորդին» կանոնի համաձայն պահանջվող բոլոր համապատասխան տեղեկությունները կամ համանման տեղեկություններ, որոնք կարող է հայցել Վերականգնման վարկերի բանկը,

դ) ցանկացած Պատժելի գործելակերպի, փողերի լվացման և (կամ) ահաբեկչության ֆինանսավորման որևէ արարքի մասին տեղեկանալուց կամ դրա վերաբերյալ կասկածներ ունենալուց անմիջապես հետո այդ մասին անհապաղ և սեփական նախաձեռնությամբ տեղեկացնել Վերականգնման վարկերի բանկին,

ե) Վերականգնման վարկերի բանկին տրամադրել «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց III (ծրագրի 2-րդ փուլ). Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ» վարկային համաձայնագրով ծրագրի և դրա հետագա ընթացքի վերաբերյալ ցանկացած և բոլոր տեղեկություններն ու հաշվետվությունները, որոնք Վերա-

կանգնման վարկերի բանկը կարող է պահանջել Նամակ-համաձայնագրով նախատեսված 1ա Հավելվածի նպատակների համար,

զ) հնարավորություն տալ Վերականգնման վարկերի բանկին և դրա գործակալներին Նամակ-համաձայնագրով նախատեսված 1ա Հավելվածի նպատակներով ցանկացած ժամանակ ստուգելու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և դրա (ենթա)կապալառուների և այլ շահագրգիռ կողմերի «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց III (ծրագրի 2-րդ փուլ). Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ» վարկային համաձայնագրով ծրագրին առնչվող մյուս բոլոր փաստաթղթերը և այցելել այդ ծրագրում ներառված կայանքները,

է) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կամ Վերականգնման վարկերի բանկին՝ Նամակ-համաձայնագրով նախատեսված 1ա Հավելվածում նախատեսված Պատժելի գործելակերպի, փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման որևէ արարք հայտնի դառնալուց կամ դրանց առնչությամբ կասկածներ ունենալուց անմիջապես հետո լիովին համագործակցել Վերականգնման վարկերի բանկի և դրա գործակալների հետ՝ որոշելու համար՝ արդյոք տեղի է ունեցել համապատասխանության հետ կապված այդպիսի դեպք,

ը) «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց III (ծրագրի 2-րդ փուլ). Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ» վարկային համաձայնագրով ծրագրի առնչությամբ չկնքել որևէ գործարք կամ չներգրավվել որևէ այլ գործունեության մեջ, որը կարող է արգելված լինել Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի կամ Եվրոպական միության կամ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կողմից:

Սահմանադրական դատարանը կարևորում է վարկային միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործումը, ինչպես նաև այդ միջոցների նկատմամբ պատշաճ վերահսկողության անհրաժեշտությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Վերականգնման վարկերի բանկի միջև 2020 թվականի հուլիսի 1-ին ստորագրված «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց III (ծրագրի 2-րդ փուլ). Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ» վարկային համաձայնագրի մասհանումների ժամկետի երկարաձգում և հետվճարման փոփոխված ժամանակացույց» նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ

2 հոկտեմբերի 2020 թվականի
ՍԴՈ-1551



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ
ՎԱՐԿԵՐԻ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՆ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԿՈՎԿԱՍՅԱՆ ԷԼԵԿՏՐԱԶԱՂՈՐԴՄԱՆ ՑԱՆՅ I -
ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ՀԱՂՈՐԴԻՉ ԳԻԾ/ԵՆԹԱԿԱՅԱՆՆԵՐ»
ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԻ
ԵՐԿԱՐԱԶԳՄՈՒՄ ԵՎ ՀԵՏՎՃԱՐՄԱՆ ՓՈՓՈԽՎԱԾ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» ՆԱՄԱԿ-ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

5 հոկտեմբերի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Խաչատրյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Դիլանյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Հ. Վարդանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դոնրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Վերականգնման վարկերի բանկի միջև 2020 թվականի հուլիսի 1-ին ստորագրված «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I - Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ» վարկային համաձայնագրի մասհանումների ժամկետի երկարաձգում և հետվճարման փոփոխված ժամանակացույց» նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2020 թվականի հուլիսի 23-ի N 1240-Ս որոշմամբ 2020 թվականի հուլիսի 1-ին ստորագրված «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I - Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ» վարկային համաձայնագրի մասհանումների ժամկետի երկարաձգում և հետվճարման փոփոխված ժամանակացույց» նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Հայաստանի Հանրապետության վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի օգոստոսի 6-ին:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի օգոստոսի 6-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, ինչպես նաև դրան կից ներկայացված կողմերի նամակագրությունը՝ Համաձայնագրի վերնագրի փոփոխության վերաբերյալ, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. Հայաստանի Հանրապետության և Վերականգնման վարկերի բանկի (այսուհետ՝ Բանկ կամ ՎՎԲ) միջև «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I-Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ» վարկային համաձայնագրի (այսուհետ՝ Վարկային համաձայնագիր) մասհանումների ժամկետի երկարաձգում և հետվճարման փոփոխված ժամանակացույց» նամակ-համաձայնագիրը (այսուհետ՝ Նամակ-համաձայնագիր) ստորագրվել է 2020 թվակա-

նի հուլիսի 1-ին՝ 2014 թվականի դեկտեմբերի 9-ով թվագրված՝ «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I- Հայաստան - Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ» վարկային համաձայնագրում փոփոխություններ կատարելու նպատակով:

2. «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I- Հայաստան - Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ» ծրագրի նպատակն է միացնել հայկական և վրացական էներգահամակարգերը վրացական սահմանին մոտ՝ Այրումում (Հայաստան) տեղակայվող 500/400/220 ԿՎ բարձր լարման հաստատուն հոսանքի փոխակերպիչ կայանով (վերջնական հզորությունը 1050 ՄՎտ):

Նամակ-համաձայնագիրն ուժի մեջ կմտնի ոչ ուշ, քան մինչև 2020 թվականի նոյեմբերի 30-ը Համաձայնագրի վավերացնելու վերաբերյալ ՀՀ գրավոր հաստատումը ստանալուց հետո:

3. Ըստ Նամակ-համաձայնագրի՝ փոփոխություն է կատարվում Վարկային համաձայնագրի 3.2 հոդվածում, և մասհանումների պահանջ ներկայացնելու վերջնաժամկետը երկարաձգվում է մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը, պայմանով, որ Հայաստանի Հանրապետությունը մասամբ կկրի այդ երկարաձգման հետևանքով Բանկի կրած վերաֆինանսավորման ծախսերը (Վերջնական երկարաձգման վճար), որը կհաշվարկվի Բանկի կողմից կապիտալի շուկայի գործունեության՝ վերջնահաշվարկի օրվա դրությամբ գերակայող պայմանների հիման վրա:

Նամակ-համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է վճարել Վերջնական երկարաձգման վճարի մի մասը՝ 740.000.00 (յոթ հարյուր քառասուն հազար) եվրո, եթե Փոխառուի և Բանկի հետ գրավոր համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ:

4. Նամակ-համաձայնագիրն ունի Հավելվածներ՝ Հավելված 1ա. «Պարտավորությունների պահպանումը Փոխառուի կողմից» և Հավելված 1բ. «Պարտավորությունների պահպանումը Ծրագրի իրականացման գործակալության կողմից», որոնք կցվում են Վարկային համաձայնագրին և դառնում են դրա բաղկացուցիչ մասը:

5. Հայաստանի Հանրապետությունը Նամակ-համաձայնագրով ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները

- սկսած 2025 թվականի հունիսի 30-ից մինչև 2029 թվականի դեկտեմբերի 30-ը՝ յուրաքանչյուր տարվա հունիսի 30-ին և դեկտեմբերի 30-ին մարել վարկը 7,500.000.00 եվրո մասնաբաժնով,
- մշտապես կատարել Հավելված 1ա-ով (Պարտավորությունների պահպանումը Փոխառուի կողմից) սահմանված պարտավորությունները, իսկ Ծրագրի իրականացման գործակալությունը պարտավորվում է մշտապես կատարել Հավելված 1բ-ով (Պարտավորությունների պահպանումը Ծրագրի իրականացման գործակալության կողմից) սահմանված պարտավորությունները,
- ՎՎԲ-ին անհապաղ տրամադրել «Ճանաչե՛ք Ձեր հաճախորդին» կանոնի համաձայն պահանջվող բոլոր համապատասխան տեղեկությունները կամ Փոխառուի մասին համանման տեղեկություններ, որոնք կարող է հայցել ՎՎԲ-ն,
- ցանկացած Պատժելի գործելակերպի, փողերի լվացման և (կամ) ահաբեկչության ֆինանսավորման որևէ արարքի մասին տեղեկանալուց կամ դրա վերաբերյալ կասկածներ ունենալուց անմիջապես հետո այդ մասին անհապաղ և սեփական նախաձեռնությամբ տեղեկացնել ՎՎԲ-ին,
- ՎՎԲ-ին տրամադրել Ծրագրի և դրա հետագա ընթացքի վերաբերյալ ցանկացած և բոլոր տեղեկություններն ու հաշվետվությունները, որոնք ՎՎԲ-ն կարող է պահանջել 1ա Հավելվածի նպատակներով,
- հնարավորություն տալ ՎՎԲ-ին և դրա գործակալներին 1ա Հավելվածի նպատակներով ցանկացած ժամանակ ստուգելու և դրա (ենթա)կապալառուների և այլ շահագրգիռ կողմերի՝ Ծրագրին առնչվող մյուս բոլոր փաստաթղթերը և այցելելու Ծրագրի հիմնական և դրան առնչվող բոլոր կայանքները,
- Փոխառուին կամ ՎՎԲ-ին Պատժելի գործելակերպի, փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման որևէ արարք հայտնի դառնալուց կամ դրանց առնչությամբ կասկածներ ունենալուց անմիջապես հետո լիովին համագործակցել ՎՎԲ-ի և դրա գործակալների հետ որոշելու համար՝ արդյոք տեղի է ունեցել համապատասխանության հետ կապված այդպիսի դեպք: Մասնավորապես, անհապաղ և ողջամիտ մանրամասնությամբ արձագանքել ՎՎԲ-ից ստացված ցանկացած ծանուցման և ՎՎԲ-ի պահանջով վերջինիս տրամադրել այդ արձագանքը հիմնավորող փաստաթղթեր,

• Ծրագրի առնչությամբ չկնքել որևէ գործարք կամ չներգրավվել որևէ այլ գործունեության մեջ, որը կարող է համարվել Պատժամիջոցների խախտում:

Սահմանադրական դատարանը կարևորում է վարկային միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործումը, ինչպես նաև այդ միջոցների նկատմամբ պատշաճ վերահսկողության անհրաժեշտությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. «Հայաստանի Հանրապետության և Վերականգնման վարկերի Բանկի միջև 2020 թվականի հուլիսի 1-ին ստորագրված «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I - Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ» վարկային համաձայնագրի մասհանումների ժամկետի երկարաձգում և հետվճարման փոփոխված ժամանակացույց» նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ

5 հոկտեմբերի 2020 թվականի
ՍԴՈ-1552



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՎԱՐՉԿԱՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ,
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԵՄ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

26 հոկտեմբերի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի (գեկուցող), Հ. Թովմայանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ արդարադատության նախարարի տեղակալ Բ. Գրիգորյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Վարձկանների հավաքագրման, օգտագործման, ֆինանսավորման և ուսուցման դեմ» միջազգային կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2020 թվականի հոկտեմբերի 13-ի N 1676-Ա որոշմամբ «Վարձկանների հավաքագրման, օգտագործման, ֆինանսավորման և ուսուցման դեմ» միջազգային կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի հոկտեմբերի 14-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2020 թվականի հոկտեմբերի 14-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ կոնվենցիան և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. «Վարձկանների հավաքագրման, օգտագործման, ֆինանսավորման և ուսուցման դեմ» միջազգային կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) ընդունվել է 1989 թվականի դեկտեմբերի 4-ին՝ Միավորված ազգերի կազմակերպության 44-րդ նստաշրջանում: Այն ուժի մեջ է մտել, համաձայն Կոնվենցիայի 19-րդ հոդվածի 1-ին մասի, 2001 թվականի հոկտեմբերի 20-ին: Կոնվենցիան ստորագրված է 17 և վավերացված՝ 36 պետության կողմից:

Սույն Կոնվենցիայի Կողմ պետություններն ընդունել են (Կոնվենցիայի նախաբան), մասնավորապես, որ

ա) վերահաստատում են Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ և «Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը համապատասխան պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության մասով միջազգային իրավունքի սկզբունքների մասին» հռչակագրով ամրագրված նպատակներն ու սկզբունքները,

բ) իրազեկ են եղել, որ վարձկանները հավաքագրվում, օգտագործվում, ֆինանսավորվում և ուսուցանվում են այնպիսի գործողությունների համար, որոնցով խախտվում են միջազգային իրավունքի այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են պետությունների ինքնիշխան հավասարությունը, քաղաքական անկախությունը, տարածքային ամբողջականությունը և ժողովուրդների ինքնորոշումը,

գ) համոզված են եղել, որ վարձկանների հավաքագրման, օգտագործման, ֆինանսավորման և ուսուցման դեմ Կոնվենցիայի ընդունումը կնպաստի այդպիսի հակաիրավական գործողությունների վերացմանը՝ դրանով իսկ հանգեցնելով Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված նպատակների և սկզբունքների պահպանմանը:

Կոնվենցիայով սահմանվել է սույն Կոնվենցիայի իմաստով «վարձկան» եզրույթի բովանդակությունը, որն ընդգրկում է Կոնվենցիայի 1-ին հոդվածի 1-ին մասին համապատասխան Կոնվենցիայի 1-ին հոդվածի 1-ին մասի «ա»-«ե» կետերում թվարկված բոլոր պայմանները (որպես հանրագումարային արդյունք), իսկ Կոնվենցիայի 1-ին հոդվածի 2-րդ մասին համապատասխան Կոնվենցիայի 1-ին հոդվածի 2-րդ մասի «ա»-«ե» կետերում թվարկված բոլոր պայմանները (որպես հանրագումարային արդյունք):

2. Կոնվենցիայի 2-րդ, 3-րդ և 4-րդ հոդվածներով նախատեսված են այն արարքները, որոնք Կոնվենցիայի իմաստով համարվում են հանցագործություն:

3. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Կոնվենցիան չի հանդիսանում հանձնման հարաբերությունները կարգավորող հիմնական միջազգային պայմանագիր: Ինչպես Կոնվենցիայով սահմանված, այնպես էլ հանձնման ենթակա այլ հանցագործությունների պարագայում գործում է «հանձնիր կամ դատիր» (aut dedere aut iudicare) սկզբունքը: Ավելին, ոչ ոք չպետք է հանձնվի այն պետությանը, որտեղ իրական վտանգ կա, որ նրա կյանքին վտանգ է սպառնում, կամ նրան կարող են սպառնալ խոշտանգումներ, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք կամ պատիժ, ինչպես նաև չհանձնվի այն պետությանը, որի օրենքներով տվյալ հանցագործության համար նախատեսված է մահապատիժ:

Սույն Կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության հարցը որոշելիս Սահմանադրական դատարանը հիմք է ընդունում այն, որ Կոնվենցիան ընդունելով Կողմ պետությունները հաստատում են, որ վարձկանների հավաքագրումը, օգտագործումը, ֆինանսավորումը և ուսուցումը պետք է համարվեն բոլոր պետությունների մտահոգություններն առաջացնող հանցագործություններ, և այդ հանցագործություններից որևէ

մեկը կատարած ցանկացած անձ ենթակա է կա՛մ քրեական հետապնդման, կա՛մ հանձնման, և ըստ այդմ՝ սույն Կոնվենցիայում ամրագրվել են համապատասխան կանոնակարգումներ:

4. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

ա) չհավաքագրել, չօգտագործել, չֆինանսավորել կամ չուսուցանել վարձկանների և արգելել այդպիսի գործողությունները (հոդված 5, մաս 1),

բ) չհավաքագրել, չօգտագործել, չֆինանսավորել կամ չուսուցանել վարձկանների՝ միջազգային իրավունքով ճանաչված ժողովուրդների ինքնորոշման անքակտելի իրավունքի իրավաչափ իրականացմանը հակադրվելու նպատակով, և միջազգային իրավունքին համապատասխան ձեռնարկել պատշաճ միջոցներ՝ այդ նպատակով վարձկանների հավաքագրումը, օգտագործումը, ֆինանսավորումը կամ ուսուցումը կանխելու համար (հոդված 5, մաս 2),

գ) Կոնվենցիայով սահմանված հանցագործությունների համար սահմանել համապատասխան պատիժներ, որոնցով հաշվի է առնվում այդ հանցագործությունների ծանր բնույթը (հոդված 5, մաս 3),

դ) համագործակցել Կոնվենցիայի Կողմ պետությունների հետ Կոնվենցիայով սահմանված հանցագործությունների կանխարգելման հարցում, մասնավորապես՝ ձեռնարկելով գործնականում կիրառելի բոլոր միջոցները՝ կանխելու համար Հայաստանի Հանրապետության տարածքում կամ դրանից դուրս այդ հանցագործությունները կատարելու համար Հայաստանի Հանրապետության համապատասխան տարածքներում նախապատրաստական աշխատանքների իրականացումը, այդ թվում՝ արգելելով ապօրինի գործողությունների իրականացումն այն անձանց, խմբերի և կազմակերպությունների կողմից, որոնք խրախուսում, դրդում, կազմակերպում են այդպիսի հանցագործություններ կամ մասնակցում են դրանց կատարմանը (հոդված 6, մաս 1, կետ ա),

ե) համագործակցել Կոնվենցիայի Կողմ պետությունների հետ Կոնվենցիայով սահմանված հանցագործությունների կանխարգելման հարցում, մասնավորապես՝ համակարգելով այդ հանցագործությունների կանխարգելման համար վարչական և այլ միջոցների ձեռնարկումը (հոդված 6, մաս 1, կետ բ),

զ) անմիջականորեն կամ Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարի միջոցով համապատասխան տեղեկություններն ստանալուց անմիջապես հետո դրանք ներկայացնել ազդակիր Կողմ պետություններին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե հիմքեր կան հավատալու, որ Կոնվենցիայով սահմանված որևէ հանցագործություն է կատարվել, կատարվում կամ կկատարվի (հոդված 8),

է) ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել Կոնվենցիայով սահմանված ցանկացած այն հանցագործության նկատմամբ Հայաստանի Հանրապետության իրավագործությունը հաստատելու համար, որը կատարվել է Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետությունում գրանցված նավի կամ օդանավի վրա, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության որևէ քաղաքացու կողմից կամ Հայաստանի Հանրապետության նպատակահարմարությամբ՝ քաղաքացիություն չունեցող և Հայաստանի Հանրապետությունում բնակվող անձանց կողմից (հոդված 9, մաս 1),

ը) ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել հաստատելու Հայաստանի Հանրապետության իրավագործությունը Կոնվենցիայի 2-րդ, 3-րդ և 4-րդ հոդվածներով սահմանված հանցագործությունների նկատմամբ այն դեպքերում, երբ ենթադրյալ հանցագործը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում, և Հայաստանի Հանրապետությունը նրան չի հանձնում Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պետության (հոդված 9, մաս 2),

թ) համոզվելով, որ հանգամանքներն այդպես են պահանջում ենթադրյալ հանցագործի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու պարագայում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան նրան կալանավորել կամ ձեռնարկել այնպիսի այլ միջոցներ, որոնք ապահովում են նրա ներկայությունն այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է քրեական կամ հանձնման վարույթ հարուցելու համար, և անհապաղ իրականացնել փաստերի նախնական քննություն (հոդված 10, մաս 1),

ժ) այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունը, Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն, անձին կալանավորում է կամ ձեռնարկում է նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված այլ միջոց, ապա անմիջականորեն կամ Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարի միջոցով այդ մասին անհապաղ

տեղեկացնել նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պետությունների շրջանակին (հոդված 10, մաս 2),

ժա) ապահովել ցանկացած անձի իրավունքը, որի առնչությամբ ձեռնարկվում են Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին մասում նշված միջոցները՝ անհապաղ դիմելու այն պետության ամենամոտ գտնվող ներկայացուցչին, որի քաղաքացին է ինքը, կամ որն այլ կերպ իրավասու է պաշտպանելու իր իրավունքները, կամ եթե նա քաղաքացիություն չունեցող անձ է, ապա այն պետության ներկայացուցչին, որի տարածքում նա ունի հիմնական բնակության վայր: Հայաստանի Հանրապետությունը պետք է ապահովի նաև այդ պետության ներկայացուցչի կողմից այցի իրավունքը (հոդված 10, մաս 3),

ժբ) Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված միջոցները ձեռնարկելիս եզրահանգումների մասին անմիջապես տեղեկացնել նույն հոդվածի 2-րդ մասում նշված պետություններին և նշել, թե արդյոք մտադիր է իրականացնել Հայաստանի Հանրապետության իրավագործությունը (հոդված 10, մաս 5),

ժգ) ցանկացած անձի համար, որի առնչությամբ իրականացվում է վարույթ Կոնվենցիայով սահմանված հանցագործություններից որևէ մեկի կապակցությամբ, վարույթի բոլոր փուլերում երաշխավորել արդարության պահանջների պահպանումը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավունքներն ու երաշխիքները՝ ներառյալ նաև միջազգային իրավունքի կիրառելի նորմերը (հոդված 11),

ժդ) եթե ենթադրյալ հանցագործը հայտնաբերվել է Հայաստանի Հանրապետության տարածքում, և եթե Հայաստանի Հանրապետությունը չի հանձնում նրան, ապա առանց որևէ բացառության և անկախ այն հանգամանքից՝ հանցագործությունը կատարվել է Հայաստանի Հանրապետության տարածքում, թե ոչ, գործը հանձնել Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան վարույթների միջոցով քրեական հետապնդում իրականացնելու նպատակով և ապահովել, որ այդ մարմիններն իրենց որոշումը կայացնեն նույն կարգով, ինչպես Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն այլ ծանր հանցագործության դեպքում (հոդված 12),

ժե) Կոնվենցիայով սահմանված հանցագործությունների առնչությամբ հարուցված քրեական գործով վարույթների կապակցությամբ Կոնվենցիայի Կողմ պետություններին՝ փոխադարձության հիման վրա, տրամադրել առավել լայն աջակցություն, ներառյալ

Հայաստանի Հանրապետության տրամադրության տակ եղած, վարույթի համար անհրաժեշտ բոլոր ապացույցները (հոդված 13, մաս 1),

ժգ) եթե ենթադրյալ հանցագործը քրեական հետապնդման է ենթարկվում Հայաստանի Հանրապետությունում, ապա Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ վարույթի վերջնական արդյունքի մասին տեղեկացնել Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին, որն էլ տեղեկատվությունը փոխանցում է մյուս շահագրգիռ պետություններին (հոդված 14):

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Կոնվենցիայով նախատեսված պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված դրույթներին և ի թիվս այլնի միտված են նաև վարձկանների հավաքագրման, օգտագործման, ֆինանսավորման և ուսուցման դեմ պայքարին՝ նպաստելով այդպիսի հակաիրավական գործողությունների վերացմանը՝ դրանով իսկ հանգեցնելով Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված նպատակների և սկզբունքների պահպանմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց 3.**

1. «Վարձկանների հավաքագրման, օգտագործման, ֆինանսավորման և ուսուցման դեմ» միջազգային կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

26 հոկտեմբերի 2020 թվականի
ՄԴՈ-1553



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱԴՆԵՐԻ ԵՎ
ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

27 հոկտեմբերի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Է. Շաթիրյանի (զեկուցող), Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
Կառավարության ներկայացուցիչ՝ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Վ. Միմոնյանի,
համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,
դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի նոյեմբերի 22-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտե-

սական միության շրջանակներում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հետ գործառնությունների իրականացման առանձնահատկությունների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2020 թվականի մայիսի 7-ի N 706-Ա որոշմամբ 2019 թվականի նոյեմբերի 22-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հետ գործառնությունների իրականացման առանձնահատկությունների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի մայիսի 22-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2020 թվականի մայիսի 22-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա եզրակացությունները և մյուս փաստաթղթերը Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հետ գործառնությունների իրականացման առանձնահատկությունների մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2019 թվականի նոյեմբերի 22-ին Մոսկվայում՝ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՄ կամ Միություն) շրջանակներում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի ազատ շրջանառության ապահովման գործառնությունների իրականացման ոլորտներում արդյունավետ միջոցառումների մշակման, ինչպես նաև անդամ պետությունների մրցակցային առավելությունների և դրանց փոխգործակցությանն ուղղված փոխշահավետ առևտրատնտեսական կառուցակարգերի ձևավորման համար պայմանների ստեղծման նպատակով:

2. Համաձայնագրի կատարման համար պատասխանատու մարմիններն են՝ Էկոնոմիկայի նախարարությունը, Արտաքին գործերի

3-4(99-100)2020

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

նախարարությունը, Արդարադատության նախարարությունը, Ֆինանսների նախարարությունը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, Պետական եկամուտների կոմիտեն, Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը, Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը:

3. Համաձայնագիրը ԵԱՏՄ շրջանակներում սահմանում է թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի գործառնությունների առանձնահատկությունները և տարածվում է իրավաբանական և որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձանց (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր)՝ թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի գործառնություններ (սահմանված են 2-րդ հոդվածի 2-րդ կետում) իրականացնելու նպատակով գործունեության հետ կապված իրավահարաբերությունների վրա (հոդված 2, կետ 1):

Համաձայնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանվում են այն գործառնությունները, որոնց նկատմամբ Համաձայնագիրը չի կիրառվում:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

4.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չսահմանել խտրական նորմեր և այնպիսի նորմեր, որոնք կսահմանափակեն վերամշակված կամ գտարկված թանկարժեք մետաղների վերադարձը մյուս անդամ պետության տարածք՝ Հայաստանի Հանրապետության այն կազմակերպություններում, որոնցում իրականացվել են մյուս անդամ պետության տարածքում արդյունահանված հանքային հումքի վերամշակումը կամ գտարկումը (հոդված 4, կետ 4),

4.2. ապահովել, որ իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերն իրականացնեն թանկարժեք մետաղների պարտադիր հաշվառում՝ ըստ թանկարժեք մետաղի անվան, զանգվածի և պարունակության (հարգի), ինչպես նաև թանկարժեք քարերի դասակարգման և արժեքային նկարագրերը սահմանելու նպատակով իրականացնեն թանկարժեք քարերի պարտադիր հաշվառում՝ ըստ անվան, զանգվածի, դասակարգման նկարագրերի համաձայն Միության շրջանակներում կիրառվող նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի (հոդված 5, կետ 1),

4.3. ապահովել, որ չմշակված բնական ադամանդների տեղափոխումը Հայաստանի Հանրապետությունից մյուս անդամ պետության տարածք իրականացվի չմշակված բնական ադամանդների սերտիֆիկացման¹ միջազգային սխեմայի պահանջներին համապատասխան (հոդված 7),

4.4. արգելել Միության շրջանակներում գործարքների իրականացումը այն թանկարժեք քարերի հետ, որոնց դասակարգման նկարագրերը սահմանված չեն (հոդված 8, կետ 1),

4.5. ապահովել, որ թանկարժեք քարերի դասակարգման և արժեքային նկարագրերի սահմանումն իրականացվի թանկարժեք քարերի սորտավորման, նախնական դասակարգման և նախնական գնահատման (անդամ պետության տարածքում արդյունահանելու դեպքում), նույնականացման (Միության անդամ պետություն չհանդիսացող պետությունների տարածքներից Միության մաքսային տարածք ներմուծելու դեպքում) գործընթացում, ինչպես նաև դրանց մշակումն ավարտելու ժամանակ Միության շրջանակներում կիրառվող նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի հիման վրա (հոդված 8, կետ 2),

4.6. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության տարածքում արդյունահանված՝ չմշակված թանկարժեք քարերի սորտավորումը, նախնական դասակարգումը և նախնական գնահատումն իրականացվի դրանք արդյունահանող սուբյեկտների կամ մարմինների (կազմակերպությունների) կողմից, որոնք լիազորված են իրականացնելու այդպիսի գործառնություններ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում արդյունահանվել են չմշակված թանկարժեք քարերը (հոդված 8, կետ 3),

4.7. ապահովել, որ երեսակված թանկարժեք քարերի վաճառքը (իրացումը) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից ֆիզիկական անձանց իրականացվի համաձայն մանրածախ առուվաճառքի պայմանագրի յուրաքանչյուր քարի կամ միասնական փաթեթում ներառված 2 և ավելի երեսակված թանկարժեք քարերի խմբաքանակի սերտիֆիկատի (վկայականի) առկայության

¹ Չմշակված բնական ադամանդների սերտիֆիկացման միջազգային սխեմայի սերտիֆիկատների ձևակերպման և տրման կարգը (Քիմբերլիի գործընթացի սերտիֆիկատ), ինչպես նաև չմշակված բնական ադամանդների սերտիֆիկացման միջազգային սխեմայի պահանջների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու կարգը սահմանվում են անդամ պետության օրենսդրությամբ:

դեպքում, որը տրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հավատարմագրված մարմնի (կազմակերպության) կողմից (հոդված 9, կետեր 1 և 2),

4.8. արգելել հումքի (բնական) տեսքով չմշակված թանկարժեք քարերի, ինչպես նաև այն բնակտորների, որոնք ենթակա չեն գտարկման, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից ֆիզիկական անձանց վաճառքը (իրացումը) (հոդված 9, կետ 4),

4.9. ապահովել, որ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի սեփական արտադրությունում հավաքված թանկարժեք մետաղների ջարդոնը և թափոնները, թանկարժեք քարերի թափոնները Միության մաքսային տարածքից արտահանվեն Միության իրավասության ներքո գտնվող ակտերով սահմանված կարգով (հոդված 10, կետ 2, ենթակետ «դ»),

4.10. երաշխավորել թանկարժեք մետաղների ջարդոն և թափոններ ձեռք բերող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից Համաձայնագրի 10-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված գործողություններից մեկի իրականացումը (հոդված 10, կետ 5),

4.11. ապահովել ջարդոնից և թափոններից ստացված թանկարժեք մետաղների, ինչպես նաև, իրենց տեսակից և վիճակից կախված, վերաօգտագործված թանկարժեք քարերի օգտագործումն ու շրջանառության իրականացումը՝ Համաձայնագրին համապատասխան (հոդված 10, կետ 6),

4.12. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չսահմանել նորմեր, որոնք կսահմանափակեն մյուս անդամ պետության տարածքից տեղափոխված ջարդոնից և թափոններից Հայաստանի Հանրապետության կազմակերպություններում արդյունահանված թանկարժեք մետաղների վերադարձը այն անդամ պետություն, որի տարածքից տեղափոխվել են այդ ջարդոնն ու թափոնները (հոդված 10, կետ 7),

4.13. ապահովել, որ Միության մաքսային տարածք ներմուծված և «բացթողում ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգին համապատասխան բաց թողած ոսկերչական և այլ իրերը, որոնք ենթակա են դրոշմավորման այն անդամ պետության հարգադրոշմով, որի տարածք դրանք ներմուծվել են, նշված պահանջներին համապատասխան, բացառությամբ այն դեպքերի, որոնք նախատեսված են Համաձայնագրի 11-րդ հոդվածի 4-րդ կետով, համապատասխան են այն հարգերին, որոնք սահմանված են ոսկերչական

և այլ իրերի նմուշահանման, հետազոտման և դրոշմման պահանջներով, որոնք հաստատվում են Հանձնաժողովի Խորհրդի կողմից (հոդված 11, կետ 1),

4.14. ապահովել, որ ոսկերչական և այլ իրերը, որոնց նկատմամբ գործում են միջազգային պայմանագրեր, որոնք նախատեսում են Հայաստանի Հանրապետության և Միության անդամ չհանդիսացող պետության հարգադրոշմի փոխադարձ ճանաչում, որոնք ներմուծվել են Միության մաքսային տարածք և բաց թողնվել Հայաստանի Հանրապետության տարածքում ներքին սպառման համար բացթողման մաքսային ընթացակարգի համաձայն, վաճառքի (իրացման) նպատակով մյուս անդամ պետության տարածք տեղափոխելիս ենթարկվեն դրոշմավորման Հայաստանի Հանրապետության հարգադրոշմով (հոդված 11, կետ 2),

4.15. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության տարածքում պատրաստված ոսկերչական ու այլ իրերը համապատասխանեն Համաձայնագրի 11-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերությունում նշված պահանջներով սահմանված դրոշմներին, ունենան Հայաստանի Հանրապետության անվանական դրոշմի դրոշմվածք և հարգորոշիչ դրոշմ, բացառությամբ այն դեպքերի, որոնք նախատեսված են Համաձայնագրի 11-րդ հոդվածի 4-րդ կետով (հոդված 11, կետ 3),

4.16. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը, որոնք իրականացնում են ոսկերչական և այլ իրերի պատրաստման (արտադրության) գործունեություն, ունենան անվանական դրոշմ, որի դրոշմվածքը դրվում է իրենց պատրաստած բոլոր ոսկերչական և այլ իրերի վրա (հոդված 11, կետ 7),

4.17. արգելել ոսկերչական և այլ իրերի, որոնց հարգադրոշմը ցածր է համապատասխան թանկարժեք մետաղի համար սահմանված նվազագույն հարգադրոշմից, ինչպես նաև այն իրերի, որոնք պատրաստված են ոչ թանկարժեք մետաղների կիրառմամբ, դրոշմավորումը և իրացումը որպես ոսկերչական և այլ իրեր, ինչպես նաև ապահովել, որ այդպիսի իրերը չունենան դրոշմների դրոշմվածք, որոնք իրենց տեսքով հիշեցնում են հարգորոշիչ դրոշմի կամ թանկարժեք մետաղների հարգադրոշմների նշաններ, որոնք չեն համապատասխանում թանկարժեք մետաղների ձուլվածքին, որոնցից պատրաստվել են այդպիսի արտադրանքները (հոդված 11, կետ 8).

4.18. ապահովել, որ անվանանիշների ծածկագրերը յուրաքանչ-յուր տարի սահմանվեն Հայաստանի Հանրապետության այն մարմնի (կազմակերպության) կողմից, որը լիազորված է նմուշառման, հետազոտման ու դրոշմման համար, կամ նորմատիվ իրավական կարգավորման համար Հայաստանի Հանրապետության լիազոր մարմնի կողմից, և ապահովել, որ դրանց մասին տեղեկությունը փոխանցվի Հայաստանի Հանրապետության ոսկերչական և այլ տեսակի իրեր արտադրողներին, ինչպես նաև՝ եռամսյակը մեկ մյուս անդամ պետությունների նորմատիվ իրավական կարգավորման համար լիազոր մարմիններին, և այն մարմիններին (կազմակերպություններին), որոնք լիազորված են նմուշառման, հետազոտման ու դրոշմման համար (հոդված 11, կետ 10, պարբերություն 2),

4.19. արգելել առանց այնպիսի դրոշմների դրոշմվածքի ոսկերչական և այլ իրերի վաճառքը (իրացումը), որոնք, Համաձայնագրին համապատասխան, ենթակա են հարգադրոշմով դրոշմավորման (հոդված 11, կետ 11),

4.20. ոսկերչական և այլ արծաթյա իրերը, որոնք պատրաստվել են Հայաստանի Հանրապետության տարածքում, և որոնց նկատմամբ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, դրոշմավորումն իրականացվում է կամավոր հիմունքներով, Հայաստանի Հանրապետության տարածքում թույլատրելի վաճառել (իրացնել) այդպիսի իրերի վրա անվանական դրոշմվածքի առկայության դեպքում, իսկ վաճառքի (իրացման) նպատակով մյուս անդամ պետության տարածք այդպիսի իրերի տեղափոխման ժամանակ ապահովել, որ դրանք ենթարկվեն դրոշմավորման Հայաստանի Հանրապետության հարգադրոշմով (հոդված 11, կետ 12),

4.21. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը, Հայաստանի Հանրապետության տարածք մեկ այլ անդամ պետության տարածքից ոսկերչական և այլ իրեր տեղափոխման դեպքում նորմատիվ իրավական կարգավորման համար Հայաստանի Հանրապետության լիազոր մարմին ներկայացնեն տեղեկություն այդպիսի իրերի տեղափոխման մասին (հոդված 11, կետ 13),

4.22. ապահովել, որ նորմատիվ իրավական կարգավորման համար Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինը ոսկերչական և այլ իրերի մուտքի մասին իրազեկի այն անդամ պետության նորմատիվ իրավական կարգավորման համար լիազոր մարմնին, որի տարածքից տեղափոխվել են այդ իրերը (հոդված 11, կետ 14),

4.23. ապահովել, որ նորմատիվ իրավական կարգավորման համար Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինը մյուս կողմերի լիազոր մարմինների հետ ապահովի տեղեկատվության փոխանակում օրենսդրական և այլ նորմատիվ իրավական ակտերի մասին, որոնք սահմանում են թանկարժեք մետաղների ու թանկարժեք քարերի հետ գործունեության իրականացման կարգը, այդ թվում՝ թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի արտադրության, օգտագործման ու շրջանառության ոլորտում, և հարգադրոշմների նշանները, ինչպես նաև ապահովի հարգադրոշմների դրոշմվածքի նմուշների, դրանց նկարագրությունների, անվանանիշների ռեեստրների և այլ տեղեկությունների փոխանակումը Համաձայնագրի իրականացման շրջանակում (հոդված 12, կետեր 1 և 2),

4.24. ապահովել, որ նորմատիվ իրավական կարգավորման համար Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության տարածք տեղափոխված ոսկերչական և այլ իրերի վերաբերյալ արտադրական պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում ապահովի անդամ պետության նորմատիվ իրավական կարգավորման համար լիազոր մարմինին, որի տարածքից տեղափոխվել էին այդ ոսկերչական և այլ իրերը, բացահայտված խախտումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը (հոդված 12, կետ 3, պարբերություն 1),

4.25. ապահովել, որ նորմատիվ իրավական կարգավորման համար Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության տարածքից ոսկերչական և այլ իրերի տեղափոխման դեպքում ապահովի վերահսկողական միջոցառումների իրականացում այն անձանց նկատմամբ, որոնք նշված են բացահայտված խախտումների վերաբերյալ ներկայացված տեղեկատվության մեջ, և միջոցներ ձեռնարկի այդ խախտումների վերացման ուղղությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան (հոդված 12, կետ 3, պարբերություն 2),

4.26. ապահովել, որ նորմատիվ իրավական կարգավորման համար Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության տարածքում խախտումներ հայտնաբերվելու դեպքում վերահսկողական միջոցառումների շրջանակում ապահովի ոսկերչական իրերի նմուշառման և հետազոտման իրականացում՝ այն արտադրողների և (կամ) մատակարարների հետ, որոնց կողմից 1 տարվա ընթացքում գրանցվել են խախտումներ (հոդված 12, կետ 3, պարբերություն 3),

4.27. ապահովել, որ նորմատիվ իրավական կարգավորման համար Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության տարածքից ոսկերչական և այլ իրերի տեղափոխման դեպքում ապահովի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ձեռնարկված միջոցառումների մասին տեղեկության փոխանցումը այն անդամ պետության նորմատիվ իրավական կարգավորման համար լիազոր մարմինին, որի տարածքում հայտնաբերվել են խախտումները (հոդված 12, կետ 3, պարբերություն 4),

4.28. ապահովել, որ նորմատիվ իրավական կարգավորման համար Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության տարածքում թանկարժեք քարերի տեղափոխման և (կամ) իրացման ժամանակ խախտումների հայտնաբերման դեպքում իրականացնի միջոցառումներ այդ խախտումների վերացման ուղղությամբ և հայտնաբերված խախտումների և իրականացված միջոցառումների մասին տեղեկացնի այն անդամ պետության նորմատիվ իրավական կարգավորման համար լիազոր մարմինին, որի տարածքից փոխադրվել են թանկարժեք քարերը, որպեսզի բացահայտված խախտումների կանխարգելման համար միջոցներ ձեռնարկվեն այն անդամ պետության օրենսդրության համաձայն, որի տարածքից տեղափոխվել են թանկարժեք քարերը (հոդված 12, կետ 3, պարբերություն 5),

4.29. ապահովել, որ նորմատիվ իրավական կարգավորման համար Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինը ապահովի միջոցների իրականացում, որպեսզի պարզի ու վերացնի խախտումների պատճառներն ու դրանց նպաստող պայմանները (հոդված 12, կետ 3, պարբերություն 6),

4.30. ապահովել, որ նորմատիվ իրավական կարգավորման համար Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինը, առաջնորդվելով միջազգային պայմանագրերով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ձգտի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հակազդեցության հարցերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման անդամ պետությունների նորմատիվ իրավական կարգավորման համար լիազոր մարմինների հետ՝ հաշվի առնելով փողերի լվացման դեմ պայքարի ֆինանսական միջոցառումների մշակման խմբի հանձնարարականները (հոդված 12, կետ 3, պարբերություն 7),

4.31. Համաձայնագրին համապատասխան ստացված տեղեկությունն օգտագործել բացառապես Համաձայնագրի իրականացման նպատակներով (հոդված 12, կետ 3, պարբերություն 8),

4.32. Համաձայնագրի 11-րդ հոդվածի 1-3-րդ, 6-9-րդ, 11-րդ, 13-րդ և 14-րդ կետերը կիրառել Հանձնաժողովի Խորհրդի որոշման ուժի մեջ մտնելու օրվանից, որը կիրառվում է բոլոր անդամ պետությունների նկատմամբ Համաձայնագրի 13-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված սկզբնական տեսչական այցելությունների արդյունքով ստացված դրական եզրակացությունների հիման վրա (հոդված 14),

4.33. ապահովել, որ Համաձայնագրի 1-ին Հավելվածի Կարգով սահմանված չափանիշներին թանկարժեք քարերի թափոնների հատկանիշների համապատասխանեցման դասակարգումն իրականացվի այնպիսի չափման միջոցների և սարքավորումների կիրառմամբ, որոնք անցել են ստուգում և կալիբրացիա՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետության չափման միասնականության ապահովման մասին օրենսդրության պահանջներին համապատասխան (Հավելված 1, կետ 6, պարբերություն 2),

4.34. Համաձայնագրի դրույթների իրականացման նպատակներով ապահովել ոսկերչական և այլ իրերի արտադրության և շրջանառության ոլորտում հիմնական օրենքի առկայությունը, այլ նորմատիվ իրավական ակտերի առկայությունը ոսկերչական և այլ իրերի արտադրության, շրջանառության և օգտագործման ոլորտում, որոնք կարգավորում են նմուշառման, հետազոտման ու դրոշմման, ինչպես նաև ստուգումներ անցկացնելու հարցերը, ապահովել նորմատիվ իրավական ակտերի առկայությունը, որոնք նախատեսում են Հայաստանի Հանրապետության տարածք փոխադրված ոսկերչական և այլ իրերի նկատմամբ պարտադիր պահանջների խախտման համար վարչական և (կամ) այլ պատասխանատվության միջոցներ և ապահովել լիազոր մարմնի առկայությունը, որը պատասխանատու է ոսկերչական և այլ իրերի արտադրության, օգտագործման և շրջանառության պետական քաղաքականության իրականացման համար, և (կամ) այլ մարմինների (կազմակերպությունների) առկայությունը, որոնք լիազորված են դրա իրականացման համար անդամ պետության օրենսդրությանը համապատասխան (այսուհետ՝ լիազոր մարմին (կազմակերպություն) (Հավելված 3, կետ 1),

4.35. արգելել Հայաստանի Հանրապետության լիազոր մարմնի (կազմակերպության) և դրա աշխատողների կողմից ոսկերչական և այլ իրերի պատրաստման և (կամ) վաճառքի ձեռնարկատիրական

գործունեություն իրականացնելը, ինչպես նաև նրանց կողմից ոսկերչական և այլ իրերի պատրաստման և (կամ) վաճառքի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպություններ ստեղծելը կամ այդպիսի կազմակերպությունների մասնակիցներ դառնալը (Հավելված 3, կետ 2),

4.36. թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված ոսկերչական և այլ իրերի արտադրության և շրջանառության ոլորտում պետական հսկողությունը (վերահսկողությունը) իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ իրավաբանական անձանց և որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձանց (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր) ստուգումներ կազմակերպելու և անցկացնելու, խախտումների կանխարգելիչ միջոցառումներ և (կամ) վերացման մասով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված միջոցներ ձեռնարկելու, արտադրության ոլորտում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից իրենց գործունեության իրականացման ընթացքում պարտադիր պահանջների կատարման վերլուծության եղանակով (Հավելված 3, կետ 3),

4.37. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության լիազոր մարմնի (կազմակերպության) կողմից, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան, իրականացվեն Համաձայնագրի 3-րդ Հավելվածի 4-րդ կետով սահմանված գործառնությունները (Հավելված 3, կետ 4),

4.38. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինը (կազմակերպությունը) իրականացնի ոսկերչական և այլ իրերի նմուշառում, հետազոտում և դրոշմում՝ Համաձայնագրի 11-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերությունում նշված՝ ոսկերչական և այլ իրերի նմուշառման, հետազոտման և դրոշմման պահանջներին համապատասխան, ինչպես նաև իրականացնի Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ հարգորոշիչ դրոշմների և անվանումների դրոշմվածքի փորձաքննություն, ոսկերչական և այլ իրերի փորձաքննություն, ոսկերչական և այլ իրերի ստուգիչ հետազոտում և փորձաքննություն արբիտրաժային գործերի մասով և այլ միջոցառումներ (Հավելված 3, կետ 5),

4.39. ապահովել, որ բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ստուգում իրականացնելու համար նախատեսված հիմքերից, Համաձայնագրի 12-րդ հոդվածի համաձայն՝ ստուգումներ իրականացվեն այն ժամանակ, երբ Հա-

յաստանի Հանրապետության լիազոր մարմինը (կազմակերպությունը) դիմում է ստանում մյուս անդամ պետության լիազոր մարմինից (կազմակերպությունից) մյուս անդամ պետության տարածք փոխադրված ոսկերչական և այլ իրերի նկատմամբ պարտադիր պահանջների խախտումների փաստերի վերաբերյալ (Հավելված 3, կետ 6) :

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2019 թվականի նոյեմբերի 22-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հետ գործառնությունների իրականացման առանձնահատկությունների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

27 հոկտեմբերի 2020 թվականի
ՄԴՈ-1554



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ԱՇԽԱԲԱԴՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՀԵՏ ԶԿԱՊՎԱԾ
ՊԱՏԻԺՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՆԿԱԽ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

27 հոկտեմբերի 2020թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ արդարադատության նախարարի տեղակալ Զ. Գրիգորյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի հոկտեմբերի 11-ին Աշխաբադում ստորագրված «Ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարումը փոխանցելու մասին» Անկախ պետությունների համագործակցության մասնակից

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 3-4(99-100)2020

◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

պետությունների կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2020 թվականի մայիսի 21-ի N 789-Ա որոշմամբ 2019 թվականի հոկտեմբերի 11-ին Աշխաբադում ստորագրված «Ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարումը փոխանցելու մասին» Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի հունիսի 3-ին:

Գործի քննության առիթը Կառավարության 2020 թվականի հունիսի 3-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ կոնվենցիան և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. «Ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարումը փոխանցելու մասին» Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) ստորագրվել է 2019 թվականի հոկտեմբերի 11-ին Աշխաբադում՝ Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության (վերապահումով), Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և Ուզբեկստանի Հանրապետության միջև:

Կոնվենցիան պարունակում է վերապահում՝ արված Ղազախստանի Հանրապետության կողմից:

Կոնվենցիայի նպատակն է Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների ինքնիշխանությունը հարգելու և ներքին գործերին չմիջամտելու սկզբունքների հիման վրա միջազգային համագործակցության հետագա ամրապնդումը և քրեական արդարադատության բնագավառում փոխօգնության ընդլայնումը:

2. Կոնվենցիան կարգավորում է ԱՊՀ մասնակից պետությունների հարաբերությունները կապված պատիժ նշանակող պետության դատարանի կողմից նշանակված ազատությունից զրկելու

հետ չկապված պատիժների կատարման և (կամ) քրեաիրավական բնույթի միջոցների կիրառման հետ (հոդվ. 1, կետ 1): Կոնվենցիայի դրույթները կիրառվում են դատարանի այն որոշումների (դատավճիռների) նկատմամբ, որոնց հիման վրա նշանակվել են ազատությունից զրկելու հետ չկապված պատիժներ, և (կամ) կիրառվել են քրեաիրավական բնույթի միջոցներ, որոնք օրինական ուժի մեջ են մտել (հոդվ. 1, կետ 2):

3. Կոնվենցիան չի կիրառվում բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ նշանակելու մասին դատարանի որոշումների, ինչպես նաև այն դատավճիռների կատարման հետ կապված հարցերի նկատմամբ, որոնց համապատասխան՝ որպես պատիժ սահմանվել է տուգանք կամ գույքային բնույթի այլ պատիժ, ինչպես նաև բռնագրավում (հոդվ. 1, կետ 3):

4. Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, Կոնվենցիայով ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

ա) ապահովել, որ Կոնվենցիայի դրույթները կիրառվեն դատարանի այն որոշումների (դատավճիռների) նկատմամբ, որոնց հիման վրա նշանակվել են ազատությունից զրկելու հետ չկապված պատիժներ, և (կամ) կիրառվել են քրեաիրավական բնույթի միջոցներ, որոնք օրինական ուժի մեջ են մտել (հոդվ. 1, կետ 2),

բ) որպես պատիժը նշանակող պետություն՝ ցանկացած դատապարտյալի, որի նկատմամբ կարող է կիրառվել սույն Կոնվենցիան, իրազեկել Կոնվենցիայի բովանդակության, ինչպես նաև պատժի կատարումը փոխանցելու իրավական հետևանքների մասին (հոդվ. 3, կետ 1),

գ) ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը, որի հասցեով ստացվել է պատժի կատարումը փոխանցելու մասին միջնորդությունը, փոխանցման մասին միջնորդությամբ դիմած դատապարտյալին կամ նրա օրինական ներկայացուցչին գրավոր հայտնի ընդունված (պատժի կատարումը փոխանցելու մասին հարցմամբ դիմելու կամ մերժելու վերաբերյալ) որոշման մասին: Մերժելու վերաբերյալ որոշումը պետք է լինի հիմնավորված (հոդվ. 3, կետ 3),

դ) ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը դատապարտյալի կամ նրա օրինական ներկայացուցչի

միջնորդության հիման վրա պատժի կատարումը փոխանցելու մասին հարցմամբ դիմի մյուս Պայմանավորվող կողմի իրավասու մարմնին (հոդվ. 4, կետ 1),

ե) որպես պատիժը նշանակող պետություն՝ դատարանի կամ այլ իրավասու մարմնի կողմից պատժի կատարումը փոխանցելու վերաբերյալ համաձայնության (մերժման) մասին որոշում ընդունելու դեպքում ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը հնարավորինս սեղմ ժամկետում պատիժը կատարող պետության իրավասու մարմնին ծանուցի պատժի կատարումը փոխանցելու համաձայնության կամ մերժման մասին՝ Կոնվենցիային համապատասխան (հոդվ. 4, կետ 8),

զ) ապահովել, որ ազատությունից զրկելու հետ չկապված պատժի և (կամ) քրեաիրավական բնույթի միջոցի հետագա կատարումը, այդ թվում՝ քրեաիրավական բնույթի միջոցի փոփոխումը, պատժի փոխարինումը և պատժի կրումից ազատումը պատժի կատարումը փոխանցելուց հետո իրականացվի Հայաստանի Հանրապետության՝ որպես պատիժը կատարող պետության, օրենսդրությանը համապատասխան (հոդվ. 9, կետ 1),

է) ապահովել, որ Հայաստանի Հանրապետության դատարանի կողմից նշանակվող՝ ազատությունից զրկելու հետ չկապված պատիժը չլինի ավելի խիստ, քան սահմանված է պատիժը նշանակող պետության դատարանի որոշմամբ (դատավճռով), իսկ քրեաիրավական բնույթի միջոցը չվատթարացնի դատապարտյալի վիճակը (հոդվ. 9, կետ 3),

ը) ապահովել, որ ազատությունից զրկելու հետ չկապված պատժի և (կամ) քրեաիրավական բնույթի միջոցի այն մասը, որը կատարվել է պատիժը նշանակող պետության տարածքում, հաշվվի Հայաստանի Հանրապետության՝ որպես պատիժը կատարող պետության, դատարանի կողմից՝ ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ նշանակելիս և (կամ) քրեաիրավական բնույթի միջոց կիրառելիս (հոդվ. 9, կետ 4),

թ) որպես պատիժը կատարող պետություն՝ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի միջոցով, պատիժը նշանակող պետության իրավասու մարմնին ծանուցել ազատությունից զրկելու հետ չկապված պատիժը և (կամ) քրեաիրավական բնույթի միջոցը կատարելու նպատակով ընդունված՝ դատապարտյալի նկատմամբ ներման ակտ կամ համաներման ակտ կիրառելու վերաբերյալ դատարանի որոշման մասին (հոդվ. 11, կետ 1),

ժ) ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը պատիժը նշանակող պետության իրավասու մարմնի հարցման հիման վրա տեղեկացնի պատժի կատարումը փոխանցելուց հետո դատապարտյալի կողմից ազատությունից զրկելու հետ չկապված պատիժը կրելու և (կամ) քրեաիրավական բնույթի միջոցը կիրառելու ընթացքի մասին (հոդվ. 11, կետ 2) և այլն:

5. Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2019 թվականի հոկտեմբերի 11-ին Աշխաբադում ստորագրված «Ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարումը փոխանցելու մասին» Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

27 հոկտեմբերի 2020 թվականի
ՄԴՈ-1555



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿԱՍԸՆՏԻՐ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

27 հոկտեմբերի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տ. Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2006 թվականի դեկտեմբերի 13-ին ստորագրված «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի կամընտիր արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2020 թվականի հունիսի 11-ի N 938-Ս որոշմամբ 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ստորագրված «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի կամընտիր արձանագրությունում (այսուհետ՝ Արձանագրություն) ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի հունիսի 19-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2020 թվականի հունիսի 19-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով Արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան ընդունվել է 2006 թվականի դեկտեմբերի 13-ին՝ Նյու Յորքում, իսկ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2010 թվականի մայիսի 17-ին և ուժի մեջ է մտել 2010 թվականի հոկտեմբերի 22-ին:

2. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների (կից առարկությամբ)՝ Սահմանադրությանը համապատասխանությունը Սահմանադրական դատարանը հաստատել էր 2009 թվականի դեկտեմբերի 18-ի ՍԴՈ-846 որոշմամբ:

3. Սույն գործով քննության առարկա Արձանագրությունն ընդունվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի հետ համատեղ՝ 2006 թվականի դեկտեմբերի 13-ին՝ Նյու Յորքում: Հայաստանի Հանրապետությունն Արձանագրությունը ստորագրել է 2007 թվականի մարտի 30-ին:

4. Արձանագրությամբ սահմանվում են «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայով նախատեսված իրավունքների պաշտպանության մեխանիզմներ, որոնց շրջա-

նակներում Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

ա) ճանաչել Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի հանձնառությունը՝ ստանալ և քննարկել իր իրավասության շրջանակում գտնվող անհատների կամ անհատների խմբերի կողմից կամ անունից՝ Հայաստանի Հանրապետության կողմից «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի դրույթների խախտման գոհ լինելու մասին ներկայացվող հաղորդումները (հոդված 1, կետ 1),

բ) Արձանագրության 2-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի իրեն գաղտնի ներկայացված ցանկացած հաղորդմանը վեց ամսվա ընթացքում գրավոր բացատրություններ կամ պաշտոնական հայտարարություններ ներկայացնել Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե՝ պարզաբանելով հարցը և իրավական պաշտպանության այն միջոցը, եթե այդպիսին առկա է, որը կարող էր ձեռնարկվել Հայաստանի Հանրապետության կողմից (հոդված 3):

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությամբ նախատեսված պարտավորությունները, լինելով հաշմանդամություն ունեցող անձանց՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայով նախատեսված իրավունքները և հիմնական ազատություններն իրացնելուն ուղղված պաշտպանության մեխանիզմներ, լիովին համահունչ են Սահմանադրությանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ստորագրված «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի կամընտիր արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

27 հոկտեմբերի 2020 թվականի
ՍԴՈ-1556



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2011 թվականի Դեկտեմբերի 19-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ՝
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԸՆՏԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

27 հոկտեմբերի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ արդարադատության նախարարի տեղակալ Բ. Գրիգորյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի դեկտեմբերի 19-ին ստորագրված «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի՝ հաղորդագրություններ ներկայացնելու կարգի վերաբերյալ կամընտիր արձանագրությունում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 3-4(99-100)2020
65

Կառավարությունն իր՝ 2020 թվականի հուլիսի 23-ի N 1223-Ա որոշմամբ 2011 թվականի դեկտեմբերի 19-ին ստորագրված «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի հաղորդագրություններ ներկայացնելու կարգի վերաբերյալ կամրնտիր արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի հուլիսի 30-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2020 թվականի հուլիսի 30-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա)՝ հաղորդագրություններ ներկայացնելու կարգի վերաբերյալ կամրնտիր արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2011 թվականի դեկտեմբերի 19-ին՝ Նյու Յորքում՝ երեխաներին՝ իրենց իրավունքների խախտումների դեմ բողոքներ ներկայացնելու հնարավորություն տվող ազգային և տարածաշրջանային մեխանիզմներն ամրապնդելու և լրացնելու նպատակով:

2. Արձանագրությունը հնարավորություն է տալիս Երեխայի իրավունքների կոմիտեին (այսուհետ՝ Կոմիտե) իրականացնելու մի շարք գործառույթներ, որոնք ուղղված են ամրապնդելու և լրացնելու այդպիսի ազգային մեխանիզմները, ինչպես նաև առավել ընդլայնելու Կոնվենցիայի և համապատասխան դեպքերում դրա՝ «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին» և Կոնվենցիային կից՝ «Զինված հակամարտություններին երեխաների մասնակցության վերաբերյալ» կամրնտիր արձանագրությունների կիրարկումը:

3. Հայաստանի Հանրապետությունը Արձանագրությամբ ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

ա) ճանաչել Կոմիտեի Արձանագրությամբ նախատեսված իրավասությունը (հոդված 1, կետ 1),

բ) ձեռնարկել բոլոր պատշաճ քայլերը՝ ապահովելու համար, որ իր իրավագրության ներքո գտնվող ոչ մի անհատ Արձանագրության համաձայն ներկայացրած հաղորդագրությունների կամ Կոմիտեի հետ համագործակցության պատճառով չենթարկվի մարդու իրավունքների որևէ խախտման, վատ վերաբերմունքի կամ ահաբեկման (հոդված 4, կետ 1),

գ) ապահովել, որ որևէ անհատի կամ անհատների խմբի ինքնությունը հրապարակայնորեն չբացահայտվի՝ առանց նրանց հստակ արտահայտված համաձայնության (հոդված 4, կետ 2),

դ) գրավոր բացատրություններ կամ հայտարարություններ ներկայացնել Կոմիտե՝ պարզաբանելով հարցը և իրավական պաշտպանության այն միջոցը, եթե այդպիսին առկա է, որը Հայաստանի Հանրապետությունը կարող է տրամադրած լինել: Իր պատասխանը ներկայացնել հնարավորինս շուտ՝ վեց ամսվա ընթացքում (հոդված 8, կետ 2),

ե) պատշաճ ուշադրություն դարձնել Կոմիտեի տեսակետներին, ինչպես նաև, եթե այդպիսիք առկա են, առաջարկություններին, և Կոմիտե ներկայացնել գրավոր պատասխան, այդ թվում՝ տեղեկություններ, Կոմիտեի տեսակետների և առաջարկությունների լույսի ներքո ձեռնարկված և նախատեսված ցանկացած գործողության վերաբերյալ (հոդված 11, կետ 1),

զ) Արձանագրության 12-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն արված հայտարարությունն ի պահ հանձնել Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին, որը դրա պատճենները փոխանցում է մյուս Կողմ պետություններին (հոդված 12, կետ 4),

է) Կոմիտեի փոխանցած եզրակացությունները, մեկնաբանությունները և առաջարկություններն ստանալուց հետո հնարավորինս շուտ՝ վեց ամսվա ընթացքում, Կոմիտե ներկայացնել իր նկատառումները (հոդված 13, կետ 5),

ը) ստանձնել պատշաճ ու ակտիվ միջոցներով և՛ չափահասներին, և՛ երեխաներին, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցողներին, հավասարապես հասանելի ձևաչափերով լայնորեն հայտնի դարձնել և տարածել Արձանագրությունը և դյուրացնել մատչելիությունը Կոմիտեի տեսակետների և առաջարկությունների վերաբերյալ տեղեկություններին, մասնավորապես այն հարցերի վերաբերյալ, որոնցում ներգրավված է Հայաստանի Հանրապետությունը (հոդված 17):

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրության մեջ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված դրույթներին, ի թիվս այլնի՝ նպատակաուղղված են ամրապնդելու և լրացնելու երեխաների իրավունքների պաշտպանության ազգային և տարածաշրջանային կառուցակարգերը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2011 թվականի դեկտեմբերի 19-ին ստորագրված «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի՝ հաղորդագրություններ ներկայացնելու կարգի վերաբերյալ կամընտիր արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

27 հոկտեմբերի 2020 թվականի
ՍԴՈ-1557



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

6 նոյեմբերի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Կառավարության ներկայացուցիչ՝ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Հ. Վարդանյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի հունիսի 7-ին ստորագրված «Ռադիոակտիվ աղբյուրների տեղափոխման հարցերով Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների տեղեկատվական փոխգործակ-

3-4(99-100)2020
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦

ցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր 2020 թվականի հուլիսի 30-ի N 1248-Ս որոշմամբ 2016 թվականի հունիսի 7-ին ստորագրված «Ռադիոակտիվ աղբյուրների տեղափոխման հարցերով Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների տեղեկատվական փոխգործակցության մասին» համաձայնագրում (այսուհետ Համաձայնագիր) ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի օգոստոսի 7-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2020 թվականի օգոստոսի 7-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2016 թվականի հունիսի 7-ին Բիշկեկում:

2. Համաձայնագիրը բաղկացած է նախաբանից, 13 հոդվածներից և Հավելվածից:

3. Համաձայնագրի առարկան դրան մասնակից պետությունների միջև տեղեկատվական փոխգործակցության ապահովումն է մի պետության տարածքից մյուս պետության տարածք ռադիոակտիվ այն աղբյուրների տեղափոխման դեպքում, որոնք ունեն Համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող հավելվածի շեմային արժեքների 1-ին և 2-րդ դասերին հավասար կամ գերազանցող ռադիոնուկլիդային ակտիվություն (հոդված 1, մաս 1):

4. Համաձայնագիրը մասնակից պետությունների կողմից, ի թիվս այլ նկատառումների, կնքվել է.

ա) ղեկավարվելով միջուկային և ճառագայթային անվտանգության բնագավառում միջազգային պայմանագրերով և հաշվի առնելով 2014 թվականի նոյեմբերի 21-ի՝ «ԱՊՀ անդամ երկրների խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում միջուկային և ճառագայթային անվտանգության» հայեցակարգը,

բ) ռադիոակտիվ աղբյուրների հետ կապված հնարավոր վթարների և կանխամտածված անօրինական գործողությունների հետևանքներից բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանության նպատակով,

գ) ելնելով Համաձայնագրի կողմ պետությունների՝ սեփական անվտանգության ապահովման և ազգային շահերի պաշտպանությունից, ներառյալ ահաբեկչությանը և ռադիոակտիվ աղբյուրների ապօրինի շրջանառությանը հակազդման անհրաժեշտությունից:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

ա) աջակցել Համաձայնագրի կողմ պետությանը ռադիոակտիվ աղբյուրների փոխադրման կարգի խախտումների հայտնաբերման և կանխման հարցում (հոդված 1, մաս 3),

բ) կազմակերպել ռադիոակտիվ աղբյուրների դասակարգման ընթացակարգի ներդրումը համաձայն ԱԷՄԳ-ի կողմից առաջարկվող ռադիոակտիվ աղբյուրների դասակարգման (հոդված 1, մաս 4),

գ) ապահովել 1-ին և 2-րդ դասի ռադիոակտիվ աղբյուրների հաշվառման համակարգի ներդրումը, որը կապահովի դրանց անվտանգ օգտագործումն ու պահպանումը, կորստի, գողության կամ չթույլատրված օգտագործման կանխարգելումը (հոդված 1, մաս 5),

դ) տեղեկություն տրամադրող կողմի օրենսդրությամբ սահմանափակ համարվող տեղեկությունը չտարածել և չտրամադրել երրորդ կողմի՝ առանց այդ տեղեկությունը տրամադրող Կողմի լիազորված (իրավասու) մարմնի գրավոր համաձայնության (հոդված 3, մասեր 3-4),

ե) ապահովել, որ Հայաստանի Հանրապետության լիազորված (իրավասու) մարմինը մշակի ռադիոակտիվ աղբյուրների փոխադրման մասին տեղեկատվության միասնական կարգ և փոխանակման ձևեր, ինչպես նաև ապահովել, որ Հայաստանի Հանրապետության լիազորված (իրավասու) մարմինն ինքնուրույն հոգա Համաձայնագրով իր պարտավորությունների կատարման հետ կապված ծախսերը (հոդված 4),

զ) ապահովել լիազորված (իրավասու) մարմնի արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների կողմից Հայաստանի Հանրապետությունում սահմանված 1-ին և 2-րդ դասի ռադիոակտիվ աղբյուրների նախատեսվող փոխադրման վերաբերյալ նախնական ծանուցման ընթացակարգերը, ներառյալ Համաձայնագրի որևէ կողմի ավելի վաղ փոխանցված տեղեկատվության ուղղումները (հոդված 5),

Է) Հայաստանի Հանրապետությունում սահմանել կարգ, որով 1-ին և 2-րդ դասի ռադիոակտիվ աղբյուրների փոխադրումն իրականացվում է միայն Համաձայնագրի մասնակից ընդունող կողմի լիազորված (իրավասու) մարմնի հաստատումն ստանալուց հետո այն մասին, որ ընդունող այդ կողմն ունի ռադիոակտիվ աղբյուրների ստացման և տիրապետման թույլտվություն (հոդված 6),

ը) տեղեկատվական փոխգործակցության ընթացքում Հայաստանի Հանրապետության լիազորված (իրավասու) մարմնի կողմից ապահովել տեղեկատվական փոխգործակցության վրա ազդող ծրագրային և տեխնիկական լուծումների մասին կանոնավոր փոխադարձ ծանուցումը, փոխանցվող տեղեկության հուսալիությունը և ամբողջականությունը, նախապես փոխանցված տեղեկության մեջ օպերատիվ կերպով ուղղումներ կատարելը, չկանխատեսված հանգամանքների առաջացման դեպքում տեղեկության փոխանցման կամ ընդունման (պաշտոնական հարցումների) անհնարինության մասին ժամանակին նախազգուշացնելը, ստացված տեղեկության օգտագործումը բացառապես Համաձայնագրի նպատակներով, փոխանակման արդյունքում ստացվող, տարածման և (կամ) տրամադրման համար սահմանափակ տեղեկատվության նկատմամբ հասանելիություն ունեցող անձանց շրջանակի սահմանափակումը, իսկ գաղտնի տվյալների փոխանցման դեպքում՝ ստացված տեղեկատվության պաշտպանության ապահովման ծրագրային և տեխնիկական միջոցների օգտագործումը Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան (հոդված 8):

6. Համաձայնագրով նախատեսված է, որ Համաձայնագրի կողմ պետության լիազորված (իրավասու) մարմինների համաձայնեցմամբ Համաձայնագրի որոշ դրույթներ կարող են կիրառվել ռադիոակտիվ աղբյուրների այլ կատեգորիաների նկատմամբ (հոդված 1, մաս 2):

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագրի կողմ պետության լիազորված (իրավասու) մարմնի այսպիսի լիազորությունը Հայաստանի Հանրապետության կողմից լիազորված (իրավասու) մարմնի հայեցողության շրջանակին վերաբերելի մասով, չի կարող ներառել Համաձայնագրով չնախատեսված ռադիոակտիվ աղբյուրների այնպիսի կատեգորիաներ, որոնք էականորեն տարբերվում են Համաձայնագրով նախատեսվածներից:

7. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Համաձայնագրով նախատեսված է՝ Համաձայնագրով ստանձնված պարտավորությունների կատարման իմաստով լիազորված (իրավասու) մարմնի

գործառույթները կարող են իրականացվել նախարարության, գերատեսչության, պետական կորպորացիայի կամ այլ կազմակերպության կողմից (հոդված 2, մաս 2):

Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ այնքանով, որքանով Համաձայնագրի շրջանակում նման գործառույթը վերաբերելի է Հայաստանի Հանրապետության որևէ իրավասու կամ լիազոր մարմնի, ապա նման պետական մարմնի լիազորումը պետք է համապատասխանի Սահմանադրության 2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջին:

8. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ Համաձայնագրի և դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից բխում է, որ Համաձայնագրի 3-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված «երրորդ կողմ» հասկացությունը ներառում է ինչպես Համաձայնագրի կողմ չհանդիսացող, այնպես էլ Համաձայնագրի կողմ հանդիսացող ցանկացած այլ պետություն, որը չի հանդիսանում Համաձայնագրի շրջանակներում տեղեկատվություն ստացող պետությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Թ**:

1. 2016 թվականի հունիսի 7-ին ստորագրված «Ռադիոակտիվ աղբյուրների տեղափոխման հարցերով Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների տեղեկատվական փոխգործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

6 նոյեմբերի 2020 թվականի
ՍԴՈ-1558



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԱՆԴՐԱՆԻԿ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 385-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 397-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ԵՎ 414²-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

17 նոյեմբերի 2020թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
դիմողի ներկայացուցիչներ՝ Ա. Զեյնալյանի, Ա. Ղազարյանի,
գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի,
համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 40 և 69-րդ հոդվածների,
դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Անդրանիկ Գալստյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի, 397-րդ հոդվածի 2-րդ և 414²-րդ հոդվածի 1-ին մասերի՝ Սահմանադրությանը համապա-

3-4(99-100)/2020

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦

տասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի «Վերաքննիչ դատարանում գործի քննության սահմանները» վերտառությամբ 385-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում»:

Օրենսգրքի վիճարկվող դրույթը նշված խմբագրությամբ շարադրվել է 28.11.07 ՀՕ-270-Ն ՀՀ օրենքով:

Օրենսգրքի «Քրեական օրենքի կամ միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառումը» վերտառությամբ 397-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«2. Գործի քննության արդյունքում գտնելով, որ արարքն իրավաբանորեն ճիշտ որակված չէ, վերաքննիչ դատարանն իրավունք ունի փոխել հանցագործության որակումը քրեական օրենքի այն հոդվածով, որը պատասխանատվություն է նախատեսում ավելի թեթև հանցագործության համար»:

Ընդունման պահից ի վեր Օրենսգրքի 397-րդ հոդվածի 2-րդ մասը չի փոփոխվել:

Օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը» վերտառությամբ 414²-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 1-ին մասը սահմանում է.

«1. Վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար.

2) առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում»:

Օրենսգրքի վերոնշյալ դրույթը նշված խմբագրությամբ շարադրվել է 23.03.18 ՀՕ-211-Ն ՀՀ օրենքով:

Ընդունման պահից ի վեր Օրենսգրքի 414²-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է 07.07.06 ՀՕ-152-Ն, խմբագրվել է 28.11.07 ՀՕ-270-Ն, լրացվել, խմբագրվել և փոփոխվել է 26.12.08 ՀՕ-237-Ն, խմբագրվել է 10.06.14 ՀՕ-48-Ն և 23.03.18 ՀՕ-211-Ն օրենքներով:

Գործի քննության առիթը Անդրանիկ Գալստյանի՝ 2020 թվականի մայիսի 18-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև Օրենսգրքի վերաբերելի դրույթները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Գործի դատավարական նախապատմությունը

Գործով դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

դիմողը 31.01.2017թ. №12141416 քրեական գործով ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը դիմողի նկատմամբ 20.07.2018թ. կայացրել է արդարացման դատավճիռ:

Տուժողի ներկայացուցիչները նշված դատավճիռի դեմ երկու առանձին վերաքննիչ բողոքներ են ներկայացրել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան (այսուհետ՝ վերաքննիչ դատարան), որոնցով պահանջել են՝ բեկանել կայացված դատավճիռն ամբողջությամբ, փոփոխել այն և մեղավոր ճանաչել դիմողին՝ ենթարկելով նրան քրեական պատասխանատվության, ինչպես նաև բավարարել տուժողի կողմից ներկայացված քաղաքացիական հայցը և դիմողից բռնագանձել որոշակի գումար՝ որպես հանցագործությամբ պատճառված վնաս:

ՀՀ գլխավոր դատախազությունը 01.09.2018թ. նույնպես վերաքննիչ բողոք է ներկայացրել պահանջելով բեկանել և փոփոխել կայացված արդարացման դատավճիռը, դիմողին մեղավոր ճանաչել և նշանակել պատիժ տուգանքի տեսքով:

ՀՀ վերաքննիչ դատարանը 08.10.2018թ. կայացրել է «Վերաքննիչ բողոքները դատարանի վարույթ ընդունելու և քրեական գործը վերաքննիչ դատարանի դատական նիստում քննության նշանակելու մասին» որոշում, որով նաև որոշվել է՝ «...**Վերաքննիչ դատարանում սույն քրեական գործի քննությունը կատարել վճռաբեկ դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով**»:

Վերաքննիչ դատարանը 27.05.2019թ. կայացրել է որոշում, որով երեք վերաքննիչ բողոքները բավարարվել են մասնակի. դիմողի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի

1-ին կետով Երևանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 20.07.2018թ. դատավճիռը բեկանվել է և փոփոխվել, իսկ դիմողը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով ազատվել է նշված հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից:

Ինչպես դիմողի պաշտպանը, այնպես էլ տուժողի ներկայացուցիչը վերաքննիչ դատարանի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ դատարանը 15.11.2019թ. կայացրել է «Վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշում, որով մերժել է վարույթ ընդունել դիմողի և տուժողի վճռաբեկ բողոքները:

2. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը պնդում է, որ Օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասը և 397-րդ հոդվածի 2-րդ մասը հակասում են Սահմանադրության 3, 4, 61 և 63, 66, 67, 69, 164 ու 75, 79, 80, 81-րդ հոդվածներին:

Եվ/կամ

414²-րդ հոդվածի 1-ին մասը հակասում է Սահմանադրության 3, 61 և 63, 69, 75, 79, 80-րդ հոդվածներին այնքանով, որքանով չի սահմանում վերաքննիչ դատարանի կողմից ամբաստանյալին մեղսագրված արարքը վերաորակող դատական ակտի դեմ բերված բողոքները վարույթ ընդունելու իրավադրույթ:

Դիմողն ընդգծում է, որ վիճարկում է Օրենսգրքի դրույթները «Սահմանադրական դատարանի մասին» 01.06.2006թ. ՀՕ-58-Ն ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ ենթակետի չափանիշով. Մարդու և քաղաքացու Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման և պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը:

Սահմանադրաիրավական վեճի առարկա՝ Օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին և 397-րդ հոդվածի 2-րդ մասերում ամրագրված դրույթները դիմողի կարծիքով **վերաքննիչ դատարանին լիազորում են սեփական նախաձեռնությամբ առանց նման պահանջի առկայության վերաորակել արարքը, փոփոխել առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատավճիռը:** Ըստ դիմողի՝ նշված իրավադրույթները դրսևորվում են հետևյալ կերպ՝ **գործով կողմերը, դատավարության մասնակիցները, հանրությունը փոփոխված մեղադրանքի, մեղսագրված այլ արարքի, դրանով դատապարտված լինելու**

մասին տեղեկանում են վերաքննիչ դատարանի կայացրած, հրապարակած դատական ակտի տեքստից:

Դիմողը, վերլուծելով ՄԻԵԴ-ի մի շարք իրավական դիրքորոշումներ, հետևության է եկել, որ դատաքննության ընթացքում անձի արարքին տրված իրավական որակումը փոխելը և այդ մասին վերջինիս պատշաճ տեղեկացնելը հանդիսանում են արդար դատաքննության իրավունքի բովանդակության մաս կազմող առաջադրված մեղադրանքի դեմ պաշտպանվելու իրավունքի բաղադրատարրեր: Հետևաբար, **մեղսագրված արարքի և/կամ փաստական հիմքերի մասին հրապարակված դատական ակտից տեղեկանալու կարգը հակասում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներին:**

Դիմողը համոզված է, որ գործող Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների, սկզբունքների համատեքստում վերաքննության մոդելի պայմաններում, վերաքննիչ դատարանը չպետք է իրավասու լինի դուրս գալ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից և սեփական նախաձեռնությամբ ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը վերաորակի, այլապես կստացվի, որ վերաքննիչ ատյանը պարզապես կրկնում է առաջին ատյանի դատարանի գործառույթները, ինչը խնդրահարույց է անձի պաշտպանության իրավունքի տեսակետից:

Դիմողը պնդում է, որ սահմանադրաիրավական վեճի առարկա՝ Օրենսգրքի համապատասխան հոդվածների դրույթների իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ բազմաթիվ են դեպքեր, երբ **վերաքննիչ դատարանը**, որոշ դեպքերում նաև **առաջին ատյանի դատարանները**, դատավարության կողմերի պահանջի բացակայության պայմաններում **սեփական նախաձեռնությամբ, հղում կատարելով խնդրո առարկա դրույթների վրա, մեջբերելով դրանք, վերաորակել են ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքներն Օրենսգրքի այլ հոդվածով (ներով) նախատեսված արարքների:** Ընդ որում՝ նշված ուսումնասիրությունը կատարվել է ՄԴՈ-710 և ՄԴՈ-872 որոշումներից հետո կայացված դատական ակտերի մեջ:

Դիմողը նշում է, որ ՄԴՈ-710 և ՄԴՈ-872 որոշումներում Սահմանադրական դատարանը հետևողականորեն մատնացույց է արել դատարանների մեղադրական թեքումից ձերբազատվելու անհրաժեշտությունը, ինչն առավել համահունչ կլիներ 2005 թվականի

փոփոխություններով Սահմանադրության ոգուն: Իսկ 2015 թվականի սահմանադրական փոփոխություններն արդար դատաքննության, դատարանի անկողմնակալության, իշխանությունների տարանջատման ավելի խիստ երաշխիքներ են սահմանել, այնինչ Օրենսգիրքը չի համապատասխանեցվել նոր չափանիշներին:

Ըստ դիմողի՝ Օրենսգրքի ներկայիս խմբագրությամբ 385-րդ հոդվածը սկզբունքային, տրամագծային փոփոխության է ենթարկվել 18.12.2007թ. ՀՕ-270-Ն օրենքով, իսկ մինչ այդ Վերաքննիչ դատարանը կաշկանդված չէր վերաքննիչ բողոքով և գործում եղած, ինչպես նաև լրացուցիչ ներկայացվող ապացույցներով կարող էր գործը քննել լրիվ ծավալով: Իր կարծիքով՝ հանցագործության որակումը փոխելու լիազորությունը գործադիր իշխանությանը ներհատուկ գործառույթ է, և Օրենսգիրքը, «արդարադատության գործառույթի հետ անհամատեղելի» լիազորություն վերապահելով, խախտել է Սահմանադրության 4-րդ հոդվածով հռչակված իշխանությունների բաժանման սկզբունքը:

Դիմողի համոզմամբ քննության առարկա Օրենսգրքի դրույթները վերաքննիչ դատարանին լիազորում են սեփական նախաձեռնությամբ առանց նման պահանջի առկայության, վերաորակել արարքը, փոփոխել առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատավճիռն՝ առանց անձին պատշաճ ծանուցելու երաշխիքի, նաև առանց վերադաս դատարանում վերանայման իրական հնարավորության:

Բացի դրանից, Օրենսգրքի 414²-րդ հոդվածով սահմանված՝ Վճռաբեկ դատարանին տրված բողոքը վարույթ ընդունելու լիազորության շրջանակում բողոքը վարույթ ընդունելու պարտադիր հիմքեր չնախատեսելու իրավական բացի սահմանադրականության հարց է առկա:

Ըստ դիմողի՝ Օրենսգրքում մեղադրանքի փոփոխության և արարքի իրավական որակման վերաորակման ներկայիս իրավակարգավորումների պարագայում, եթե Սահմանադրական դատարանը դրանք Սահմանադրությանը հակասող և անվավեր չճանաչի, երբ վերաքննիչ դատարանն իրավասու է արարքի իրավական վերաորակում անել գործով որոշման հրապարակման ժամանակ այդպիսով անձին գրկելով մեղադրանքի դեմ արդյունավետ պաշտպանության իրավունքից, առկա է իրավական բաց Վճռաբեկ դատարանի կողմից նման պարագայում բողոքը վարույթ ընդունելու պարտադիր կարգավորման բացակայության մասով:

3. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը, անդրադառնալով վերաքննիչ դատարանի կողմից մեղադրանքի փոփոխության քրեադատավարական ընթացակարգին, պնդում է, որ օրենսդրի կողմից որդեգրված մոտեցմամբ այն կարող է իրականացվել բացառապես Օրենսգրքով ամրագրված իրավական երաշխիքների առկայության պայմաններում՝ առանց վատթարացնելու անձի իրավիճակը: Նշված կարգավորումը ելնում է քրեադատավարական այն հիմնարար դրույթից, ըստ որի՝ քրեական հետապնդման մարմինները և դատարանը պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցները գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն կատարելու համար: Հենց այդ գաղափարի հիման վրա է Օրենսգրքում սահմանված, որ **դատարանը կաշկանդված չէ կողմերի կարծիքներով և իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել քրեական գործով ճշմարտությունը բացահայտելու համար (Օրենսգրքի 23-րդ հոդվածի 4-րդ մաս):**

Պատասխանողը գտնում է, որ դատարանի, այդ թվում՝ նաև վերաքննիչ դատարանի կողմից անձին մեղսագրվող արարքի քրեաիրավական որակման փոփոխությունը օրենսդրությամբ սահմանված երաշխիքների պահպանման պայմաններում բխում է Օրենսգրքով սահմանված՝ գործի արդարացի քննության սկզբունքի էությունից:

Ըստ պատասխանողի՝ նույնիսկ վերաքննիչ դատարանի կողմից վերաքննության կարգով գործերի քննության իրականացման մոդելի փոփոխությունը ևս չի կարող հանգեցնել նշված կառուցակարգից հրաժարվելուն: Ավելին, հաշվի առնելով, որ դիմողը բարձրացնում է նաև վերաքննության մոդելի փոփոխության և այդ պայմաններում՝ վերաքննիչ դատարանի կողմից անձին մեղսագրվող արարքի քրեաիրավական որակման փոփոխության հարցերը, հարկ է համարում նկատել, որ նոր մոդելի պայմաններում, երբ 2007 թվականին անցում կատարվեց **լրիվ վերաքննությունից սահմանափակ վերաքննության, վերջինս չզրկեց վերաքննիչ դատարանին անձին մեղսագրվող արարքը վերաորակելու լիազորությունից:** Մասնավորապես, նշված փոփոխությունը պայմանավորված էր վերաքննիչ դատարանի ռեսուրսների խնայողության ապահովման անհրաժեշտությամբ, առաջին աստիճանի դատարանի կողմից գործը լրիվ ծավալով քննության առնելուց հետո վերաքննիչ դատարանի կողմից այն կրկին լրիվ ծավալով քննության չառնելու մոտեցումից հրաժարվելու անհրաժեշտությամբ: Մակայն, **նշվածն անհամատեղելի չի**

դարձրել վերաքննիչ դատարանի կողմից Օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմանափակ վերաքննության արդյունքում անձին տրված արարքի քրեաիրավական որակման փոփոխության ընթացակարգի կիրառելիությունը:

Չհամաձայնելով դիմողի կողմից բերված փաստարկներին՝ պատասխանողը նշում է, որ վիճարկվող նորմի պարագայում անձին մեղսագրվող արարքի վերաորակումն իրականացվում է վերաքննիչ դատարանի կողմից, և այդ կապակցությամբ առերևույթ դատական սխալի, իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում թույլ տրված լինելու պայմաններում վերաքննիչ դատարանի դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք ներկայացնելու դեպքում այն ենթակա է վարույթ ընդունման և քննության Վճռաբեկ դատարանի կողմից՝ հիմք ընդունելով Օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 414²-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը:

Ըստ պատասխանողի՝ ընդհանուր առմամբ դատական գործերով իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Վճռաբեկ դատարանն անձին մեղսագրվող արարքի վերաորակման անհրաժեշտության մասին եզրահանգման գալիս, որպես կանոն, ոչ թե տեղում կայացնում է վերջնական որոշում, այլ բեկանում է ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկում նոր քննության:

Վերաքննիչ դատարանի կողմից խորհրդակցական սենյակում անձին տրված արարքի վերաորակում իրականացնելու անհրաժեշտության մասին եզրահանգման գալիս **վերաքննիչ դատարանն անձին իր արարքի վերաորակման մասին իրազեկումն ապահովելու համար չի կարող վերադառնալ խորհրդակցական սենյակից և կողմերին հայտնել մեկ այլ մեղադրանքով գործի քննությունը շարունակելու հնարավորության մասին, քանի որ դատարանի վերաբերմունքն անձին մեղսագրվող արարքի վերաբերյալ կդառնա ակնհայտ, և առերևույթ կխախտվի անձի անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր գործի քննության իրավունքը:** Հենց այդ հանգամանքով է պայմանավորված նաև այն, որ օրենսդիրն ընդունելի է համարում օրենքով սահմանված իրավական երաշխիքների պահպանմամբ, այսինքն՝ առանց անձի իրավական վիճակը վատթարացնելու՝ առանց մեղսագրված արարքն ավելի ծանրով փոխարինելու հնարավորության, խորհրդակցական սենյակում դատարանի կողմից անձին մեղսագրվող արարքի քրեաիրավական որակման

փոփոխությունը: Ընդ որում՝ պատասխանողի պնդմամբ՝ գործող Օրենսգրքում նախատեսված են նաև այլ կարգավորումներ, որոնք հնարավորություն են տալիս իրավական երաշխիքների ապահովմամբ՝ առանց անձի վիճակը վատթարացնելու, խորհրդակցական սենյակում կայացնել այլ որոշում, որը թեև հիմնված է գործում առկա և դատական քննության ընթացքում հետազոտված փաստերի վրա, սակայն հնարավոր է, որ կողմը դատական քննության ընթացքում այդ կապակցությամբ առարկություններ ներկայացրած չլինի:

Պատասխանողը նշում է նաև, որ գործող Օրենսգրքով սահմանված իրավական երաշխիքների պայմաններում **անձին մեղսագրվող արարքի իրավական որակման փոփոխությունն ամբողջությամբ անկանխատեսելի լինել չի կարող մասնավորապես հիմնված լինելով անձին մեղսագրվող արարքի փաստական հանգամանքների վրա:**

Պատասխանողը, անդրադառնալով դիմողի կողմից բարձրացված Վճռաբեկ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու հիմքի իրավական բացի սահմանադրականության հարցին, նշում է հետևյալը.

Եթե նախքան 2006 թվականի հուլիսի 7-ի օրենքով Օրենսգրքում կատարված փոփոխությունները գործում էր վճռաբեկ բողոքարկման ազատության սկզբունքը, և օրենքով նախատեսված ձևական պահանջները բավարարող բողոքն անվերապահորեն ընդունվում էր վարույթ և դառնում Վճռաբեկ դատարանի քննարկման առարկա, ապա նշված օրենքով **ներդրվեց դատական ակտերի բողոքարկման թույլատրական կարգ, որի համաձայն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համար այն պետք է համապատասխանի որոշակի բովանդակային չափանիշների:** Նշված փոփոխությունը պայմանավորված էր նրանով, որ դատական իշխանության բարձրագույն մարմնի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման (իրավունքի զարգացում) գործառույթի իրականացումը պահանջում է վերջինիս ծանրաբեռնվածության նվազեցման համապատասխան մեխանիզմների մշակում, այդ թվում՝ բողոքը վարույթ ընդունելու և, ըստ այդմ՝ դատական ակտը վերանայելու հայեցողական լիազորությունների նախատեսում:

Ըստ պատասխանողի՝ նմանօրինակ մեխանիզմների ներմուծումը տարածված պրակտիկա է, գործող սահմանադրական կարգավորումը հավասարակշռված է, և կարգավորմանը համահունչ գործող Օրենսգրքը սահմանում է բողոքը վարույթ ընդունելու հայեցողական կարգ թույլ տալով Վճռաբեկ դատարանին արձա-

զանքել օրենքի միատեսակ կիրառության ապահովման և հիմնարար խախտումների վերացման անհրաժեշտության մասին վկայող դեպքերին:

Վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթները կարող են արդյունավետ իրականացվել միայն որակյալ նախադեպեր ստեղծելու ճանապարհով, ինչն իր հերթին պահանջում է մարդկային և նյութական ռեսուրսները կենտրոնացնել սահմանափակ թվով գործերի վրա: Այս համատեքստում պետք է հաշվի առնել այն, որ **դատական ակտերի վերանայման գործառույթը կենտրոնացված է վերաքննիչ դատարանում, իսկ Վճռաբեկ դատարանն օժտված է իրավունքի զարգացման, օրենքի միատեսակ կիրառության ապահովման և հիմնարար դատական սխալներն ուղղելու գործառույթով:**

Պատասխանողը նշում է, որ Վճռաբեկ դատարանի սահմանադրական առաքելությունը ենթադրում է Վճռաբեկ դատարանի կողմից բողոքի ընդունելիության օրենսդրական այնպիսի պահանջների առկայություն և գործնականում դրանց այնպիսի մեկնաբանությունը, որը կբացառի Վճռաբեկ դատարանին իր կարգավիճակից չբխող գործերով ծանրաբեռնելու վտանգը, և դիմողի կողմից առաջ քաշվող այն պնդումը, որ վերաքննիչ դատարանի կողմից անձին մեղսագրվող արարքի վերաորակման դեպքում պետք է ապահովվի վճռաբեկ բողոքի պարտադիր վարույթ ընդունումն ու քննությունը, համահունչ չէ Վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակին և վճռաբեկության գործառութային դերին և նշանակությանը:

Պատասխանողը ընդգծում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծելիս Վճռաբեկ դատարանն իրականացնում է բողոքի նախնական քննությունը, և եթե դատարանի համոզմամբ վերաքննիչ դատարանն անձի արարքի վերաորակում իրականացնելիս թույլ տված լինի առերևույթ դատական սխալ, ապա օրենքի ուժով (ex lege) Վճռաբեկ դատարանը բողոքը վարույթ կընդունի: Նման պայմաններում, գործող օրենսդրությամբ սահմանված կարգավորումներով փարատված են դիմողի կողմից բարձրացված մտահոգությունները: Հակառակ պարագայում, կստացվի այնպիսի անտրամաբանական վիճակ, երբ առերևույթ դատական սխալի բացակայության պայմաններում վճռաբեկ բողոքը պարտադիր վարույթ ընդունելը և արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտն անփոփոխ թողնելը վճռաբեկ վերանայումն ըստ էության կդարձնի ինքնանպատակ և կհանգեցնի ձևական արդարադատության իրականացմանը:

Պատասխանողը գտնում է, որ Օրենսգրքի վիճարկվող 385-րդ հոդվածի 1-ին, 397-րդ հոդվածի 2-րդ և 414²-րդ հոդվածի 1-ին մասերը համապատասխանում են Սահմանադրությանը:

4. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Դիմողը, ըստ էության, բարձրացնում է երկու հարց, որոնք վերաբերում են.

ա) վերաքննիչ դատարանի կողմից դատական քննության ընթացքում, այդ թվում՝ իր նախաձեռնությամբ, մեղադրանքի փոփոխության և արարքի վերաորակման, վերաքննիչ դատարանում գործի քննության սահմանների իրավակարգավորումների սահմանադրականությանը, և

բ) Վճռաբեկ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու հիմքի իրավական բացի սահմանադրականությանն այն առումով, որ առկա չէ վերաքննիչ դատարանի կողմից ամբաստանյալին մեղսագրված արարքը վերաորակող դատական ակտի դեմ բերված բողոքները վարույթ ընդունելու իրավական հնարավորություն:

Ուստի, սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանը անհրաժեշտ է համարում պարզել՝ արդյո՞ք վիճարկվող դրույթներով ամրագրված իրավակարգավորումների պայմաններում ապահովվում են դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները: Մասնավորապես՝ ապահովվու՞մ է արդյո՞ք մեղադրանքից պաշտպանվելու սահմանադրական իրավունքն այն դեպքում, երբ վերաքննիչ ատյանին հնարավորություն է տրվում փոխել հանցագործության որակումը, և առկա է արդյո՞ք օրենսդրական բաց՝ Օրենսգրքի 414²-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված իրավակարգավորումների մասով պայմանավորված այն իրողությամբ, որ առկա չէ վերաքննիչ դատարանի կողմից հանցագործության որակումը փոխելու վերաբերյալ կայացված դատական ակտի դեմ բերված բողոքները վարույթ ընդունելու իրավական հնարավորություն:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության, ինչպես նաև անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (**այսուհետ՝ Կոնվենցիա**) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները ենթադրում են անկախ և անաչառ դատարանի առկայություն, գործի արդարացի քննությունը ենթադրում է հավասարության և մրցակցության պայմանների ապահովում դատական քննության ընթացքում, իսկ նշյալ սկզբունքների անտեսումը խոչընդոտում է դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների, ինչպես նաև այդ իրավունքների միջոցով սահմանադրական մյուս իրավունքների արդյունավետ պաշտպանության հնարավորությունը:

Անդրադառնալով դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների բովանդակության բացահայտմանը՝ Սահմանադրական դատարանն արտահայտել է մի շարք իրավական դիրքորոշումներ, որոնք, մասնավորապես, հանգում են հետևյալին.

«Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից:

Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով» (ՄԴՈ-719),

«Չնայած նրան, որ դատաքննության հավասարության և մրցակցության սկզբունքները հստակ ամրագրված չեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից՝ 6-րդ հոդվածում նշված «արդարացի լուսմներ» հասկացության մեկնաբանությունների արդյունքում ձևավորվել է հստակ նախադեպ, համաձայն որի՝ լուսմների արդարացիության տարրերից են դատավարության կողմերի հավասարությունը և մրցակցային դատավարությունը, որոնք սերտորեն կապված են միմյանց հետ: Եվրոպական դատարանը, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջը համարելով դատավարության մրցակցության և հավասարության սկզբունքներ, միաժամանակ հետևողականորեն իր վճիռներում բացահայտել է այդ սկզբունքների բովանդակությունը, որոնց համաձայն՝ «կողմերի հավասարությունը» նշանակում է, որ դատավարության յուրաքանչյուր կողմին պետք է ընձեռվի պատշաճ հնարավորություն ներկայացնելու իր գործը, ներառյալ՝ ապացույցները, այնպիսի պայմաններում, որոնք նրա համար մյուս կողմի համեմատությամբ չեն ստեղծի անբարենպաստ վիճակ» (ՄԴՈ-710),

«Մրցակցային դատավարությունում մեղադրանքի, պաշտպանության և գործի լուծման գործառույթների տարանջատման պայմաններում դատարանը՝ որպես գործի լուծման գործառույթը կրող սուբյեկտ, գործը քննում է ըստ ներկայացված մեղադրանքի և իրավասու չէ դուրս գալու մեղադրանքի շրջանակներից» (ՄԴՈ-931),

«Քրեական դատավարությունում դատարանին պատկանում է գործի լուծման գործառույթը, որի շրջանակներում էլ իրացվում է դատավորի անկախության սկզբունքը: Դատարանի անկախության սկզբունքը չի կարող դրսևորվել դատավարության կողմերի՝ մեղադրանքի կամ պաշտպանության կողմի գործառույթի տիրույթում» (ՄԴՈ-931):

5.2. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) արդար դատաքննության, դրա բաղադրատարր հանդիսացող կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքների վերաբերյալ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

«Քրեական գործերով մրցակցային դատաքննության իրավունքը նշանակում է, որ և՛ մեղադրանքի կողմին, և՛ պաշտպանության կողմին պետք է տրվի հնարավորություն՝ ծանոթանալու միմյանց ներ-

կայացրած փաստարկներին և ներկայացնելու իրենց դիտողությունները միմյանց փաստարկների վերաբերյալ («Rowe and Davis v. the United Kingdom», դիմ. հ/հ 28901/95, 16/02/2000): Մրցակցային դատավարությունում դատարանը չի կարող ստանձնել ոչ մեղադրանքի, ոչ պաշտպանության գործառույթ: Դատարանը չի կարող հանդես գալ մեղադրանքի կամ պաշտպանության կողմում»,

«Մրցակցային դատավարության իրավունքը պետք է հնարավոր լինի իրականացնել բավարար պայմաններում. վարույթի կողմին պետք է տրվի դատարան ներկայացված ապացույցներին պատշաճ ձևով և համապատասխան ժամանակահատվածում ծանոթանալու, ինչպես նաև դրանց գոյության, բովանդակության և իսկության վերաբերյալ մեկնաբանելու հնարավորություն («Křemář and others v. The Czech Republic», դիմ. հ/հ 35376/97, 03/06/2000, §42, «Immeubles Groupe Kossier v. France», դիմ. հ/հ 38748/97, 21/03/2000, §26),

«Մրցակցային դատավարության կարևոր բաղադրատարրերից է նաև դատավարության կողմերի հավասարությունը: Կողմերի հավասարությունը, ըստ Եվրոպական դատարանի մեկնաբանության, նշանակում է, որ դատավարության յուրաքանչյուր կողմի պետք է ընձեռվի պատշաճ հնարավորություն ներկայացնելու իր գործը, ներառյալ ապացույցները, այնպիսի պայմաններում, որոնք նրա համար մյուս կողմի համեմատությամբ չեն ստեղծի անբարենպաստ վիճակ («Dombo Beheer B.V. v. The Netherlands», դիմ. հ/հ 14448/88, 27/10/1993),

Արդարադատության իրականացման նկատմամբ դատավարության մասնակիցների վստահությունը հիմնվում է այն գիտակցման վրա, որ իրենց տրվել է գործում առկա բոլոր փաստաթղթերի (ներառյալ դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ ձեռք բերված փաստաթղթերի) վերաբերյալ իրենց կարծիքներն արտահայտելու հնարավորություն («K.S. v. Finland», դիմ. հ/հ 29346/95, 12/12/2001; «Nideröst-Huber v. Switzerland», դիմ. հ/հ 18990/91, 18/02/1997, §29; «Pellegrini v. Italy», դիմ. հ/հ 30882/96, 20/10/2001, §45):

Վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների արդյունավետ կենսագործումն ապահովելու համար պետք է օրենսդրորեն երաշխավորել ինչպես դատարանի մատչելիության, դատարան դիմելու հնարավորության ապահովման, այնպես էլ՝ գործն անկախ և անաչառ դատարանի կողմից արդարության պահանջների մրցակցության և հավասարության սկզբունքների պահպանմամբ քննելու իրավական հնարավորությունը:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ Օրենսգրքի՝ «Քրեական դատավարության սկզբունքները» վերտառությամբ 2-րդ գլխով ամրագրված են ինչպես հավասարության, այնպես էլ մրցակցության սկզբունքները, որոնց համատեքստում նախատեսվում է բոլորի հավասարությունն օրենքի և դատարանի առջև, ինչպես նաև դատավարության իրականացումը մրցակցության սկզբունքի պահպանմամբ, որը սահմանում է, որ դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է միայն իրավունքի շահերը:

5.3. Վերոնշյալ սկզբունքների կենսագործման համատեքստում օրենսդրությամբ սահմանվում է, որ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում (Օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մաս):

Վճռաբեկ դատարանն իր՝ 20.12.2019թ. ԵԿԴ/0259/01/16 որոշման մեջ նշել է. «16.1. Անդրադառնալով վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելու օրենսդրական պահանջի բովանդակությանը՝ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ

- վերաքննիչ դատարանն իրավունք չունի իր դատական ակտը հիմնավորել այնպիսի էական փաստարկումներով, որոնք ներկայացված չեն վերաքննիչ բողոքում: Դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելու իրավական պահանջը պարունակում է դատավարության մասնակցին տրված երաշխիք առ այն, որ իր գործով դատական քննության ընթացքում վերաքննիչ դատարանը չի կատարի տվյալ անձի դատավարական հակառակորդի գործառույթ (9),

- վերաքննության առարկան ոչ թե գործի ըստ էության քննությունն է, այլ առաջին աստիճանի դատարանի դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգումը: Դրանով պայմանավորված՝ վերաքննիչ դատարանում դատաքննությունը սկսվում է ոչ թե մեղադրողի կողմից մեղադրական եզրակացության եզրափակիչ մասի հրապարակմամբ, այլ նախագահողի կողմից դատական ակտի բովանդակության, ինչպես նաև վերաքննիչ բողոքի և դրա դեմ առկա պատասխանների էության շարադրմամբ (10),

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածում ամրագրված սահմանափակումները բացարձակ բնույթ չեն կրում, և դրանք պետք է դիտարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի այլ իրավանորմերի համատեքստում: Վերաքննիչ դատարանն իրավասու է դուրս գալ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

րումների սահմաններից միայն այն դեպքում, երբ առկա է դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որն անվերապահորեն պետք է հանգեցնի դատական ակտի բեկանման (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մաս) կամ առկա է քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր) կամ անձի նկատմամբ խոշտանգում և վատ վերաբերմունքի այլ ձևեր կիրառելիս: Մյուս բոլոր դեպքերում վերաքննիչ դատարանը կաշկանդված է դատական վերանայման սահմանների վերաբերյալ կանոններով, հետևաբար իրավասու չէ սեփական նախաձեռնությամբ, վերաքննիչ բողոքի հիմքերից և հիմնավորումներից դուրս արձանագրել դատական սխալ (11):

16.2 Վերահաստատելով վերոշարադրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերաքննիչ վերանայման սահմաններից դուրս գալու հիմքերի սահմանափակ և խիստ որոշակի շրջանակը կոչված է բացառելու վերադաս դատական աստիճանի կողմից բողոքում չնշված, անկանխատեսելի հանգամանքներով սահմաններից դուրս գալը: Հակառակ պարագայում, վերադաս դատարանը կիրականացնի գործի լրիվ ծավալով ըստ էության քննություն, ինչն անհամատեղելի կլինի մրցակցության սկզբունքից բխող սահմանափակ վերանայման օրենսդրորեն ամրագրված գաղափարի հետ»:

Վճռաբեկ դատարանն իր մեկ այլ՝ 29.06.2009թ. ԵՔԲԴ/0219/01/08 որոշմամբ քննության առարկա դարձնելով այն հարցը, թե ներկայացված վերաքննիչ բողոքի քննության ժամանակ վերաքննիչ դատարանն իրավասու էր արդյոք գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնել՝ առանց դատական վիճաբանություններն ու ամբաստանյալի վերջին խոսքն ունկնդրելու, գալիս է հետևյալ եզրահանգման.

«10.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերի կողմից վկայակոչված նյութական և դատավարական իրավունքի խախտումները փոխկապակցված են. նյութական իրավունքի ենթադրյալ խախտումը կարող է հետևանք լինել ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի ենթադրյալ խախտման, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին հերթին անհրաժեշտ է քննության առնել ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից սույն բողոքի քննության ժամանակ թույլ տրված դատավարական իրա-

վունքի նորմի ենթադրյալ խախտման հարցը, քանի որ նման խախտման փաստի արձանագրման դեպքում անհնար կլինի դատողություններ անել անձին մեղսագրվող արարքի հիմնավոր կամ անհիմն լինելու, այսինքն՝ անձի նյութական իրավունքի խախտման առկայության կամ բացակայության վերաբերյալ:

....

18. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատավարության մասնակիցները պետք է նախապես տեղյակ լինեն, թե ինչ դատավարական ձևով է իրականացվելու բողոքի քննությունը վերաքննիչ դատարանում, քանի որ դա անձի արդար դատական քննության իրավունքի ապահովման կարևորագույն երաշխիք է:

Մինչդեռ սույն գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը վճռաբեկ դատարանում գործի քննության համար սահմանված կանոններով գործը քննելու իր որոշման մասին հայտարարել է ըստ էության որոշում կայացնելու համար խորհրդակցական սենյակ հեռանալուց անմիջապես առաջ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը): Այսինքն՝ մինչ այդ պահը դատավարության մասնակիցները չեն իմացել և չէին կարող իմանալ, որ վերաքննիչ դատարանը գործը քննելու է վճռաբեկ դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով, և հետևաբար դատական վիճաբանություններ չեն լինելու և ամբաստանյալին վերջին խոսքի իրավունք չի տրամադրվելու: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դա Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում է»:

Ակնհերձ է, որ վերաքննիչ դատարանում գործի քննության սահմանների վերաբերյալ առկա օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև դրանց վերաբերյալ Վճռաբեկ դատարանի ներկայացրած իրավական դիրքորոշումները հանգում են այն հետևության, որ վերաքննիչ դատարանը չի իրականացնում գործի ըստ էության քննություն և չի կարող դուրս գալ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից, իսկ նշված կանոնից բացառությունները նույնպես հստակ ամրագրված են օրենսդրությամբ, որոնք բացառում են այլ հիմքերով վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից դուրս գալը:

Վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից դուրս չգալը կարևորվում է նաև անկախ դատարանի կողմից գործի արդարացի մրցակցության և հավասարության սկզբունքների պահպանմամբ քննելու տեսանկյունից, որի բացակայությունը համահունչ չէր լինի դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքներին:

Վերոգրյալի հաշվառմամբ անդրադառնալով դիմողի կողմից վիճարկվող դրույթին՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ այն սահմանում է վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելու պահանջը, որպիսի կարգավորումը համահունչ է ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ՝ միջազգային իրավական ակտերով ամրագրված դատական պաշտպանության և արդար դատաքննության սկզբունքներին, որպիսի դիրքորոշումը հիմնավորվում է վերոշարադրյալ մի շարք իրավական դիրքորոշումներով և վերլուծությամբ:

Մինևույն ժամանակ Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրությունը հանցագործության որակումը քրեական օրենքի այն հոդվածով փոփոխելը, որը պատասխանատվություն է նախատեսում ավելի թեթև հանցագործության համար, հնարավորություն է տալիս վերաքննիչ ատյանին դուրս գալ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից, որպիսի կարգավորումն ուղղված է մեղադրյալի իրավունքների պաշտպանությանը՝ վերջինիս իրավական վիճակը բարելավելու և արդարացի դատական ակտի առկայությունը ապահովելու միջոցով:

5.4. Սահմանադրության 67-րդ հոդվածով սահմանվում է.

«Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի՝

1) ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրավունք.

2) անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունք.

3) իր պաշտպանությունը նախապատրաստելու և իր ընտրած փաստաբանի հետ հաղորդակցվելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունք.

4) իր դեմ ցուցմունք տվող անձանց հարցման ենթարկելու իրավունք, կամ որ այդ անձինք ենթարկվեն հարցման, ինչպես նաև, որ իր օգտին ցուցմունք տվող անձինք կանչվեն և հարցաքննվեն նույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված անձինք.

5) թարգմանչի անվճար ծառայությունից օգտվելու իրավունք, եթե նա չի տիրապետում հայերենին»:

Կոնվենցիայի «Արդար դատաքննության իրավունքը» վերտառությամբ 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու համար,

համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

Նույն հոդվածի 3-րդ մասով սահմանվում է.

«3. Քրեական հանցագործություն կատարելու համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա) իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,

բ) բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար,

գ) պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը,

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները,

ե) օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով»:

Անդրադառնալով մեղադրանքից պաշտպանվելու իրավունքի էության բացահայտմանը՝ Սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշումներ առ այն, որ.

«... մեղադրանքի ինստիտուտը՝ իր սահմանադրաիրավական բովանդակությամբ, կոչված է օրենքով նախանշված կարգով երաշխավորել քրեական օրենսգրքով չթույլատրված և անձին մեղսագրվող արարքի կատարման վերաբերյալ նրան ներկայացված այդպիսի հիմնավորումից (մեղադրանքից) պաշտպանվելու իրավական (այդ թվում՝ արդարադատական) հնարավորություն» (ՄԴՈ-934),

«... ՀՀ Սահմանադրության 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ հոդվածներում ամրագրված են հանցավոր արարքի կատարման մեջ մեղադրվող անձի իրավունքների պաշտպանության երաշխիքներ: Միաժամանակ, Սահմանադրության 3-րդ և 14-րդ հոդվածներին համապատասխան՝ պետության պարտականությունն է ապահովել մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունն ու անձեռնմխելիությունը: Քրեական գործի վարույթում մեղադրական

եզրակացությունը ոչ միայն դատավարական փաստաթուղթ է, որով ամփոփվում են նախաքննության արդյունքները, ներկայացվում են անձին մեղսագրվող արարքի իրավաբանական որակումը և այն հիմնավորող ապացույցները, այլև հնարավորություն է ընձեռվում ամբաստանյալին (նրա օրինական ներկայացուցչին) կազմակերպելու և իրականացնելու առաջադրված մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը՝ կոնկրետ մեղադրանքի և այն հիմնավորող ապացույցների շրջանակում: Մեղադրական եզրակացությունն իրավական հնարավորություն է ստեղծում նաև գործով շահագրգիռ այլ անձանց՝ ապահովելու իրենց խախտված իրավունքների պաշտպանությունը» (ՄԴՈ-934):

Սահմանադրական դատարանը կարևորում է նաև առկա իրավակարգավորման դիտարկումը Կոնվենցիայի հիմնադրույթների տեսանկյունից: Մեղադրանքից պաշտպանվելու իրավունքի վերաբերյալ առկա են նաև ՄԻԵԴ-ի մի շարք դիրքորոշումներ, որոնք հանգում են հետևյալին.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի կիրառության շրջանակը պետք է գնահատվի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ արդար դատաքննության ավելի ընդհանուր իրավունքի լույսի ներքո: Քրեական հարցերում մեղադրյալին առաջադրված մեղադրանքների վերաբերյալ ամբողջական, մանրամասն տեղեկատվության տրամադրումը և, հետևաբար, իրավաբանական որակումը, որ դատարանը կարող էր տվյալ հարցով տալ, կարևոր նախապայման է՝ վարույթի արդարությունն ապահովելու համար («Pélissier-ը and Sassi v. France», դիմ. հ/հ 25444/94, 25/03/1999, § 52; «Sejdovic v. Italy», դիմ. հ/հ 56581/00, 01/03/2006, § 90):

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» և «բ» ենթակետերը կապված են նրանով, որ մեղադրանքի բնույթի ու հիմքի վերաբերյալ տեղեկացվելու իրավունքը պետք է դիտարկվի մեղադրյալի իր պաշտպանությունը նախապատրաստելու իրավունքի լույսի ներքո («Pélissier-ը and Sassi v. France», դիմ. հ/հ 25444/94, 25/03/1999, § 54, «Dallos v. Hungary», դիմ. հ/հ 29082/95, 01/03/2001, § 47):

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետը պաշտպանյալին իրավունք է տալիս տեղեկացված լինել ոչ միայն մեղադրանքի «հիմքի» մասին, այսինքն՝ այն արարքների, որոնք նա ենթադրաբար կատարել է, և որոնց վրա հիմնված է մեղադրանքը, այլև մեղադրանքի «բնույթի», այսինքն՝ այդ արարքներին տրված իրավական բնութագրի մասին («Mattocchia v. Italy», դիմ. հ/հ 23969/94,

25/07/2000, § 59, «Penev v. Bulgaria», դիմ. հ/հ 20494/04, 07/01/2010, § 33, § 42):

ՄԻԵԴ-ի մի շարք որոշումների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դրանցում առկա են նաև իրավական դիրքորոշումներ մեղադրանքի վերաորակման վերաբերյալ, որոնց բովանդակությունը հանգում է հետևյալին.

մեղադրյալին պետք է պատշաճ կերպով և ամբողջովին տեղեկացնեն մեղադրանքի ցանկացած փոփոխության, այդ թվում՝ դրա «հիմքի» փոփոխության մասին, և նրան պետք է տրամադրվեն բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ դրանց արձագանքելու և իր պաշտպանությունը ցանկացած նոր տեղեկատվության կամ ենթադրության հիման վրա կազմակերպելու համար («Mattoccia v. Italy», դիմ. հ/հ 23969/94, 25/07/2000, § 61):

Վարույթի ընթացքում փաստերի վերաորակման դեպքում մեղադրյալին պետք է հնարավորություն տրվի գործնական և արդյունավետ կերպով ու պատշաճ ժամանակում իրականացնել իր պաշտպանության իրավունքը («Pélissier-ը and Sassi v. France», դիմ. հ/հ 25444/94, 25/03/1999, § 62; «Block v. Hungary», դիմ. հ/հ 56282/09, 25/01/2011, § 24):

Տեղեկատվությունը պետք է մեղադրյալին ներկայացվի պատշաճ ժամանակին՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար, որը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի հիմքում ընկած սկզբունքային նպատակն է («C. v. Italy», դիմ. հ/հ 41824/98, 05/04/2000; «Borisova v. Bulgaria», դիմ. հ/հ 56891/00, 21/12/2006, §§ 43-45):

5.5. Օրենսգրքի վիճարկվող նորմերը մեղադրանքից պաշտպանվելու, տվյալ դեպքում՝ փոփոխված մեղադրանքից պաշտպանվելու իրավունքի վերաբերյալ Սահմանադրական դատարանի և ՄԻԵԴ-ի արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելու արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման դեպքում անձը պետք է ապահովվի մեղադրանքի թե՛ փաստական, թե՛ իրավական որակման փոփոխությունների վերաբերյալ անհրաժեշտ և ամբողջական տեղեկատվությամբ, ինչպես նաև անձի համար պետք է ապահովվել ողջամիտ ժամանակահատված՝ փոփոխված մեղադրանքից պաշտպանվելու, դրա վերաբերյալ իր դիրքորոշումները ներկայացնելու իրավական հնարավորությամբ:

5.6. Սահմանադրության 75-րդ հոդվածն ամրագրում է, որ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենք-

ները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Իսկ 80-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ ամրագրված դրույթների էությունն անխախտելի է:

Վերոնշյալ սահմանադրական սկզբունքները կոչված են ապահովելու սահմանադրական իրավունքների արդյունավետ կենսագործումը և կարևոր երաշխիքներ են օրենսդրությունը Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների էությանն ու ոգուն համահունչ ձևավորելու հարցում:

Ըստ այդմ՝ Սահմանադրությամբ ամրագրված մեղադրանքից պաշտպանվելու իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ապահովել ոչ միայն սկզբնական մեղադրանքի, այլև հետագայում՝ դատաքննության փուլում, փոփոխված մեղադրանքից պաշտպանվելու պատշաճ կառուցակարգեր և իրական հնարավորություն, հակառակ պարագայում արարքի վերաորակման վերաբերյալ առկա իրավակարգավորումները համահունչ չեն լինի Սահմանադրության 75-րդ հոդվածով ամրագրված՝ անհրաժեշտ կառուցակարգերի և ընթացակարգերի առկայության սահմանադրական պահանջին:

Բացի դրանից, իրավունքի սահմանումը միայն բավարար չէ այն կյանքի կոչելու համար, քանի որ սահմանումից բացի կարևորագույն խնդիր է իրավունքի հիմնական բովանդակության, էության բացահայտումը: Իրավունքի էությունն այն նպատակների ամբողջությունն է, որի համար սահմանվել է այն, ուստի այդ իրավունքի արդյունավետ իրացման համար անհրաժեշտ օրենսդրական կարգավորումների առկայության դեպքում միայն կարող ենք փաստել, որ իրավունքի էության անխախտելիության սահմանադրական պահանջը կենսագործված է: Մեղադրանքից պաշտպանվելու սահմանադրական իրավունքը ենթադրում է նախնատաջ մեղադրանքի բնույթի և հիմքի մասին ամբողջական և ժամանակին տեղեկատվության տրամադրում, ապա անձամբ կամ փաստաբանի միջոցով այդ մեղադրանքից պաշտպանվելու իրավունքի կազմակերպում, որպիսի կանոնը պետք է գործի բացառապես թե՛ սկզբնական մեղադրանքի, թե՛ դատաքննության փուլում վերաորակված արարքի դեպքում:

Այսպիսով, վերաքննիչ ատյանի կողմից հանցագործության որակումը փոխելու հնարավորությունն ամրագրող իրավադրույթը սահմանադրական նորմերին համահունչ կենսագործելու համար պետք

է ապահովել մեղադրյալի՝ մեղադրանքից պաշտպանվելու իրավունքի արդյունավետ իրացումը:

5.7. Սույն գործի քննության շրջանակներում Սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել այն պատճառները, որոնց արդյունքում վերաքննիչ դատարանում ամբաստանյալին մեղսագրվող արարքը մեղմացման իմաստով վերադրակելիս չի ապահովվում մեղադրանքից պաշտպանվելու իրավունքի արդյունավետ իրացումը:

Այդ կապակցությամբ, նախ և առաջ, հարկ է վկայակոչել Սահմանադրական դատարանի ՄԴՈ-872 որոշման մեջ ամրագրված հետևյալ իրավական դիրքորոշումները.

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով քննության առարկա նորմերի իրավակարգավորման շրջանակներում, մեղադրողի կողմից մեղադրանքը փոխելուց անմիջապես հետո, դատարանը հետաձգում է դատական նիստը և վիճարկվող հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին դատարանը նոր մեղադրանքին ծանոթանալու համար ժամանակ է տրամադրում նրանց միջնորդության դեպքում, իսկ ամբաստանյալին և նրա պաշտպանին՝ անկախ միջնորդությունից»: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ հոդվածների տրամաբանությունից բխում է նաև, որ դատաքննության բոլոր փուլերում պետք է երաշխավորված լինեն կողմերի իրավունքների լիարժեք պաշտպանությունն ու դատաքննության մրցակցային սկզբունքի ամբողջական իրացումը»:

Սահմանադրական դատարանը, իր ՄԴՈ-710 որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելով քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտը կարգավորող նորմերը, արտահայտել է մի շարք սկզբունքային իրավական դիրքորոշումներ, որոնք էական նշանակություն ունեն նաև սույն գործի առնչությամբ, և որոնք, մասնավորապես, հանգում են հետևյալին.

«7. ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի պահանջն է, ի թիվս արդար դատաքննության այլ երաշխիքների, դատաքննության իրականացումը կողմերի հավասարության պայմաններում և անկողմնակալ դատարանի կողմից: ՀՀ քր.դատ.օր.-ով նախատեսված կարգով գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելով՝ դատարանը դուրս է գալիս դատավարությունում անկողմնակալ իր դերի շրջանակներից և ուղղորդում է լրացուցիչ նախաքննության ընթացքը՝ իրակա-

նացնելով արդարադատության գործառույթի հետ անհամատեղելի գործողություններ: Դատարանը նաև կողմերի միջև հավասարության նժարը խախտում է ի շահ մեղադրանքի կողմի, դրանով իսկ խախտելով ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ անձի դատական և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:

....

8. ՀՀ Սահմանադրության 21 հոդվածում ամրագրված անմեղության կանխավարկածի սկզբունքի կարևոր բաղադրատարրերից է չփարատված կասկածները հոգուտ մեղադրյալի մեկնաբանելու պահանջը: Նշված պահանջի կատարումը և քրեական գործը դատարանի որոշմամբ լրացուցիչ նախաքննության ուղարկելը գործնականում անհամատեղելի են միմյանց հետ: Քրեական գործը նման կարգով լրացուցիչ նախաքննության ուղարկելու դեպքում ըստ էության շրջանցվում է նշված հոդվածում ամրագրված չփարատված կասկածները հոգուտ մեղադրյալի մեկնաբանելու սահմանադրական պահանջը»:

5.8. Սահմանադրական դատարանի վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն դիմումում արձաձված սահմանադրաիրավական վեճին՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ դրա հիմքում ընկած է Օրենսգրքի 397-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման արդյունքում ձևավորված իրավակիրառ պրակտիկան, որպիսի պայմաններում, հաշվի առնելով կողմերի իրավահավասարության, դատավարության մրցակցության և դատարանի անկողմնակալության սկզբունքները, ամբաստանյալը զրկվում է նոր մեղադրանքից պաշտպանվելու հնարավորությունից:

Գործի նյութերի և Օրենսգրքի հիշյալ դրույթների վերաբերյալ դիմողի դիրքորոշումների ուսումնասիրության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողի կողմից վկայակոչված՝ իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտումը և իր համար առաջացած ոչ բարենպաստ հետևանքները պայմանավորված չեն Օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին և 414²-րդ հոդվածի 1-ին մասերի սահմանադրականությամբ, ինչպես նաև սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում բացակայում է դատարանների կողմից դիմողի նկատմամբ հիշյալ դրույթի կիրառման և դիմողի սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման միջև ուղղակի պատճառահետևանքային կապը:

Ավելին, Օրենսգրքի 414²-րդ հոդվածի 1-ին մասի ենթադրյալ օրենսդրական բացի առկայության առնչությամբ դիմողի կողմից բերված փաստարկները չեն բավարարում այդ ինստիտուտի առնչությամբ Սահմանադրական դատարանի արտահայտած սկզբունքային նշանակություն ունեցող մի շարք իրավական դիրքորոշումներում (ՄԴՈ-864, ՄԴՈ-914, ՄԴՈ-933, ՄԴՈ-1143) ամրագրված չափանիշները:

Մասնավորապես, Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-914 որոշմամբ արձանագրել է. «7. Օրենսդրական բացի սահմանադրականության հարց քննելիս սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե տվյալ օրենսդրական բացը հանդիսանում է իրավակարգավորման թերությունը, թե՞ իրավաստեղծ մարմինը նման իրավակարգավորում սահմանելիս հաշվի է առել օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայությունը և ակնկալել այդ իրավական երաշխիքների հիման վրա համապատասխան իրավակիրառական պրակտիկայի ձևավորումը:

....

.... օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանի քննությանը»:

Այս կապակցությամբ ակնհայտ անհիմն են Օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին և 414²-րդ հոդվածի 1-ին մասերի առնչությամբ դիմողի բերված փաստարկները և գործի վարույթը նշված մասով ենթակա է կարճման:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60, 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված իրավակարգավորումը համապատասխանում է Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ նշված դրույթով նախատեսված լիազորությունն իրականացնելիս վերաքննիչ դատարանը պետք է ապահովի անձի՝ մեղադրանքից պաշտպանվելու իրավունքի արդյունավետ իրացման իրավական հնարավորություն:

2. «Անդրանիկ Գալստյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի, 397-րդ հոդվածի 2-րդ և 414²-րդ հոդվածի 1-ին մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի և 414²-րդ հոդվածի 1-ին մասի մասերով, կարճել:

3. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 2-րդ մասը դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման առաջին կետում տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

4. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

17 նոյեմբերի 2020 թվականի
ՍԴՈ-1559



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ԿԱՆԱԶ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

24 նոյեմբերի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

գրավոր ընթացակարգի շրջանակներում,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի դեկտեմբերի 11-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Կանաչ կլիմայական հիմնադրամի միջև հիմնական համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2020 թվականի օգոստոսի 20-ի N 1385-Ա որոշմամբ 2018 թվականի դեկտեմբերի 11-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Կանաչ կլիմայական հիմնադրամի միջև հիմնական համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2020 թվականի օգոստոսի 28-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ Կառավարություն) և Կանաչ կլիմայական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) միջև հիմնական համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2018 թվականի դեկտեմբերի 11-ին Կատվիցե քաղաքում՝ Հայաստանի Հանրապետությունում Հիմնադրամի գործունեության արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով:

2. Համաձայնագիրը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում Հիմնադրամի և վերջինիս հետ կապակցված անձանց կարգավիճակը: Այն պետք է կիրառվի ցանկացած գործունեության նկատմամբ, որը Հիմնադրամը կարող է ծավալել Հայաստանի Հանրապետությունում: Կողմերը կարող են կնքել լրացուցիչ համաձայնագրեր նման գործունեության և նախագծերի (այսուհետ՝ Ծրագրային փաստաթուղթ) հատկորոշիչները սահմանելու վերաբերյալ: Սույն Համաձայնագրի ներքո կնքված ցանկացած նման Ծրագրային փաստաթուղթ չի կարող Կառավարության և Հիմնադրամի համար առաջացնել միջազգային իրավունքի ներքո այլ պարտավորություններ և չի կարող հակասել Համաձայնագրի ժամկետներին և պայմաններին (հոդվ. 1):

3. Ըստ Համաձայնագրի՝ Հիմնադրամն ունի լիարժեք իրավաբանական անձի կարգավիճակ և, մասնավորապես, իրավասու է կնքել պայմանագիր, ձեռք բերել և տնօրինել շարժական և անշարժ գույք, հանդես գալ դատարանում (հոդվ. 3, կետ 1):

4. Հայաստանի Հանրապետությունը Համաձայնագրով ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես, հետևյալները.

ա) ապահովել Հիմնադրամի տարածքների անձեռնմխելիությունը, ինչպես նաև Կառավարության միջոցով ապահովել Հիմնադրամի տարածքների պահպանությունը և այդ տարածքների համար հանրային ծառայությունների տրամադրումը (հոդվ. 3, կետ 2),

բ) ապահովել, որ մինչև Հիմնադրամի նկատմամբ վերջնական դատական ակտի կայացնելը Հիմնադրամի գույքի և տարածքի վրա, անկախ դրանց գտնվելու վայրից և դրանք տնօրինողից, չկիրառվի որևէ տեսակի բռնագրավում, զննություն, կալանք, արգելանք կամ հարկադիր կատարում (հոդվ. 4, կետ 3),

գ) ապահովել Հիմնադրամի գույքի ու ակտիվների, անկախ գտնվելու վայրից և տնօրինողից, անձեռնմխելիությունը գործադիր կամ օրենսդիր գործունեությամբ սահմանված հետախուզման, արգելանքի, առգրավման, բռնագանձման կամ որևէ այլ տեսակի պահանջագրի և իրավագրկման գործողություններից (հոդվ. 5),

դ) ապահովել Հիմնադրամին պատկանող կամ նրա մոտ պահվող արխիվների և բոլոր փաստաթղթերի ու տվյալների, ինչ տարբերակով էլ դրանք կազմված լինեն, այդ թվում՝ էլեկտրոնային ձևով, անձեռնմխելիությունը՝ անկախ դրանց գտնվելու վայրից (հոդվ. 6),

ե) ապահովել, որ Հիմնադրամի պաշտոնական հաղորդակցության նկատմամբ ցուցաբերվի ոչ պակաս բարյացակամ վերաբերմունք, քան Հայաստանի Հանրապետությունում ներկա միջազգային կազմակերպությունների պաշտոնական հաղորդակցության նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքը (հոդվ. 8),

զ) ապահովել, որ Կառավարությունը դյուրացնի Հիմնադրամի համար առաքելություն իրականացնող պաշտոնյաների և փորձագետների տեղաշարժը, ներառյալ մուտքի վիզայի համար դիմումներին արագ ընթացք տալու միջոցով, երբ պահանջվում է մուտքի վիզա, և Հայաստանի Հանրապետության օրենքներով ու կարգավորումներով թույլատրելի սահմաններում (հոդվ. 10, կետ 1),

է) ապահովել, որ Կառավարությունը դյուրացնի Հիմնադրամի կազմակերպած հանդիպումներին ու համաժողովներին մասնակցելու համար Հիմնադրամի կողմից հրավիրված դիտորդների և այլ անձանց մուտքի վիզայի համար դիմելու ընթացակարգը, երբ պահանջվում է մուտքի վիզա, և Հայաստանի Հանրապետության օրենքների ու կարգավորումների թույլատրելի սահմաններում (հոդվ. 10, կետ 2),

ը) ապահովել, որ Հիմնադրամը, նրա ակտիվները, գույքը, եկամուտը, նրա գործառնություններն ու գործարքները, ներառյալ ցանկացած գործունեություն և նախագիծ, որն իրականացվում է Հիմնա-

դրամի կողմից Հայաստանի Հանրապետությանը ցուցաբերվող տեխնիկական աջակցության շրջանակներում, ազատվեն բոլոր հարկումներից և բոլոր մաքսատուրքերից (հոդվ. 11, կետ 1) և այլն:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց 3**.

1. 2018 թվականի դեկտեմբերի 11-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Կանաչ կլիմայական հիմնադրամի միջև հիմնական համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

24 նոյեմբերի 2020 թվականի
ՍԴՈ-1560



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԼՈՒՍԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԵՎ «ՅՈՒԷՍԷՅ ԻՆՏԵՐԿԱՐԳՈ
ԲՄԵ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 128-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ
ՄԱՍԻ ԵՎ 134-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

24 նոյեմբերի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողների՝ Լուսինե Հարությունյանի և «ՅուԷսԷյ Ինտերկարգո ԲՄԵ» ՍՊԸ-ի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական սպասարկման և ապահովման բաժնի պետ Կ. Սովսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Լուսինե Հարությունյանի և «ՅուԷսԷյ Ինտերկարգո ԲՄԵ» ՍՊԸ-ի դիմումի հիման

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 3-4(99-100)/2020

վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի և 134-րդ հոդվածի 2-րդ մասի Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 9-ին, Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել 2018 թվականի փետրվարի 27-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ից:

Օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Առաջին ստյանի դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կիրառում է հայցի ապահովման միջոցներ, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել, դժվարացնել դատական ակտի կատարումը, հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի փաստացի կամ իրավական վիճակի փոփոխության կամ էական վնաս հասցնել միջնորդություն ներկայացնող անձին»:

Օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն

«Հայցի ապահովման միջոցը կարող է լրիվ կամ մասնակի վերացվել, եթե

- 1) բացակայում են սույն օրենսգրքի հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքերը.
- 2) առկա է հայցի ապահովման միջոցը լրիվ կամ մասնակի վերացնելու վերաբերյալ գործին մասնակցող այն անձի գրավոր համաձայնությունը, որի միջնորդությամբ կիրառվել է հայցի ապահովման միջոց.
- 3) սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում»:

Գործի քննության առիթը Լուսինե Հարությունյանի և «ՅուէսԷյ Բնտերկարգո ԲՄԵ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Դիմող)՝ 2020 թվականի հունվարի 14-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող իրավադրույթներն ու դրանց հետ փոխկապակցված օրենսդրական այլ նորմեր՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Դիմողի դիրքորոշումը

Դիմողը բարձրացնում է իրավական անորոշության և օրենսդրական բացի խնդիր: Ըստ նրա՝ Օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասը

և 134-րդ հոդվածի 2-րդ մասը չեն նախատեսում հայցի ապահովում կիրառելու մասին միջնորդությամբ իրավունքի հնարավոր չարաշահումը կանխարգելելու իրավական երաշխիքներ:

Դիմողի գնահատմամբ՝ հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքերի մեջ բացակայում է այնպիսի նվազագույն պայմանների ցանկը, որոնց առկայությունն ստուգելը պետք է լինի դատարանի առաջին քայլը՝ հայցի ապահովման միջոց կիրառելու հարցը քննարկելիս: Համապատասխանաբար իրավակիրառ պրակտիկայում ևս բացակայում է այդպիսի պայմանների կիրառումը:

Դիմողը մասնավորապես նշում է, որ Օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ի մասը իրավական անորոշության տեղիք է տալիս այն հիմնավորմամբ, որ «դժվարացնել կատարումը», «հանգեցնել փաստացի կամ իրավական վիճակի փոփոխության», «էական վնաս հասցնել» բառակապակցությունները որևէ կերպ չեն բացատրվում կամ պարզաբանվում, և դատարանն այս նորմը կիրառելիս զրկված է լինում հայցի ապահովման միջոց կիրառելու հստակ հիմքերի ցանկից, ինչն էլ առաջացնում է նորմի կամայական կիրառման վտանգ: Իր դիրքորոշումը փաստարկելու համար Դիմողն արձանագրում է, որ նույն դատարանի կողմից նմանատիպ գործերով մի դեպքում դատարանը կիրառել է հայցի ապահովման միջոց, մյուս դեպքում՝ ոչ:

Դիմողը գտնում է նաև, որ Օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ի մասի առկայության պայմաններում խախտվում է արդար դատաքննության բաղադրատարր հանդիսացող կողմերի իրավահավասարության սկզբունքը, քանի որ, ի տարբերություն հայցի ապահովում կիրառելու միջնորդություն ներկայացրած անձի՝ մյուս կողմը, որի նկատմամբ կիրառվել է հայցի ապահովումը, չի ստանում արդյունավետ դատական պաշտպանության իրավունք, անպաշտպան է մնում ոչ միայն դատավարության մյուս կողմի ցուցաբերած իրավունքի չարաշահումից, այլև իր գույքի նկատմամբ ապացույցներով չհիմնավորված, ուռճացված հայցագնի չափով արգելանքի կիրառումից: Որպես ապացույց իր փաստարկի՝ Դիմողն արձանագրում է, որ հայցվորն այդպես էլ դատարան չի ներկայացրել դրամական պահանջի մյուս մասը հիմնավորող ապացույցը, սակայն, դատարանը հայցի ապահովման միջոցը կիրառել է ամբողջ հայցագնի չափով: Ըստ Դիմողի՝ պատճառն այն է, որ հայցի ապահովման միջոց կիրառելիս դատարանը չի անդրադառնում հայցագնի չափի հիմնավորվածությանը և ապացույցներին:

Ամփոփելով իր դիրքորոշումները՝ Դիմողը եզրահանգում է, որ Օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով չի նա-

խատեսում հայցապահանջով ակնկալվող դատական ակտի կայացման *prima facie* հավանականությունն ստուգելու պահանջ և հայցի ապահովում կիրառելու մասին միջնորդությամբ իրավունքի հնարավոր չարաշահումը կանխարգելելու իրավական երաշխիքներ, ինչպես նաև հայցագնի չափի հիմնավորվածության ստուգում, հակասում է Սահմանադրության 11-րդ հոդվածին, 60-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին և 78-րդ հոդվածին:

Ինչ վերաբերում է Օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորմանը, ապա այդ մասով Դիմողը նշում է, որ Օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասը թույլ չի տալիս հաղթահարել Օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման թերությունը, քանի որ հայցի ապահովման միջոցի վերացումը նույնպես կապվում է նշված նորմով ներկայացված հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքերի բացակայության հետ:

2. Պատասխանողի դիրքորոշումը

Վերլուծելով Սահմանադրության և Օրենսգրքի համապատասխան հոդվածները՝ պատասխանողը կարծիք է հայտնում, որ հայցի ապահովման ինստիտուտի էությունն այն է, որ հայցի բավարարման դեպքում վճռի կատարման համար ապահովվեն հուսալի երաշխիքներ, ինչպես նաև կանխվի հայցվորի նկատմամբ պատասխանողի պարտավորության կատարումից չարամտորեն խուսափելը՝ միաժամանակ ապահովելով կողմերի հիմնական, այդ թվում՝ մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

Պատասխանողը փաստում է, որ դատարանը հայցի ապահովման միջնորդությունը քննելիս ուսումնասիրում է՝ արդյոք ներկայացված միջնորդությունը հիմնավորված է, այսինքն՝ արդյոք առկա է այն մտահոգությունը, որ պատասխանող կողմը կարող է խուսափել իր պարտավորությունների պատշաճ իրականացումից:

Անդրադառնալով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի վերաբերյալ Եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին (այն է՝ պատասխանող կողմին պատկանող գույքի կամ դրամական միջոցների վրա հայցագնի չափով արգելանք դնելը պետության կողմից միջամտություն է մասնավոր անձի սեփականությանը, սեփականության օգտագործման նկատմամբ պետության վերահսկողության դրսևորում

է)՝ պատասխանողն արձանագրում է, որ պետության կողմից անձի սեփականությանը միջամտությունը տվյալ դեպքում նախատեսված է ներպետական օրենսդրությամբ. որպես իրավական պետություն՝ Հայաստանի Հանրապետությունն ունի պարտավորություն՝ երաշխավորել իրավունքի գերակայությունը, դրա բաղկացուցիչ մաս հանդիսացող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի կատարումը և հայցի ապահովման միջոցների կիրառումը: Այլ կերպ ասած՝ որպես իրավական պետություն, նպատակ ունենալով ապահովելու իրավունքի գերակայությունը, հայցի ապահովման միջոցը միտված է պաշտպանել հայցվորի օրինական շահերն այն դեպքերից, երբ այդպիսի միջոցները չկիրառելն անհնարին կարող է դարձնել դատական ակտի կատարումը:

Պատասխանողը գտնում է, որ հայցի ապահովման կիրառման արդյունքում անձի հիմնարար իրավունքների և ազատությունների հնարավոր սահմանափակումների օրինականությունն անհրաժեշտ է ուսումնասիրել Սահմանադրության 78-րդ հոդվածում ամրագրված համաչափության սկզբունքի սահմաններում: Նա փաստում է, որ հայցի ապահովման միջոցների կիրառման արդյունքում պատասխանող կողմի հիմնական իրավունքների հնարավոր միջամտությունը չի խաթարում համաչափության սկզբունքի էությունը, ուստի սահմանադրական իրավունքների անօրեն սահմանափակման մասին խոսք լինել չի կարող:

Պատասխանողը հավելում է նաև, որ հայցի ապահովման ինստիտուտը կիրառելիս երաշխավորվում է հայցվորի՝ հատուցում ստանալու սահմանադրական իրավունքի իրացումը: Ըստ պատասխանողի՝ Օրենսգրքով սահմանված են բավարար կարգավորումներ, որոնց հիման վրա արդարադատություն իրականացնող մարմինը հնարավորություն է ստանում ստուգել հայցի ապահովման միջոցների կիրառման վերաբերյալ միջնորդության հիմքերի ամկայությունը կամ բացակայությունը, իսկ անհիմն միջնորդության դեպքում՝ մերժել այն:

Միաժամանակ, պատասխանողը գտնում է, որ Օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասը և 134-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում են Սահմանադրությանը:

3. Գործի շրջանակներում պարզելու ենթակա հանգամանքները

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում վիճարկվող դրույթներն անհրաժեշտ է դիտարկել հայցի ապահովման միջոց կիրառելու վերա-

բերյալ օրենսդրական կարգավորումների որոշակիության, այդ թվում՝ հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքերի համատեքստում հայցագնի հիմնավորվածության և դրա վերաբերյալ համապատասխան ապացույցներ ներկայացնելու պահանջի օրենսդրական ամրագրման տեսանկյունից:

Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ սույն գործի շրջանակում Օրենսգրքի վիճարկվող նորմերի սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել.

1) վիճարկվող դրույթներով ամրագրված իրավակարգավորումները համահունչ են արդյոք իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին,

2) վիճարկվող դրույթներով ամրագրված իրավակարգավորումների պայմաններում պահպանվում են արդյոք սեփականության իրավունքի սահմանափակման սահմանադրական չափանիշները,

3) հայցի ապահովման կիրառման արդյունքում անձի հիմնարար իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցներն արդյոք ք պիտանի և անհրաժեշտ են Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար,

4) վիճարկվող իրավակարգավորումների պայմաններում առկա՞ է արդյոք օրենսդրական բաց պայմանավորված հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքերի շարքում հայցագնի հիմնավորվածությունը հավաստող ապացույցներ ներկայացնելու օրենսդրական պահանջի բացակայությամբ:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև Դիմողի ներկայացրած դիրքորոշումներն առնչվում են հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքերի (հոդվ. 128, մաս 1) և հայցի ապահովման միջոցի վերացման (հոդվ. 134, մաս 2) սահմանադրականության խնդրին, սույն գործով ներկայացված դատական ակտերի ուսումնասիրման արդյունքում Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ բարձրացված խնդիրը վերաբերում է Օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված հետևյալ ձևակերպմանը՝ «Առաջին ատյանի դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կիրառում է հայցի ապահովման միջոցներ, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել, դժվարացնել դատական ակտի կատարումը...»: Ուստի սույն որոշմամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրա-

դառնալ 128-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված վերոնշյալ իրավակարգավորումների սահմանադրականությանը, որոնք անմիջականորեն վերաբերելի են նաև 134-րդ հոդվածի 2-րդ մասին:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Օրենսգրքի «Հայցի ապահովումը» վերտառությամբ 13-րդ գլխում ներկայացվում են կարգավորումներ ինչպես հայցի ապահովման միջոցներ կիրառելու հիմքերի, հայցի ապահովման միջոցների, դրանք կիրառելու մասին միջնորդություն ներկայացնելու և այդ միջնորդությունը քննելու կարգի, այնպես էլ հայցի ապահովման միջոցի վերացման, հակընդդեմ ապահովման վերաբերյալ:

Հայցի ապահովման որպես դատավարական ինստիտուտի նշանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այն դիտարկվում է մի կողմից՝ օրենսդրությամբ նախատեսված անձանց իրավունքների պաշտպանության երաշխիքներից մեկը, որով պաշտպանվում են հայցվորի օրինական շահերն այն դեպքերից, երբ պատասխանողը կարող է գործել անբարեխիղճ, կամ երբ այդպիսի միջոցները չկիրառելն անհնարին կարող է դարձնել դատական ակտի կատարումը, իսկ մյուս կողմից՝ որպես դատարանի կողմից կատարվող դատավարական գործողություն, այն հետապնդում է գործով կայացվելիք վճռի կատարման երաշխիքներ ապահովելու նպատակ:

Այսինքն՝ հայցի ապահովումը կոչված է դատարանի կողմից նախապես ձեռնարկվող միջոցներով պաշտպանել գործին մասնակցող անձանց իրավունքները և օրինական շահերը հնարավոր բացասական հետևանքներից և ուղղված է վերջիններիս խախտված իրավունքների իրական ու ամբողջ ծավալով վերականգնելուն՝ դրանով իսկ ապահովելով արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի անխոչընդոտ իրացումը:

Օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորումների վերլուծությունից հետևում է, որ դատարանի կողմից հայցի ապահովման միջոցներ կիրառվում են հետևյալ դեպքերում. ա) եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել դատական ակտի կատարումը, բ) դժվարացնել դատական ակտի կատարումը, գ) հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի փաստացի կամ իրավական վիճակի փոփոխության, դ) էական վնաս հասցնել միջնորդություն ներկայացնող անձին: Վիճարկվող նորմը նաև կանխորոշում է այն անձանց շրջանակը, որոնց նախաձեռնությամբ քննարկվում է հայցի ապահովման անհրաժեշտու-

թյունը: Օրենսգրքի 130-րդ հոդվածով էլ սահմանվում են դատավարության այն փուլերը, որոնց ընթացքում կարող է ներկայացվել հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը:

Հայցի ապահովման միջոց կիրառելու վերոնշյալ հիմքերի վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հայցի ապահովման էությունն ու նշանակությունը հանգում է հայցվորի պահանջի բավարարման դեպքում դրա պատշաճ կատարմանը, որը

1) դրսևորվում է կոնկրետ դրամական պահանջի կատարումն ապահովելով,

2) որոշակի գործողություններ կատարելը արգելելով,

3) վեճի առարկա հանդիսացող գույքը պահպանելով, որոնցով պայմանավորված էլ սահմանվել են հայցի ապահովման տարբեր միջոցներ:

Ինչ վերաբերում է հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդության քննության կարգին, ապա օրենսդրորեն սահմանվում է, որ այն քննության է առնվում առանց դատական նիստ հրավիրելու ոչ ուշ, քան այն ստանալու հաջորդ օրը, իսկ եթե ներկայացվել է հայցադիմումի հետ, ապա հայցադիմումը վարույթ ընդունելու հետ մեկտեղ:

Նշված իրավակարգավորումից հետևում է, որ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդության քննության համար օրենսդիրը սահմանել է բավականին սեղմ ժամկետ, ինչն ինքնանպատակ չէ, և պայմանավորված է այն հանգամանքով, որ հայցի ապահովման միջոց կիրառելու գործընթացի երկարաձգումը կարող է պարզապես իմաստագրկել հայցի ապահովման միջոցի կիրառումը (օր.՝ այդ ընթացքում կարող են անհետանալ դրամական միջոցները կամ այն գույքը, որի պահպանմանն էր ուղղված հայցի ապահովումը):

Այս կապակցությամբ դատարանը նշում է, որ հայցի ապահովման միջոց կիրառելու համար նախատեսվել են այնպիսի օրենսդրական հիմքեր, որոնց առկայությունը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է գնահատի դատարանը, և որոնց փաստումը որևէ պարագայում չի կարող անխուսափելիորեն հանգեցնել հայցվորի պահանջի բավարարմանը կամ գործի ըստ էության քննությանը և լուծմանը: Դրանք ուղղված են հայցվորի պահանջի հնարավոր բավարարման դեպքում դատական ակտի պատշաճ կատարումն ապահովելուն:

4.2. Անդրադառնալով դիմողի այն դիրքորոշմանը, որ նման իրավակարգավորումները ձևակերպման առումով որոշակի ու հստակ չեն և կարող են հանգեցնել կամայական կիրառման, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավական որոշակիության սկզբունքն ինքնին պահանջում է մասնավորապես իրավական օրենքի առկայություն, որը պետք է լինի հնարավորինս հստակ ու որոշակի և հնարավորություն տա դրա հասցեատերերին ձևավորելու ու դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Միաժամանակ, վերահաստատելով իրավական որոշակիության վերաբերյալ արտահայտած դիրքորոշումները Սահմանադրական դատարանը վիճարկվող դրույթների սահմանադրականության գնահատման տեսանկյունից կարևորում է, որ ա) իրավական օրենքը «... պետք է լինի բավականաչափ մատչելի իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում» (ՄԴՈ-753), բ) «Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը» (ՄԴՈ-753), գ) «... իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության» (ՄԴՈ-1176):

Իրավական որոշակիության վերաբերյալ մի շարք դիրքորոշումներ արտահայտել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, մասնավորապես, Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի գործով (Case of Busuioc v. Moldova, Application no. 61513/00, 21/12/2004) վճռում գտել է, որ «օրենքով նախատեսված» արտահայտության պահանջներից մեկն այն է, որ համապատասխան միջոցը պետք է լինի կանխատեսելի: Նորմը չի կարող համարվել «օրենք», քանի դեռ ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որպեսզի անձին հնարավորություն տա կարգավորելու իր վարքագիծը. անձը պետք է կարողանա տվյալ հանգամանքներում ողջամիտ կերպով կանխատեսել իր՝ տվյալ գործողության հետևանքները: Այդ հետևանքները չեն կարող կանխատեսելի լինել բացարձակ որոշակիությամբ: Թեև օրենքում որոշակիությունն առավել ցանկալի է, դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հար-

մարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են, և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, չնայած օրենսդրական կարգավորումների որոշակիության պահանջին, դրանք չեն կարող նախատեսել իրավահարաբերության բոլոր մանրամասները, քանի որ կոնկրետ իրավահարաբերության բնույթով պայմանավորված մի շարք հանգամանքներ պետք է իրենց մեկնաբանությունն ստանան հենց դատական քննության ընթացքում: Դա է պատճառը, որ Սահմանադրական դատարանն իր 03.05.2016 թ. ՄԴՈ-1270 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: (...) օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով»:

Միաժամանակ, հայցի ապահովման էության բացահայտման համատեքստում անհրաժեշտ է հստակորեն նախանշել այն բոլոր պայմանները, որոնք անհրաժեշտ են հայցի ապահովում կիրառելու համար, քանի որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում դրանք կախված են գործով ներկայացված հանգամանքներից:

Հաշվի առնելով վերոգրյալը Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթներով ամրագրված իրավակարգավորումները համահունչ են իրավական որոշակիության սկզբունքին, հստակ և որոշակի նախատեսում են այն հիմքերը, որոնց առկայության դեպքում դատարանը պետք է բավարարի հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը, իսկ թե ո՞ր հանգամանքներն են ներառվում այդ հիմքերի մեջ, օբյեկտիվորեն հնարավոր չէ սպառիչ նախատեսել օրենքով: Այդ իմաստով, հնարավոր չէ օրենսդրությունը կառուցել այն տրամաբանությամբ, որ դրանում առկա չլինեն գնահատողական կատեգորիաներ, մեկնաբանման ենթակա եզրույթներ կամ ձևակերպումներ, սակայն դա չի կարող հանգեցնել իրավական անորոշության, քանի որ այդպիսի ձևակերպումներն իրենց մեկնաբանությունն ու հստակեցումն են ստանում արդեն դատարանի կողմից կոնկրետ գործի հանգամանքների հաշվառմամբ և գնահատվում են դատարանի իրավակիրառ հայեցողության լիազորությունների իրականացման շրջանակներում:

Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրորեն ամրագրված հիմքերից որևէ մեկի առկայության կամ բացակայության հարցի գնահատումը դատարանի կողմից պետք է լինի հնարավորինս հստակ, որոշակի և հիմնավորված: Մասնավորապես, տվյալ դեպքում դատական ակտի կատարումը դժվարացնելու կամ անհնարին դարձնելու հանգամանքը դատարանի կողմից պետք է ստանա համարժեք հիմնավորում, լինի պատճառաբանված, գործի հանգամանքներով փաստարկված, որպեսզի մյուս կողմի համար հստակ և որոշակի լինեն իր սեփականության ժամանակավոր սահմանափակման պատճառներն ու հիմքերը:

4.3. Հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքերի սահմանադրականության հարցը Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում դիտարկել նաև սեփականության իրավունքի պաշտպանության, ինչպես նաև դրա սահմանափակման համար նախատեսված ինչպես սահմանադրական, այնպես էլ միջազգային իրավական չափանիշների համատեքստում:

Սահմանադրության՝ «Սեփականության իրավունքը» վերտառությամբ 60-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք: Նույն հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Անդրադառնալով սեփականության իրավունքի սահմանափակման խնդրին՝ Սահմանադրական դատարանն իր 2017 թվականի հունվարի 31-ի ՍԴՈ-1340 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է սեփականության իրավունքի սահմանափակման հնարավորություն, ըստ որի՝ այդ իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով, հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով, այդ սահմանափակումը պետք է համապատասխանի որոշակիության և համաչափության սահմանադրական սկզբունքներին և չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները: Ընդ որում, նույն որոշման մեջ Սահմանադրական դատարանը

րանը կարևորել է հիշատակված պայմանների առկայությունը՝ իրավունքն իրավաչափ սահմանափակելու համար:

Կոնկրետ հայցի ապահովման համար կիրառվող ապահովման միջոցների տեսակը և բովանդակությունը որոշելիս դատարանը պետք է հիմք ընդունի նաև համաչափության սկզբունքը: Ինչպես բխում է Սահմանադրության 78-րդ հոդվածից՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Նշված հիմնարար ու ելակետային գաղափարը հաշվի առնելով՝ օրենսդիրը Օրենսգրքի 129-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանել է, որ հայցի ապահովման միջոցը պետք է համաչափ լինի ներկայացված պահանջին և հայցի ապահովմամբ հետապնդվող նպատակին:

Միաժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր բազմաթիվ վճիռներում նույնպես անդրադարձել է սեփականության իրավունքին՝ արձանագրելով, որ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը, հռչակելով սեփականության իրավունքը, միաժամանակ նախատեսում է սեփականության իրավունքի սահմանափակման հնարավորություն ի շահ հանրության, եթե այդ սահմանափակումը նախատեսված է օրենքով և միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով և ընդհանուր շահերին համապատասխան սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ ինչ հիմքով էլ տեղի ունենա միջամտությունը սեփականության իրավունքին, դա կարող է արդարացված լինել բացառապես այն դեպքերում, երբ իրականացվել է ի շահ հանրության: Այդ հիմնավորմամբ պայմանավորված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ միջամտությունն արդարացված լինելու համար պետք է հետապնդի օրինաչափ նպատակ և լինի համաչափ, այսինքն՝ պետք է ապահովված լինի արդար հավասարակշռություն հասարակության ընդհանուր շահերի և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև (Beyeler v. Italy, 5 January 2000, §98, §107; Sporrong and Lonroth v. Sweden, 23 September 1982, § 61, § 69 և այլն):

Վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում հայցի ապահովման միջոց կիրառելու օրենսդրական հնարավորություն նախատեսվել է այն ան-

ձանց իրավունքների պաշտպանությունն ապահովելու և երաշխավորելու համար, որոնք տարբեր պահանջներով դիմել են դատարան ակնկալելով իրենց խնդիրների լուծում, սակայն, կախված հանգամանքներից կան ռիսկեր, որոնք կարող են դժվարացնել կամ անհնարին դարձնել դատական ակտի կատարումը, այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջանում ձեռնարկել լրացուցիչ քայլեր, որոնք կապահովեն հետագայում կայացված դատական ակտի պատշաճ կատարումը: Ուստի նման ինստիտուտի նախատեսումն ինքնին իրավաչափ և ընդունելի է պայմանով, որ առկա են համարժեք և բավարար հիմքեր մյուս կողմի իրավունքները և ազատությունները մինչև դատական ակտի կայացումը սահմանափակելու համար:

Որպեսզի դատարանը բավարարի հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը, պետք է միջնորդությամբ ներկայացված հանգամանքների լույսի ներքո համոզվի, որ նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել համապատասխան դատական ակտի պատշաճ կատարումը՝ հայցվորի պահանջը բավարարելու դեպքում:

Մինևույն ժամանակ, հարկ է արձանագրել, որ հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծելու փուլում, կոնկրետ գործի բարդությամբ կամ այլ առանձնահատկություններով պայմանավորված, ոչ միշտ է հնարավոր հայցադիմումի հիմնավորվածության կամ ակնկալվող եզրափակիչ դատական ակտի մասին թեկուզև նախնական կամ prima facia եզրահանգումներ կատարել: Դատավարական այդ փուլում դատարանն օբյեկտիվորեն կարող է չտիրապետել նշված եզրահանգման համար անհրաժեշտ և բավարար այն տեղեկատվությանը, որը նրա ողջամիտ ենթադրությամբ կարող է դիտարկվել որպես իրականության մեջ գոյություն ունեցող տեղեկություն, սակայն որը ձեռքբերելն առանձին դեպքերում ենթադրում է լրացուցիչ դատավարական գործողություններ, որոնց իրականացման վրա ծախսված ժամանակը կարող է բացասաբար անդրադառնալ ակնկալվող ժամկետից ավելի ուշ կիրառված հայցի ապահովման միջոցի արդյունավետության վրա:

Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ ինչպես հայցի ապահովման միջոց կիրառելու, այնպես էլ հայցի ապահովման միջոցի լրիվ կամ մասնակի վերացնելու մասին միջնորդությունը կարող են ներկայացվել ընդհուպ մինչև գործով դատաքննության ավարտը, որի պարագայում դատարանն առավել տեղեկացվածության պայմաններում կարող է

վերստին անդրադառնալ կիրառված (կամ կիրառվելիք) հայցի ապահովման միջոցի արդյունավետության հարցին: Սա դատավարական կարևոր երաշխիք է՝ գործով կողմերի իրավունքների ու դատավարական հնարավորությունների հավասարակշռման առումով:

Միննույն ժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործին մասնակցող անձի ներկայացրած պահանջը դատարանի կողմից բավարարվելու դեպքում դատական ակտի կատարման անհնարինությունը կամ ցածր հավանականությունը իմաստագրվում են անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի իրականացումը, քանի որ այդ իրավունքների իրականացման արդյունքում ակնկալվող նպատակին անձն այդպես էլ չի հասնում: Սահմանադրական դատարանը, 10.03.2016 թ. ՄԴՈ-1257 որոշմամբ վերահաստատելով նախորդ մի շարք որոշումներում (մասնավորապես՝ ՄԴՈ-1127, ՄԴՈ-1190 և ՄԴՈ-1222) արդար դատաքննության և դատարանի մատչելիության իրավունքների առնչությամբ իր արտահայտած իրավական դիրքորոշումները, գտել է, որ «... որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրվել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ...»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում բազմիցս նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով յուրաքանչյուրի համար ապահովվում է իր քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող ցանկացած պահանջ դատարանի կամ տրիբունալի առջև ներկայացնելու իրավունքը: «Այդպիսով, այն ներառում է «դատարան՝ դիմելու իրավունքը», որում մատչելիության իրավունքը, այսինքն՝ դատարանում քաղաքացիական գործերով վարույթ հարուցելու իրավունքը, դրա մի մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքն անիրական կլիներ, եթե Պայմանավորվող պետության ներպետական իրավական համակարգը թույլ տար, որ վերջնական, պարտադիր դատական որոշումը մնար չգործող ի վնաս կողմերից մեկի: Անընդունելի կլիներ, որ հարկավոր լիներ 6-րդ հոդվածի 1-ին կետով մանրամասն նկարագրել դատավարության մասնակիցներին տրամադրվող ընթացակարգային երաշխիքները՝ վարույթ, որն արդար, հրապարակային և արագացված է՝ առանց դատական որոշումների իրականա-

ցումը պաշտպանելու: 6-րդ հոդվածը, որպես բացառապես դատարանի մատչելիությանը և վարույթի իրականացմանը վերաբերող մեկնաբանելը, հավանաբար կտաներ օրենքի գերակայության սկզբունքի հետ անհամատեղելի իրավիճակների, որը պայմանավորվող երկրները Կոնվենցիան վավերացնելիս պարտավորվել են ապահովել: Այսպիսով, 6-րդ հոդվածի նպատակներից ելնելով որևէ դատարանի կողմից կայացված վճռի կատարումը պետք է համարվի «դատավարության» անբաժանելի մաս» (տե՛ս Հորնսբին ընդդեմ Հունաստանի [Hornsby v. Greece], 1997 թվականի մարտի 19, § 40, ՎՃիռների և որոշումների մասին գեկույցներ 1997-II, և Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի [Burdov v. Russia], թիվ 59498/00, § 34, ՄԻԵԴ 2002-III):

Վերոգրյալից հետևում է, որ բոլոր այն դեպքերում, երբ գործի հանգամանքները թույլ են տալիս եզրակացնել, որ պահանջի բավարարման դեպքում դատական ակտի կատարումն անհնարին կամ դժվար է լինելու՝ իմաստագրվելով այն ողջ գործընթացի տրամաբանությունը, որով անցել է անձը դատարան դիմելու և իր պահանջի բավարարում ստանալու համար, հայցի ապահովման միջոց կիրառելը իրավաչափ է և ընդունելի: Այլ է հարցը, թե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում օրենսդրությամբ նշված հիմքերի առկայության կամ բացակայության հարցը գնահատելիս դատարանն ի՞նչ տրամաբանությամբ և ի՞նչ սկզբունքներով է առաջնորդվում:

Այս առումով Սահմանադրական դատարանը գտնում է, որ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն քննելիս դատարանը պետք է հաշվի առնի այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝ *prima facie* հայցագնի հիմնավորվածությունը (դրամական պահանջների դեպքում), որոշակի գործողությունների կատարման կամ դրանցից ձեռնպահ մնալու անհրաժեշտության հիմնավորվածությունը (գործողություններ կատարելը պարտավորեցնելու կամ արգելելու դեպքերում), գույքի նկատմամբ ունեցած իրավունքների հավաստումը (գույքի իրացումը կասեցնելու կամ գույքի վրա արգելանք դնելու դեպքերում):

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը քննելիս դատարանը պետք է առաջնորդվի վերոնշյալ հանգամանքների հաշվառմամբ, ինչպես նաև այնպիսի այլ հանգամանքների ուսումնասիրմամբ, որոնք անհրաժեշտ և բավարար կլինեն հայցի ապահովման միջոց կիրառելու օրենսդրական հիմքերի առկայության հաստատման համար: Սահմանադրական դատարանը նաև

զտնում է, որ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարելու դեպքերում վերոնշյալ հանգամանքների հավաստման, հայցի ապահովման միջոց կիրառելու անհրաժեշտության և դրա հիմքի առկայության հանգամանքները պետք է հստակ հիմնավորվեն դատարանի որոշմամբ:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել նաև, որ բացի հայցագնի հիմնավորվածության ստուգումից դատարանը հայցի ապահովում կիրառելիս պետք է ուշադրության արժանացնի նաև պատշաճ կողմերի առկայության խնդրին: Այսպես, Օրենսգրքի 172-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Դատարանը, մինչև նախնական դատական նիստի ավարտը պարզելով, որ հայցը հարուցվել է ոչ այն անձի դեմ, որը պետք է պատասխանի այդ հայցով, կարող է հայցվորի համաձայնությամբ թույլ տալ, որ պատասխանողը փոխարինվի պատշաճ պատասխանողով»: Ոչ պատշաճ պատասխանողին փոխարինելուց հետո դատարանն իրականացնում է Օրենսգրքի 167-րդ հոդվածով նախատեսված դատավարական գործողությունները, այդ թվում նաև հայցի ապահովման հարցի լուծումը: Ինչ վերաբերում է դիմողի այն դիրքորոշմանը, որ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ առկա իրավակարգավորումների պայմաններում չեն ապահովվում մյուս կողմի իրավունքների սահմանափակումներն անհիմն պահանջներից, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրությամբ նախատեսված են իրավակարգավորումներ ինչպես հայցի ապահովման միջոցը վերացնելու միջնորդությամբ դիմելու հնարավորության, այնպես էլ հակընդդեմ ապահովման վերաբերյալ: Ուստի անձը, որի դեմ կայացվել է հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշում, դրա անհիմն լինելու դեպքում կարող է իր դիրքորոշումներն ու անհամաձայնությունը ներկայացնել կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնելու պահանջով, իսկ հնարավոր վնասների հատուցման համար կարող է ներկայացնել հայցի ապահովման միջնորդություն ներկայացրած գործին մասնակցող անձից ապահովում (հակընդդեմ ապահովում) պահանջելու վերաբերյալ միջնորդություն:

4.4. Անդրադառնալով դիմողի այն դիրքորոշմանը, որ վիճարկվող իրավակարգավորումների պայմաններում առկա է օրենսդրական բաց պայմանավորված այն իրողությամբ, որ հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքերի շարքում բացակայում է հայցագնի հիմնավորվածությունը հավաստող ապացույցներ ներկայացնելու

օրենսդրական պահանջը և մի շարք այլ նվազագույն պայմաններ, Սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը.

Սահմանադրական դատարանն իր՝ 08.04.2014 թ. ՍԴՈ-1143 որոշմամբ նշել է. «...Օրենսդրական բացն առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքությունն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը»:

Իր մեկ այլ՝ 05.02.2010 թ. ՍԴՈ-864 որոշմամբ Սահմանադրական դատարանը փաստել է. «Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»:

Զարգացնելով հիշատակված իրավական դիրքորոշումը՝ Սահմանադրական դատարանն իր՝ 14.09.2010 թ. ՍԴՈ-914 որոշմամբ արձանագրել է. «Օրենսդրական բացի սահմանադրականության հարց քննելիս սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե տվյալ օրենսդրական բացը հանդիսանում է իրավակարգավորման թերությունը, թե՛ իրավաստեղծ մարմինը նման իրավակարգավորում սահմանելիս հաշվի է առել օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայությունը և ակնկալել այդ իրավական երաշխիքների հիման վրա համապատասխան իրավակիրառական պրակտիկայի ձևավորումը: ... օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա

չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանի քննությանը»:

Հիշյալ իրավական դիրքորոշման տրամաբանությունից հետևում է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ Սահմանադրական դատարանի քննության առարկա այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու իրավական երաշխիքներ, մինչդեռ տվյալ դեպքում օրենսդրությամբ հստակ նշված են հայցի ապահովում կիրառելու հիմքերը, որոնք հայցի ապահովման ինստիտուտի էությամբ պայմանավորված չեն կարող լինել բացարձակ հստակ և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում դատարանի կողմից պետք է ստանան համարժեք մեկնաբանություն և հստակեցում:

Բացի դրանից, Օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորման բովանդակությունից հետևում է, որ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը պետք է պարունակի հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքի առկայության վերաբերյալ հիմնավորումներ և նշում հայցի ապահովման միջոցի կամ միջոցների մասին: Իսկ Օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ եթե հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը չի համապատասխանում սույն օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին, ապա այն դատարանի կողմից չի քննվում, որի մասին միջնորդությունը ներկայացրած անձը տեղեկացվում է ոչ ուշ, քան հաջորդ օրը:

Հիշատակված իրավակարգավորումների համակարգային վերլուծության արդյունքների հիման վրա Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրությամբ արդեն իսկ նախատեսված են բավարար երաշխիքներ՝ հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքերի, դրանց հիմնավորվածության և մյուս կողմի իրավունքներն անհիմն չարաշահումներից զերծ պահելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանը»:

րանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

24 նոյեմբերի 2020 թվականի
ՄԴՈ-1561



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-ԻՆ ԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՆ ՀԱՅՏԱԳՐԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՁԵՎՈՎ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-Ի՝ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԵՎ ԴՐԱՆ ԿԻՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ՝ ՌԵԶԻԴԵՆՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

1 դեկտեմբերի 2020թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմայանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Կառավարության ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետու-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՑԵՂԵԿՎԱԳԻՐ ♦ 3-4(99-100)2020

թյան պետական եկամուտների կոմիտեի նախագահ Է. Հովհաննիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 23 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի օգոստոսի 22-ին և 2018 թվականի նոյեմբերի 1-ին հայտագրերի փոխանակման ձևով ստորագրված «2006 թվականի նոյեմբերի 6-ի Ղազախստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիայի և դրան կից արձանագրության շրջանակներում Ղազախստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինների կողմից տրված՝ ռեզիդենտությունը հաստատող պաշտոնական փաստաթղթերի ճանաչման կարգի վերաբերյալ» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր 2020 թվականի հունվարի 30-ի N 75-Ս որոշմամբ «2018 թվականի օգոստոսի 22-ին և 2018 թվականի նոյեմբերի 1-ին հայտագրերի փոխանակման ձևով ստորագրված «2006 թվականի նոյեմբերի 6-ի Ղազախստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիայի և դրան կից արձանագրության շրջանակներում Ղազախստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինների կողմից տրված՝ ռեզիդենտությունը հաստատող պաշտոնական փաստաթղթերի ճանաչման կարգի վերաբերյալ» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի սեպտեմբերի 4-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2020 թվականի սեպտեմբերի 4-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոհիշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «2006 թվականի նոյեմբերի 6-ի՝ Ղազախստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիայի և դրան կից արձանագրության շրջանակներում Ղազախստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինների կողմից տրված՝ ռեզիդենտությունը հաստատող պաշտոնական փաստաթղթերի ճանաչման կարգի վերաբերյալ» համաձայնագիրը (Համաձայնագիր) Ղազախստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև հայտագրերի փոխանակման ձևով ստորագրվել է համապատասխանաբար 2018 թվականի օգոստոսի 22-ին և 2018 թվականի նոյեմբերի 1-ին:

2006 թվականի նոյեմբերի 6-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների Մահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ որոշումը Մահմանադրական դատարանն ընդունել է 2007 թվականի ապրիլի 17-ին (ՄԴՈ-695) և այդ կոնվենցիան վավերացվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2007 թվականի հոկտեմբերի 4-ին (Ն-019-3 որոշում):

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, ստանձնում է պարտավորություն, մասնավորապես, Ղազախստանի Հանրապետության լիազոր մարմնի կողմից տրված և նրա զինանշանի պատկերն ունեցող կնիքով ամրագրված փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության տարածքում ընդունել առանց որևէ հատուկ հավաստման, այդ թվում՝ ապոստիլի կամ հյուպատոսական օրինականացման և այդպիսի փաստաթղթերին, որոնք Ղազախստանի Հանրապետության տարածքում դիտարկվում են որպես պաշտոնական, Հայաստանի Հանրապետության տարածքում տալ պաշտոնական փաստաթղթերի ապացուցողական ուժ:

Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է պարտավորություն նաև ճանաչման տվյալ կարգը կիրառել Ղազախստանի Հանրապետության լիազոր մարմինների կողմից 2012 թվականի հունվարի 1-ից տրված պաշտոնական փաստաթղթերի նկատմամբ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 3-4(99-100)2020

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին և, ի թիվս այլնի, նպատակաուղղված են «2006 թվականի նոյեմբերի 6-ի Ղազախստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիայի և դրան կից արձանագրության շրջանակներում պաշտոնական փաստաթղթերի ճանաչման հարցերով համագործակցության արդյունավետ և պարզեցված կառուցակարգ ստեղծելուն:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2018 թվականի օգոստոսի 22-ին և 2018 թվականի նոյեմբերի 1-ին հայտագրերի փոխանակման ձևով ստորագրված «2006 թվականի նոյեմբերի 6-ի Ղազախստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիայի և դրան կից արձանագրության շրջանակներում Ղազախստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինների կողմից տրված՝ ռեզիդենտությունը հաստատող պաշտոնական փաստաթղթերի ճանաչման կարգի վերաբերյալ» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

1 դեկտեմբերի 2020 թվականի
ՍԴՈ-1562



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-ԻՆ ՄՈՍԿՎԱ ՔԱՂԱՔՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԵՎ
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

1 դեկտեմբերի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմայանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2020 թվականի փետրվարի 3-ին Մոսկվա քաղաքում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության ապրանքային նշանների, սպասարկման նշանների և ապրանքների ծագման տեղանունների մասին» պայմանագրում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 3-4(99-100)2020

Կառավարությունն իր՝ 2020 թվականի օգոստոսի 27-ի N 1401-Ս որոշմամբ 2020 թվականի փետրվարի 3-ին Մոսկվա քաղաքում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության ապրանքային նշանների, սպասարկման նշանների և ապրանքների ծագման տեղանունների՝ մասին» պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Սահմանադրական դատարան է ներկայացվել 2020 թվականի սեպտեմբերի 4-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2020 թվականի սեպտեմբերի 4-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ պայմանագիրը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա այլ փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Պայմանագիրը ստորագրվել է 2020 թվականի փետրվարի 3-ին Մոսկվա քաղաքում՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) տարածքներում Եվրասիական տնտեսական միության ապրանքային նշանների, սպասարկման նշանների և ապրանքների ծագման տեղանունների իրավական պահպանությունն ապահովելու նպատակով:

2. Պայմանագրի կատարման համար պատասխանատու մարմինն է Էկոնոմիկայի նախարարությունը:

3. Պայմանագրով կարգավորվում են Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) ապրանքային նշանների, սպասարկման նշանների և ապրանքների ծագման տեղանունների գրանցման, իրավական պահպանության և օգտագործման կապակցությամբ ծագող հարաբերությունները, և Պայմանագիրը չի կիրառվում հավաստագրային և երաշխիքային նշանների, ինչպես նաև այն նիշերի նկատմամբ, որոնք չեն կարող ներկայացվել գրաֆիկական տեսքով:

Միության ապրանքային նշանի, սպասարկման նշանի և ապրանքի ծագման տեղանվան գրանցումը յուրաքանչյուր անդամ պետությունում ունի ապրանքային նշանի, սպասարկման նշանի և ապրանքի ծագման տեղանվան ազգային գրանցման ուժ:

4. Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքը գործում է Միության ապրանքային նշանների միասնական գրանցամատյանում այն գրանցելու թվականից մինչև 10 տարին լրանալը, որը հաշվարկվում է Միության ապրանքային նշանի հայտը ներկայացնելու թվականից: Բացառիկ իրավունքի գործողության ժամկետը կարող է ներկայացման գերատեսչության կողմից 10 տարով երկարաձգվել՝ Հրահանգով սահմանված կարգով այդ իրավունքի գործողության վերջին տարվա ընթացքում իրավատիրոջ կողմից ներկայացված դիմումի համաձայն:

Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի գործողության ժամկետը կարող է անսահմանափակ անգամ երկարաձգվել:

5. Պայմանագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները

5.1. երաշխավորել իրավատիրոջ բացառիկ իրավունքը անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան օգտագործելու Միության ապրանքային նշանը և տնօրինելու այդ բացառիկ իրավունքը, ինչպես նաև իրավատիրոջ իրավունքն այլ անձանց արգելելու նույնատիպ ապրանքների համար Միության ապրանքային նշանի կամ դրան շփոթելու աստիճան նման նիշի օգտագործումը (հոդված 3, կետ 1, պարբերություն 1),

5.2. արգելել առանց իրավատիրոջ թույլտվության նույնատիպ ապրանքների համար օգտագործելու անդամ պետությունների տարածքներում պահպանվող Միության ապրանքային նշանը կամ դրան շփոթելու աստիճան նման նիշը (հոդված 3, կետ 1, պարբերություն 2),

5.3. իրավատիրոջ միջնորդությամբ Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի գործողության ժամկետը լրանալուց հետո, նրան տալ 6 ամիս՝ Պայմանագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ նախադասությունում նշված դիմումը ներկայացնելու համար՝ Հայաստանի Հանրապետության ներկայացման գերատեսչության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափով լրացուցիչ տուրք վճարելու պայմանով (հոդված 3, կետ 3, պարբերություն 3),

5.4. Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի խախտման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսվել նույնպիսի պատասխանատվություն, ինչպիսին նախատեսված է Հայաստանի Հանրապետությունում

գրանցված ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի խախտման համար (հոդված 3, կետ 5),

5.5. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության ներկայացման գերատեսչությունը Միության ապրանքային նշանի հայտն ստանալու թվականից մեկ ամսվա ընթացքում ստուգի ներկայացված հայտի ձևակերպման և տուրքի վճարման ճշտությունը՝ Պայմանագրի 4-րդ հոդվածի և Հրահանգի պահանջներին համապատասխան, ինչպես նաև Միության ապրանքային նշանի հայտը ներկայացնելու թվականը սահմանելու համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների առկայությունը, այդ թվում՝ ապրանքների ցանկի կազմման ու դրանց դասակարգման ճշտությունը, ինչպես նաև ապահովել, որ հայտում Պայմանագրի 4-րդ հոդվածի 2-րդ կետում նշված տարրերից որևէ մեկի բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության ներկայացման գերատեսչությունը որոշում ընդունի Միության ապրանքային նշանի հայտի քննարկման համար ընդունումը մերժելու մասին (հոդված 6, կետեր 1 և 2),

5.6. ապահովել, որ Պայմանագրի 4-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերում նշված հայտի նյութերի սխալ ձևակերպման, կամ Պայմանագրի 4-րդ հոդվածի 4-րդ կետում նշված փաստաթղթի կամ Հրահանգով նախատեսված այլ փաստաթղթերի բացակայության կամ ոչ ճիշտ ձևակերպման դեպքում Հայաստանի Հանրապետության ներկայացման գերատեսչությունը հայտատուին հարցում ուղարկի՝ հարցումն ուղարկելու թվականից եռամսյա ժամկետում՝ պակասող փաստաթղթերը ներկայացնելու և (կամ) նշված թերությունները վերացնելու մասին (հոդված 6, կետ 3, պարբերություն 1),

5.7. ապահովել, որ հայտարկված նիշի փորձաքննությունն անցկացնելու համար տուրքերի վճարումը հաստատող փաստաթղթերն ստանալու թվականից 5 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության ներկայացման գերատեսչությունն այլ անդամ պետությունների ազգային արտոնագրային գերատեսչություններ ուղարկի Միության ապրանքային նշանի հրապարակված հայտը և հայտարկված նիշի փորձաքննությունն անցկացնելու համար տուրքերի վճարումը հաստատող փաստաթղթերը (հոդված 6, կետ 9),

5.8. երաշխավորել, որ Միության ապրանքային նշանի հրապարակված հայտը և հայտարկված նիշի փորձաքննությունն անցկացնելու համար տուրքերի վճարումը հաստատող փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության ներկայացման գերատեսչության

կողմից ուղարկվելու թվականից 6 ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության արտոնագրային գերատեսչությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ներկայացման գերատեսչության կողմից անցկացվի փորձաքննություն, որի ընթացքում կատուզվի Միության ապրանքային նշանի գրանցումը մերժելու համար Պայմանագրի 8-րդ հոդվածի 1-5-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությունը (հոդված 9, կետ 1),

5.9. երաշխավորել, որ հայտատուի միջնորդությունը ներկայացնելու և քննարկելու, ինչպես նաև ապրանքային նշանի գրանցման ազգային հայտի փորձաքննություն անցկացնելու համար տուրք չգանձվի (հոդված 9, կետ 9, պարբերություն 5),

5.10. ապահովել, որ Միության ապրանքային նշանի գրանցման մասին որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության ներկայացման գերատեսչությունը Միության ապրանքային նշանի գրանցման և Միության ապրանքային նշանի վկայագրի տրամադրման համար տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը հայտատուի կողմից ներկայացվելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում Միության ապրանքային նշանների միասնական գրանցամատյանում գրանցի Միության ապրանքային նշանը և տրամադրի Միության ապրանքային նշանի վկայագիրը (հոդված 13, կետ 1, պարբերություն 1),

5.11. ճանաչել Պայմանագրի 13-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ին պարբերության համաձայն ձևակերպված քաղվածքի հավասար իրավաբանական ուժը Հայաստանի Հանրապետության տարածքում (հոդված 13, կետ 5, պարբերություն 2),

5.12. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության արտոնագրային գերատեսչությունը ապրանքային նշանների միասնական գրանցամատյանում նշում կատարի Միության ապրանքային նշանը Միության ապրանքային նշանների միասնական գրանցամատյանում գրանցելու և նախորդող ազգային գրանցումն այդ գրանցմամբ փոխարինելու մասին առանց անդամ պետություններից յուրաքանչյուրում այդ նախորդող գրանցման ուժով ձեռք բերված իրավունքների ոտնահարման (հոդված 14, պարբերություն 3),

5.13. ապահովել, որ Միության ապրանքային նշանի իրավական պահպանությունը անվավեր չճանաչվի Պայմանագրի 15-րդ հոդվածին համապատասխան կամ չդադարեցվի Պայմանագրի 16-րդ հոդվածի 1-ին կետի 3-6-րդ ենթակետերով նախատեսված հիմքերով առանց ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքը պաշտպանելու համար իրավատիրոջը իր իրավունքներն այն ան-

դամ պետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում պաշտպանելու հնարավորություն տրամադրելու, որտեղ ներկայացվել է առարկությունը (բողոքը) կամ դիմումը (հոդված 16, կետ 4),

5.14. երաշխավորել Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի իրավաստիրոջ տնօրինման իրավունքը (հոդված 18, կետ 1),

5.15. չթույլատրել Միության ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի վկայագիր չունեցող անձանց կողմից Միության ապրանքի ծագման գրանցված տեղանվան օգտագործումը, նույնիսկ եթե այդ դեպքում նշվում է ապրանքի ծագման իսկական վայրը, կամ անվանումն օգտագործվում է թարգմանաբար, գրադարձված և տառադարձված կամ այնպիսի բառերի զուգակցմամբ, ինչպիսիք են «տեսակ», «տիպ», «ոճով», «եղանակ», «նմանակում», «մեթոդ» և նմանատիպ բառերը, ինչպես նաև նման նիշի օգտագործումը ցանկացած ապրանքի համար, որն ապրանքի ծագման վայրի և առանձնահատուկ հատկանիշների վերաբերյալ կարող է սպառողին մոլորության մեջ գցել (հոդված 22, կետ 2),

5.16. անդամ պետությունների հետ իրականացնել մինչև Պայմանագիրն ուժի մեջ մտնելը գրանցված ապրանքի ծագման տեղանունների համապատասխան հայկական գրանցամատյանների տեղեկությունները պարունակող ցանկերի փոխանակումը (հոդված 23, կետ 1),

5.17. Միության ապրանքային նշանի հայտերով և Միության ապրանքի ծագման տեղանվան հայտերով էլեկտրոնային գործավարության միասնական համակարգ ստեղծելու նպատակով ապահովել յուրաքանչյուր նման հայտի համար միասնական էլեկտրոնային գործ բացելու և արտոնագրային գերատեսչությունների տեղեկատվական փոխգործակցության համակարգ ստեղծելու համար անհրաժեշտ միջոցառումների կատարումը (հոդված 24, կետ 2),

5.18. սահմանել Պայմանագրին համապատասխան Միության ապրանքային նշանների և Միության ապրանքների ծագման տեղանունների գրանցման, իրավական պահպանության և օգտագործման դեպքում իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների տեսակները, ինչպես նաև իրավաբանական նշանակություն ունեցող այդ գործողությունների կատարման ժամանակ վճարվող տուրքերի չափերը՝ էլնելով Միության ապրանքային նշանների և Միության ապրանքների ծագման տեղանունների

գրանցման, իրավական պահպանության և օգտագործման դեպքում իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների տեսակների ցանկից և իրավաբանական նշանակություն ունեցող այդ գործողությունների կատարման համար տուրքերի դրույքաչափերից, որոնք հաստատվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի կողմից (հոդված 25, կետ 1),

5.19. Միության ապրանքային նշանների և Միության ապրանքների ծագման տեղանունների գրանցման, իրավական պահպանության և օգտագործման դեպքում իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների կատարման ժամանակ վճարվող տուրքերի չափերի առնչությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ փոփոխությունների կատարումն իրականացնել տուրքերի դրույքաչափերի փոփոխությունների հիման վրա, որոնք հաստատվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի կողմից (հոդված 25, կետ 2),

5.20. դիվանագիտական ուղիներով Եվրասիական տնտեսական հանձնաժողովին տեղեկացնել Պայմանագրի կատարման համար պատասխանատու պետական մարմինների (կազմակերպությունների) մասին (հոդված 29, կետ 2, պարբերություն 2),

5.21. Եվրասիական տնտեսական հանձնաժողովին գրավոր ծանուցել Պայմանագրի 25-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների տեսակները և տուրքերի չափերը Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ սահմանելու մասին (հոդված 29, կետ 3):

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Պայմանագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված միջազգային իրավունքի հիման վրա պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2020 թվականի փետրվարի 3-ին Մոսկվա քաղաքում ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական միության ապրանքային նշանների, սպասարկման նշանների և ապրանքների ծագման տեղանունների մասին» պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

1 դեկտեմբերի 2020 թվականի
ՍԴՈ-1563



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 93-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

1 դեկտեմբերի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
դիմողի՝ ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի

դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել է 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ին:

Օրենսգրքի՝ «Պաշտպանին և ներկայացուցչին գործով վարույթից հեռացնելը» վերտառությամբ 93-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է.

«Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված հիմքերով պաշտպանին հեռացնելը թույլատրվում է միայն պաշտպանյալի համաձայնությամբ»:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող իրավադրույթն ու դրա հետ փոխկապակցված օրենսդրական այլ նորմեր՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Դիմողի դիրքորոշումները և փաստարկները

Դիմողը նշում է, որ օրենսդիրը, որպես քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը բացառող հանգամանք, ի թիվս այլնի, դիտարկել է նաև **պաշտպանյալների շահերի միջև հակասության առկայությունը**: Պաշտպանին վարույթից հեռացնելու հարցը կարգավորվում է ինչպես Օրենսգրքի 93-րդ հոդվածի 2-րդ մասով, այնպես էլ 70-րդ հոդվածի 7-րդ մասով: Մինչդեռ, ի տարբերություն Օրենսգրքի 70-րդ հոդվածի 7-րդ մասի՝ 93-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխան հիմքով պաշտպանին վարույթից հեռացնելու համար նախատեսում է պայման, այն է՝ պահանջում է պաշտպանյալի համաձայնությունը: Դիմողը գտնում է, որ վերոնշյալ դրույթը հակասում է ինչպես Օրենսգրքի 70-րդ հոդվածի 7-րդ մասին, այնպես էլ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ պարբերության 1-ին կետին և նույն հոդվածի 4-րդ պարբերությանը: Դիմողի համոզմամբ՝ վիճարկվող դրույթը, հակասելով վերը նշված իրավական նորմերին, ոչ միայն ստեղծել է իրավական անորոշություն՝ դրանով իսկ առաջացնելով անհամապատասխանություն Սահմանադրության 79-րդ հոդվածի հետ, այլև այդպիսի իրավական նորմը վտանգում է ինչպես Սահմանադրու-

թյան 63-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր հանդիսացող գործի քննության արդարացիության պահանջն ու դրա մասը կազմող մրցակցության ու կողմերի միջև իրավահավասարության սկզբունքը, այնպես էլ Սահմանադրության 64-րդ հոդվածով երաշխավորված՝ պատշաճ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը:

Ամփոփելով իր դիրքորոշումները՝ դիմողը խնդրում է որոշել Օրենսգրքի 93-րդ հոդվածի 3-րդ մասի համապատասխանությունը Սահմանադրության 63-րդ, 64-րդ, 79-րդ հոդվածներին:

2. Պատասխանողի դիրքորոշումը

Պատասխանողը գտնում է, որ դատական պաշտպանության իրավունքը կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքների և դրանց իրականացման միջոցների այնպիսի ամբողջություն է, որն իրական հնարավորություն է տալիս պաշտպանելու վերջիններիս օրինական շահերը: Բացի անձանց օրինական շահերի պաշտպանության երաշխիք համարվելուց, այն նաև արդարադատության իրականացման կարևորագույն երաշխիք է:

Ըստ պատասխանողի՝ անձանց պաշտպանության իրավունքի մեջ ներառված իրավունքների շարքում իր առանցքային բնույթով առանձնանում է պաշտպան ունենալու իրավունքը: Պաշտպան ունենալու իրավունքն անձին վերապահված բոլոր իրավունքներից հիմնականն է, այն հանդես է գալիս որպես կասկածյալի կամ մեղադրյալի մնացած բոլոր իրավունքների իրականացման երաշխիք: Ուստի, քրեական իրավախախտում կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուրի՝ դատապաշտպանի կողմից արդյունավետորեն պաշտպանվելու իրավունքն արդար դատաքննության հիմնարար հատկանիշներից մեկն է:

Պատասխանողի գնահատմամբ՝ Օրենսգրքի 6-րդ հոդվածի 28-րդ կետի բովանդակությունից պարզ է դառնում, որ պաշտպանի դատավարական գործունեության նպատակներն են.

- կասկածյալի կամ մեղադրյալի պատասխանատվությունը բացառող կամ մեղմացնող, մեղադրանքը հերքող հանգամանքների պարզումը,

- կասկածյալին կամ մեղադրյալին իրավական օգնություն ցույց տալը և հասնելը նրանց համար առավել բարենպաստ դատավարական որոշումների կայացմանը կոնկրետ քրեական գործով:

Պատասխանողը հարկ է համարում ընդգծել, որ նույնաբնույթ նպատակներ են ամրագրված նաև Օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին

մասում: Ընդ որում, այդ նպատակների իրականացման համար պաշտպանի խնդիրներն են իր պաշտպանյալի հետ մշակելու պաշտպանության իրականացման ռազմավարությունը, որոշելու անհրաժեշտ դատավարական գործողությունների իրականացման և ապացույցների ձեռքբերման մեթոդներն ու միջոցները:

Պատասխանողը գտնում է, որ պաշտպան ունենալու իրավունքն անձին վերապահված բոլոր իրավունքներից կարևորագույններից մեկն է: Այս իրավունքի որպես անձի կարևորագույն իրավունքի հիմքում ընկած է այն կրողի ազատ կամարտահայտությունը՝ հրավիրելու կամ ընտրելու պաշտպան, որը ծագում է նրա նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու պահից: Պաշտպան ունենալու իրավունքը հանցագործություն կատարելու համար մեղադրվող յուրաքանչյուրի նվազագույն իրավունքն է:

Պատասխանողի գնահատմամբ՝ անձի կամարտահայտությունը՝ ուղղված անձամբ պաշտպան ընտրելուն, պաշտպանության իրավունքի իրականացման համար անվերապահ պայման է, ինչն ինքնանպատակ չէ, և դրա հիմքում ընկած է պաշտպանի և պաշտպանյալի միջև վստահության անհրաժեշտ մթնոլորտի ստեղծումը:

Ըստ Պատասխանողի՝ Օրենսգրքի 70-րդ հոդվածը կարգավորում է պաշտպանին քրեական վարույթին ներգրավելու ընդհանուր հիմունքները և սկզբունքները, իսկ 93-րդ հոդվածը՝ վերջինիս վարույթից հեռացնելու հիմքերը: Ուստի, վերոնշյալ դրույթները ոչ թե հակասում են միմյանց, այլ փոխլրացնում մեկը մյուսին: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը ևս հաստատում է, որ փաստաբանը կարող է իրավաբանական օգնություն ցույց տալ այն դեպքերում, երբ նա պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, և վերջինս տալիս է իր գրավոր համաձայնությունը: Այս դեպքում ևս պատասխանողը գտնում է, որ դիմողի կողմից բարձրացված կարգավորումների միջև հակասություններ չկան:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատասխանողն արձանագրում է, որ վիճարկվող դրույթը համապատասխանում է Սահմանադրության 63, 64 և 79-րդ հոդվածներին:

3. Գործի շրջանակներում պարզելու ենթակա հանգամանքները

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն սահմանադրաիրավական խնդրի շրջանակներում վիճարկվող դրույթն անհրաժեշտ է դիտարկել քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը բացառող հանգամանքների իրավական որոշա-

կիրության օրենսդրական երաշխավորման տեսանկյունից՝ այն իրողության հաշվառմամբ, որ քրեադատավարական օրենսդրությամբ այդ հարցը կարգավորվում է երկու առանձին դրույթներով, որոնցից մեկը նախատեսում է պաշտպանին վարույթից հեռացնելու հնարավորություն պաշտպանյալի համաձայնությամբ, իսկ մյուսը՝ ոչ:

Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ սույն գործի շրջանակում Օրենսգրքի վիճարկվող նորմի սահմանադրականությունը գնահատելիս Մահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել

1) վիճարկվող դրույթով ամրագրված իրավակարգավորումը դրա հետ փոխկապակցված մյուս իրավակարգավորումների հետ համադրման արդյունքում համահունչ է արդյոք իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին,

2) քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը բացառող հանգամանքների վերաբերյալ առկա իրավակարգավորումների պայմաններում պահպանվում է արդյոք անձի իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքը:

4. Մահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Հաշվի առնելով սահմանադրական և միջազգային իրավական կարգավորումների կարևորությունը և նշանակությունը հիմնական իրավունքների արդյունավետ պաշտպանության՝ հատկապես արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի և արդար դատաքննության իրավունքի իրացման և պաշտպանության հարցում՝ Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունը նախատեսում է ինչպես պաշտպան հրավիրելու, նշանակելու, փոխարինելու և վարույթին նրա **մասնակցելու այլ հիմքերը**, այնպես էլ քրեական գործով վարույթին պաշտպանի **մասնակցությունը բացառող** հանգամանքները:

Այսպես, Օրենսգրքի **«Պաշտպան հրավիրելը, նշանակելը, փոխարինելը և վարույթին՝ նրա մասնակցելու այլ հիմքերը»** վերտառությամբ 70-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանվում է, որ միննույն քրեական գործով մեկից ավելի կասկածյալները կամ մեղադրյալները կարող են ունենալ մեկ պաշտպան, բացառությամբ, ի թիվս այլոց, պաշտպանյալների **շահերի միջև հակասության առկայության դեպքի**: Իսկ Օրենսգրքի **«Պաշտպանին և ներկայացուցչին գործով վարույթից հեռացնելը»** վերտառությամբ 93-րդ հոդվածի 2-

րոյ մասով սահմանվում է, որ պաշտպանը չի կարող պաշտպանյալի կամ վստահորդի կողմից մասնակցել քրեական գործով վարույթին, եթե նա տվյալ գործով իրավաբանական օգնություն է ցույց տալիս կամ ցույց տվել այն անձին, **որի շահերը հակասում են պաշտպանյալի շահերին:**

Օրենսգրքի 70-րդ և 93-րդ հոդվածների համադրված ուսումնասիրության արդյունքներով Մահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի 70-րդ հոդվածի 7-րդ մասը և 93-րդ հոդվածի 2-րդ մասը վերաբերում են տարբեր իրավահարաբերությունների, և չպետք է դրանք նույնացնել:

Օրենսգրքի 93-րդ հոդվածը վերաբերում է պաշտպանին գործով վարույթից **հեռացնելու հիմքերին:** Դրանք են. ա) պաշտպանը գտնվում է ազգակցական կամ անձնական, ծառայողական կախվածության այլ հարաբերությունների մեջ այն պաշտոնատար անձի հետ, որը մասնակցում կամ մասնակցել է քրեական գործի քննությանը, բ) պաշտպանը գործին մասնակցել է որպես դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննության մարմնի աշխատակից, մասնագետ, փորձագետ կամ վկա, գ) պաշտպանն օրենքով կամ դատարանի դատավճռով իրավունք չունի լինելու փաստաբան, **դ) պաշտպանը, տվյալ գործով իրավաբանական օգնություն է ցույց տալիս կամ ցույց տվել այն անձին, որի շահերը հակասում են պաշտպանյալի շահերին,** ինչպես նաև այդ անձի հետ գտնվում է ազգակցական կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ: Ընդ որում, պաշտպանին գործով վարույթից հեռացնելու հիշյալ չորս հիմքերից միայն վերջինի կիրառման պարագայում է պահանջվում պաշտպանյալի համաձայնությունը:

Մահմանադրական դատարանի գնահատմամբ դիմողի մոտ շփոթ է առաջացրել Օրենսգրքի 70-րդ հոդվածի 7-րդ մասը, որը սահմանում է վարույթին պաշտպանի մասնակցության մասնավոր դեպք (մեկից ավելի կասկածյալների կամ մեղադրյալների մեկ պաշտպան ունենալու հնարավորություն) **և բացառություն այդ դեպքից** (պաշտպանյալների շահերի միջև հակասություն): Իսկ Օրենսգրքի 93-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է նույն հոդվածի 2-րդ մասի հիմքով վարույթից պաշտպանին հեռացնելու ընթացակարգային կանոն (պաշտպանյալի համաձայնություն):

Դիմումի ուսումնասիրությունը, ինչպես նաև ներկայացված փաստարկների վերլուծությունը վկայում են, որ դիմումում առաջադրված հարցերից մեկը, այն է՝ վկայակոչված իրավանորմերի միջև ենթադրյալ հակասության արդյունքում առաջացող իրավական

անորոշության առկայությունը, ենթակա չէ Սահմանադրական դատարանին, քանի որ դիմողը բարձրացնում է ոչ թե իրավական նորմի (այդ թվում՝ դրա անորոշությամբ պայմանավորված) սահմանադրականության հարց, այլ գործող նորմի կիրառման իրավաչափության հարցեր, որոնք Սահմանադրական դատարանի քննության առարկա չեն:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի 70-րդ հոդվածի 7-րդ մասի և 93-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակությունից միանշանակ բխում է, որ նույնիսկ պաշտպանյալների շահերի միջև հակասության առկայության (93-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված) դեպքում թույլատրվում է միևնույն քրեական գործով մեկից ավելի կասկածյալների կամ մեղադրյալների մեկ պաշտպան ունենալը, եթե առկա է պաշտպանյալի համաձայնությունը:

4.2. Դիմողի կողմից բարձրացված հաջորդ հարցն առնչվում է այն հիմնախնդրին, որ «Օրենսգրքի 93-րդ հոդվածի 3-րդ մասը վտանգում է ինչպես ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր հանդիսացող գործի քննության արդարացիության պահանջն ու դրա մասը կազմող մրցակցության ու կողմերի միջև իրավահավասարության սկզբունքը, այնպես էլ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածով երաշխավորված՝ պատշաճ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը»: Միաժամանակ, դիմողի պնդմամբ, անկախ պաշտպանյալի համաձայնությունից՝ պաշտպանյալների շահերի միջև հակասության առկայությունն օբյեկտիվորեն խոչընդոտում է պաշտպանի՝ պաշտպանյալների հանդեպ ստանձնած պարտականությունների կատարումը:

Այս առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավաբանական օգնություն ստանալու, անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքներն ստացել են սահմանադրական և միջազգային իրավական ամրագրում:

Այսպես, Սահմանադրության՝ «Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը» վերտառությամբ 64-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Իսկ Սահմանադրության՝ «Մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը» վերտառությամբ 67-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ հանցագործության համար մեղադրվող

յուրաքանչյուր ոք ունի անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի համաձայն քրեական հանցագործություն կատարելու համար մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի պաշտպանվելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա են պահանջում արդարադատության շահերը:

Քրեական մեղադրանքի քննության ժամանակ անձամբ կամ իր ընտրած պաշտպանի միջոցով պաշտպանվելու իրավունքը նախատեսված է նաև «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետով: Միաժամանակ, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2012 թվականի դեկտեմբերի 20-ի «Քրեական արդարադատության համակարգերում իրավաբանական օգնության մատչելիությանը վերաբերող սկզբունքներ և ուղեցույցներ» A/RES/67/187 բանաձևն ընդգծում է, որ իրավաբանական օգնությունը իրավունքի գերակայության սկզբունքի վրա հիմնված արդար քրեական արդարադատության համակարգի կարևորագույն տարր է, մարդու այլ իրավունքների, ներառյալ արդար դատաքննության իրավունքի իրականացման անհրաժեշտ պայման. պետությունները, ներպետական մակարդակով, հնարավորինս բարձր մակարդակով, անհրաժեշտության դեպքում՝ Սահմանադրությամբ, պետք է երաշխավորեն այդ իրավունքը (կետ 1, Սկզբունք 1, կետ 14):

Իրավաբանական օգնություն ստանալու, իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքներին իր արտահայտած իրավական դիրքորոշումներով անդրադարձել է նաև Սահմանադրական դատարանը, որոնք հանգում են հետևյալին.

- «Սահմանադրությունը հանրային իշխանությունից պահանջում է օրենսդրական մակարդակում ամրագրել այնպիսի ընթացակարգեր և կառուցակարգեր, որոնք արդյունավետորեն կերաշխավորեն անձի կողմից իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, ինչպես նաև գործնականում ապահովել, որ անձն իր գիտակցված և կամավոր որոշմամբ ընտրի իր վարքագիծը՝ օգտվել իրավաբանական օգնությունից, թե ոչ: Այս ընդհանուր կանոնը կիրառելի է նաև Սահմանադրության

67-րդ հոդվածի 2-րդ կետի նկատմամբ, ըստ որի՝ «Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի՝ ... 2) անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունք» (13.02.2018 թ. ՄԴՈ-1403),

- «Անձի՝ անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքը երաշխավորված է ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով, հետևաբար՝ պարտադիր է ապահովման իրավակիրառական պրակտիկայում» (02.09.2016 թ. ՄԴՈ-1295):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) և իրավական դիրքորոշումներում անդրադարձել է խնդրո առարկա հիմնախնդրին:

Մասնավորապես, ՄԻԵԴ-ը նշում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի՝ պաշտպանության կողմի իրավունքների վերաբերյալ պահանջները դիտարկվում են որպես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորվող արդար դատաքննության իրավունքի առանձնակի ասպեկտներ (Sakhnovskiy v. Russia, judgment of 2 November 2010, § 94, Gafgen v. Germany, judgment of 1 June 2010, § 169): Բացի դրանից, ՄԻԵԴ-ը նաև նշել է, որ դատաքննությանն արդյունավետ մասնակցելու մեղադրյալի իրավունքը, ընդհանուր իմաստով, ներառում է ոչ միայն ներկայության իրավունքը, այլև ըստ անհրաժեշտության իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը (Lagerblom v. Sweden, 14.04.2003, app. no. 26891/95 §49; Galstyan v. Armenia, 15.02.2008, app. no. 26986/03 §89):

Ամրագրելով քրեական իրավախախտում կատարելու համար մեղադրվող անձի՝ անձամբ կամ իր ընտրած պաշտպանների միջոցով պաշտպանվելու իրավունքի կենսագործման կարևորությունը՝ ՄԻԵԴ-ը գտնում է, որ այն բացարձակ չէ (Meftah and Others v. France, judgment of 26 July 2002, § 45, Pakelli v. Germany, judgment of 25 April 1983, § 31, Salduz v. Turkey, judgment of 27 Nov. 2008, § 51): Չնայած նրան, որ, որպես ընդհանուր կանոն, պաշտպան ունենալու հարցում մեղադրյալի ընտրությունը պետք է հարգվի (Lagerblom v. Sweden, judgment of 14 April 2003, § 54), այդուհանդերձ, ազգային դատարանները կարող են չչեղարկել այդ անձի ընտրությունը, եթե առկա են բավարար հիմքեր՝ պնդելու, որ դա անհրաժեշտ է արդարադատության շահերից ելնելով (Meftah and Others v. France, judgment of 26 July 2002, § 45, Croissant v. Germany, judgment of 25 September 1992, § 29): Ավելին, նույն իրավական դիրքորոշումների շրջանակում այն հարցը, թե թույլ տալ անձին իր պաշտպանու-

թյունն իրականացնել անձամբ կամ նշանակել նրա համար փաստաբան, գտնվում է պետության հայեցողության սահմաններում, քանի որ այն առավել արդյունավետորեն կարող է իր իրավական համակարգի շրջանակներում ընտրություն կատարել արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար (Correia de Matos v. Portugal, judgment of 15 November 2001):

4.3. Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անձի՝ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքը կարևոր երաշխիք է արդար դատաքննության իրավունքի ամբողջական և արդյունավետ կենսագործման համար, ուստի դրա ապահովման նկատառումներից էլնելով՝ կարևորվում է օրենսդրական համարժեք կարգավորումների անհրաժեշտությունը:

Ըստ այդմ՝ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանվել են պաշտպան ընտրելու, վերջինիս նշանակելու, փոխարինելու, ինչպես նաև գործով վարույթին վերջինիս մասնակցությունը բացառող հանգամանքները:

Քրեադատավարական օրենսդրությունը նույնպես երաշխավորում է յուրաքանչյուրի՝ անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքը, սակայն ինչպես պաշտպանյալների, այնպես էլ արդարադատության իրականացման շահերից էլնելով՝ նախատեսել է որոշ սահմանափակումներ, որոնք իրենց էությամբ ոչ թե խախտում են անձի՝ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքը, այլ նպաստում են այդ իրավունքի արդյունավետ իրացմանը:

Սահմանադրությամբ ամրագրված՝ անձի՝ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքը ենթադրում է ոչ միայն պաշտպան ընտրելու, այլև այդ պաշտպանի միջոցով արդյունավետ պաշտպանություն ստանալու իրավունքը, ինչը միշտ չէ, որ կարող է երաշխավորվել, երբ նույն անձը միննույն քրեական գործի շրջանակներում իրականացնում է մեկից ավել անձանց իրավունքների պաշտպանությունը, որոնց շահերը հակասում են միմյանց:

Բացի դրանից, յուրաքանչյուր գործով անհրաժեշտ է ապահովել արդարադատության արդյունավետ և պատշաճ իրականացումը, իսկ քրեադատավարական օրենսդրությամբ գործի արդարացի քննության ապահովումը պայմանավորվում է նաև գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմամբ, ուստի եթե պաշտպանի՝ նույն գործով մեկից ավելի պաշտպանյալների հետ շփումները կարող են խոչընդոտել գործի արդարացի

քննությանը՝ վտանգելով արդարադատության իրականացումը, նույն գործով մեկից ավել անձանց շահերի պաշտպանության սահմանափակումը պետք է համարել իրավաչափ:

Նշված մոտեցումը հիմնավորվում է նաև ՄԻԵԴ-ի հիշատակված իրավական դիրքորոշումներով, որոնց շրջանակներում, որպես անձի իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքի սահմանափակման հիմք, նշվում է **արդարադատության շահը**:

Տվյալ դեպքում նկատելի է, որ քրեադատավարական օրենսդրությամբ մի դեպքում որպես պաշտպանի՝ վարույթին մասնակցելու արգելք նշվում են պաշտպանյալների շահերի միջև հակասությունը, ինչպես նաև արդարադատության իրականացումը խոչընդոտելու վտանգը, մյուս դեպքում՝ օրենսդիրը սահմանափակվում է միայն շահերի հակասության ամրագրմամբ՝ ընդլայնելով միայն սուբյեկտների շրջանակը, որպիսի պայմաններում պարզ է դառնում, որ օրենսդիրն առաջնորդվել է այն տրամաբանությամբ, որ բոլոր այն դեպքերում, երբ **խոսք կարող է լինել միայն շահերի հակասության մասին, պաշտպանին վարույթից հեռացնելը հնարավոր է միայն պաշտպանյալի համաձայնությամբ, մինչդեռ եթե հարցը վերաբերում է արդարադատության իրականացումը խոչընդոտելուն, պաշտպանյալի համաձայնությունը չի կարող հաշվի առնվել**, քանի որ այդպիսի պայմաններում կլիսաթարվի արդար դատաքննության իրավունքի կարևոր բաղադրատարր հանդիսացող գործի արդարացի քննության սկզբունքը:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիտարկվող ինստիտուտը, գտնվելով իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու սահմանադրական իրավունքի և դրա թույլատրելի սահմանափակումների շրջանակներում, հաշվի է առնում, մի կողմից՝ պետության ու հանրային շահերի, մյուս կողմից՝ մարդու և քաղաքացու իրավունքների և օրինական շահերի հավասարակշռությունը: Ընդ որում, տվյալ դեպքում հանրային շահը պայմանավորված է արդար դատաքննության իրավունքի ապահովման՝ պետության պոզիտիվ պարտականությամբ, որն էլ, իր հերթին, բխում է հենց մարդու և քաղաքացու իրավունքներից և օրինական շահերից: Իսկ մարդու և քաղաքացու իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը տվյալ դեպքում դրսևորվում է **պաշտպանյալի համաձայնության ինստիտուտով**. պաշտպանյալներն իրենք են պատասխանատու իրենց շահերի համար՝ հաշվի առնելով մեկ պաշտպան ունենալու բոլոր ռիսկերը:

Վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանը կարևոր է համարում արձանագրել, որ Օրենսգրքի 70-րդ հոդվածի 7-րդ մասի և 93-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի ձևակերպումներից բխում է պետության պոզիտիվ պարտականությունը անձանց պատշաճ կերպով նախազուշացնել միևնույն քրեական գործով մեկից ավելի կասկածյալների կամ մեղադրյալների մեկ պաշտպան ունենալու հնարավոր բացասական հետևանքների մասին կապված պաշտպանյալների շահերի միջև հակասության հետ, ներառյալ պաշտպանի պաշտպանյալներից մեկի հետ ազգակցական կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ գտնվելը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

1 դեկտեմբերի 2020 թվականի
ՍԴՈ-1564



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՆԵԼԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 124-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ
ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

1 դեկտեմբերի 2020թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմող Ն. Վարդանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 23 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Նելիկ Վարդանյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 3-4(99-100)2020

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից:

Օրենսգրքի «Գործն ըստ էության լուծող դատական ակտով լուծման ենթակա հարցերը» վերտառությամբ 124-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «2. Վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում և դրա ընդունման պահի դրությամբ գործող օրենքների հիման վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ հետագայում ընդունվել է դատավարության մասնակից հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վերաբերող նրանց համար ավելի բարենպաստ օրենք, և եթե դա նախատեսված է այդ օրենքով»:

Գործի քննության առիթը Ն. Վարդանյանի 2020 թվականի մարտի 23-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանող կողմի գրավոր բացատրությունը, ինչպես նաև վերլուծելով Օրենսգրքի համապատասխան դրույթները և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Ձ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Անդրադառնալով Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերին և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին, համաձայն որոնց յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի դատաքննության իրավունք, ինչպես նաև Սահմանադրության 75-րդ և 78-րդ հոդվածներին, համաձայն որոնց՝ «հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր», իսկ «հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար», դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթը պետք է ձանաչվի Սահմանադրությանը հակասող և անվավեր:

Մասնավորապես, դիմողը նշում է, որ իր գործի շրջանակներում դատարանին է ներկայացվել «Փորձագետ» անկախ հետազոտությունների կենտրոնի 08.06.2016թ. թիվ Փ-022-01-16 «Մասնագիտական եզրակացություն», որը փորձագիտական եզրակացություն չէ վարչական դատավարության կամ որևէ այլ դատավարության իմաստով, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով սահմանված կարգով փորձագետ նշանակելու մասին դատարանը կայացնում է որոշում, որում նշում է դատարանի անվանումը, փորձաքննություն նշանակելու ամսաթիվը, գործի անվանումը, փորձագետին առաջադրվող հարցերը, փորձագետի անունը կամ մասնագիտացված փորձագիտական հաստատության անվանումը, որին հանձնարարվում է փորձաքննության կատարումը, փորձագետին տրամադրված նյութերը (փաստաթղթերը), անհրաժեշտության դեպքում՝ դրանց հետ վարվելու պայմանները, ինչպես նաև դատարանը նախագուշացնում է փորձագետին ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար քրեական պատասխանատվության մասին:

Դիմողը շեշտում է, որ ի տարբերություն «Մասնագիտական եզրակացության» թիվ 63200717 քրեական գործի շրջանակներում նշանակված փորձագետի եզրակացությունը միանգամայն այլ փաստեր և գնահատականներ է տալիս քաղաքաշինական նորմերի և սեփականության իրավունքի խախտումների վերաբերյալ, սակայն ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը, հիմք ընդունելով վիճարկվող դրույթը, ուսումնասիրման ենթակա ապացույցների շարքից բացառել է թիվ 63200717 քրեական գործի շրջանակներում նշանակված 28.02.2018թ. փորձագետի եզրակացությունը, ինչի արդյունքում ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտում տեղի չի ունեցել:

Ըստ դիմողի՝ Սահմանադրության 63-րդ հոդվածով երաշխավորվում է գործի արդարացի քննության իրավունքը, որից բխում է, որ գործի արդարացի լուծման համար օրենքով սահմանված կարգով ձեռք բերված բոլոր ապացույցները պետք է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրվեն, որից հետո միայն հետևություններ կատարվեն այս կամ այն փաստի հաստատված լինելու մասին:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող դրույթը հնարավորություն չի տալիս գնահատելու օրենքով սահմանված կարգով ձեռք բերված այնպիսի ապացույց, որն էական նշանակություն ունի վարչական ակտի իրավաչափությունը գնահատելու համար, իսկ նման կարգավորումը սահմանափակում է գործի արդարացի քննության հիմնա-

կան իրավունքն անհամաչափ կերպով, քանի որ նման սահմանափակումը որևէ սահմանադրական նպատակ չի կարող հետապնդել:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողն արձանագրում է, որ դատավարության մասնակիցների, այդ թվում՝ ինստիտուցիոնալ դատավարական իրավունքները և պարտականությունները սահմանվում են տվյալ վարչական դատավարության կարգը սահմանող իրավական նորմերով, որպիսի դատավարական իրավունքները կարող են իրացնել, և պարտականությունները պետք է կրեն բացառապես այդ իրավական նորմերով կանոնակարգվող սահմաններում, դեպքերում և ընթացակարգով:

Պատասխանողը նշում է, որ «...վարչական ակտի հիմնավորումներում պետք է անպայման նշվեն համապատասխան վարչական ակտն ընդունելու բոլոր էական փաստական հիմքերը: ...քանի որ իրավական նորմում ամրագրված իրավական հետևանքներն անձի նկատմամբ կիրառելու նախապայման է հանդիսանում իրավական նորմում առկա փաստակազմի առկայության բացահայտումը: Իրավական նորմերում օրենսդիրն ամրագրում է որոշակի փաստակազմեր, որոնց գործնականում առկայությունն է միայն անձանց համար կոնկրետ գործով առաջացնում օրենքով սահմանված իրավական հետևանքները, այսինքն՝ վարչական մարմին իրավասու է ընդունելու վարչական ակտ, որով իրավական նորմում ամրագրված իրավական հետևանքները կիրառվում են կոնկրետ անձի նկատմամբ, եթե առկա է օրենքում նկարագրված փաստակազմը»:

Պատասխանողի կարծիքով վիճարկվող դրույթում առկա կարգավորումները պայմանավորված են վարչական արդարադատության առանձնահատկություններով, մասնավորապես, վարչական մարմնի կողմից վարչական ակտի ընդունումը պետք է պայմանավորված լինի վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում վարչական մարմնի ունեցած որոշակի էական փաստական և իրավական հիմքերով: Պատասխանողը տրամաբանական է գտնում այն, որ վարչական ակտի իրավաչափությունը գնահատելիս ապացուցման առարկան միայն այն իրավաբանական փաստերի համակցությունն է, որոնք հիմք են հանդիսացել վարչական մարմնի համար վիճարկվող ակտն ընդունելու համար: Այդ առումով, օրենսդրի կողմից վարչական ակտի իրավաչափության

դատական վերահսկողության սահմանները միայն վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակով կանխորոշելը պայմանավորված է դատարանի կողմից վիճարկվող վարչական ակտի իրավաչափության գնահատման նպատակներով, «վերջինս հանդիսանում է պարզել՝ արդյոք վիճարկվող վարչական ակտն ընդունվել է օրենքի պահանջների պահպանմամբ, այսինքն՝ վարչական ակտի ընդունման հիմքում ընկած փաստական և իրավական հիմքերի հիման վրա արդյոք իրավաչափ է վարչական մարմնի կողմից նման վարչական ակտի ընդունումը, թե՛ ոչ»:

Ուստի, պատասխանողը գտնում է, որ վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակից դուրս այլ ապացույցները վարչական ակտի իրավաչափության գնահատման ժամանակ որպես ապացույց չդիտարկելը չի կարող համարվել գործի արդարացի քննության իրավունքի անհամաչափ և ոչ պիտանի սահմանափակում:

Ելնելով վերոգրյալից՝ պատասխանողը խնդրում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել Սահմանադրությանը համապատասխանող:

3. Գործի շրջանակներում պարզելու ենթակա հանգամանքները

Սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող դրույթի սահմանադրականությունը որոշելիս անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցադրումներին.

ա) արդյոք միայն վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում վիճարկվող վարչական ակտի իրավաչափության որոշելը խախտում է Սահմանադրությամբ նախատեսված անձի՝ անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի դատաքննության իրավունքը,

բ) առկա իրավակարգավորումների պայմաններում պահպանվում է արդյոք իրավաչափ վարչական ակտի ընդունման հետևանքով երրորդ անձի խախտված իրավունքների դատական պաշտպանության հնարավորությունն այն դեպքում, երբ հետագայում գործի դատական քննության փուլում, ի հայտ են գալիս նոր ապացույցներ, որոնք հաստատում են իրավաչափ վարչական ակտի ընդունման արդյունքում երրորդ անձի իրավունքների խախտման փաստը:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ դիմողի կողմից բարձրացված սահմանադրա-իրավական խնդիրը և ներկայացված մտահոգությունները վերաբե-րում են վարչական ակտի իրավաչափությունը գնահատելու հա-մար էական նշանակություն ունեցող ապացույցներին, որոնք վար-չական ակտն ընդունելիս գոյություն չեն ունեցել կամ չեն եղել վար-չական մարմնի տիրապետման ներքո: Այդ է պատճառը, որ դիմողը **որևէ հիմնավորում չի ներկայացնում** Օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «և դրա ընդունման պահի դրությամբ գործող օրենքների հիման վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ հետագայում ընդուն-վել է դատավարության մասնակից հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վերաբերող նրանց համար ավելի բարե-նպաստ օրենք, և եթե դա նախատեսված է այդ օրենքով» դրույթի սահմանադրականության վերաբերյալ:

Վերոգրյալից ելնելով, ինչպես նաև գործի նյութերի և Օրենսգրքի հիշյալ դրույթի ուսումնասիրության արդյունքներով Սահմանա-դրական դատարանն արձանագրում է, որ դիմողի սահմանադրա-կան իրավունքների ենթադրյալ խախտումը և իր համար առաջա-ցած ոչ բարենպաստ հետևանքները պայմանավորված չեն վիճարկ-վող Օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի վերը հիշատակված դրույթով: Հետևաբար, սույն գործի շրջանակներում Սահմանադրա-կան դատարանը քննության առարկա չի դարձնում Օրենսգրքի հիշյալ դրույթի սահմանադրականության հարցը:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով վիճարկվող դրույթը դիտարկել դատական պաշտպա-նության և արդար դատաքննության իրավունքների տեսանկյունից: Սահմանադրությամբ ամրագրված անձի իրավունքների և ազա-տությունների դատական պաշտպանության իրավունքը նախա-տեսված է ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական օրենս-դրությամբ: Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների համա-ձայն յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության, անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Դատարան դիմելն անձի իրավունքն է, որի իրացումն օրենքով նախատեսված իրավական գործընթաց է, պայմանավորված չէ դատական կամ հանրային իշխանության այլ մարմնի հայեցողու-

թյամբ, և որի իրացմամբ առաջացած իրավական հետևանքները պարտադիր են ինչպես դիմող անձի, դատավարության մյուս մասնակիցների, այնպես էլ դատարանի համար, քանի որ, ինչպես վկայում է դատավարական օրենսդրության (ՀՀ քաղաքացիական, քրեական և վարչական դատավարության օրենսգրքերի) համապատասխան նորմերի ուսումնասիրությունը, անձի հայցադիմումին հաջորդում են ընթացակարգային նորմերով կարգավորվող հասարակական հարաբերություններ, որոնց շրջանակներում իրացվում են փոխադարձ իրավունքներ ու պարտականություններ»: (ՄԴՈ-1257, 10.03.2016թ.)

Հարկ է նշել, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Վարչական ակտերի դատական վերանայման մասին» 15.12.2004 թվականի թիվ Rec2004 (20) հանձնարարականի համաձայն՝ բոլոր վարչական ակտերը կարող են դատական վերանայման առարկա հանդիսանալ: Դատարանը պետք է հնարավորություն ունենա գնահատելու օրենքի ցանկացած խախտում, ներառյալ իրավասության բացակայությունը, ընթացակարգային խախտումները և լիազորությունների չարաշահումը:

Սահմանադրական դատարանը 2015 թվականի փետրվարի 10-ի թիվ ՄԴՈ-1190 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլնի, նպատակ է հետապնդում առաջին հերթին ապահովել տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ:

Այդ առումով, վիճարկվող դրույթն անհրաժեշտ է դիտարկել նախ և առաջ որպես վարչական արդարադատության առանձնահատկություն:

4.2. Օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը սահմանում են.

«1. Գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե ("ex officio"):

2. Դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական

փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար»:

Օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

«1. Դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

2. Դատարանը դատական ակտի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը»:

Օրենսգրքի, մասնավորապես, 18, 25, 28 և 29-րդ հոդվածները սահմանում են դատավարության մասնակցի՝ ապացույցներ ներկայացնելու և դրանց հետազոտմանը մասնակցելու իրավունքը, ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզելու՝ դատարանի պարտականությունը, կողմի իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները, դատարանին ներկայացնելու պարտականությունը, վարչական մարմնի՝ նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները, դատարանին ներկայացնելու պարտականությունը, դատարանի իր նախաձեռնությամբ գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու նպատակով համարժեք միջոցներ ձեռնարկելու պարտականությունը, որևէ փաստի չապացուցման դեպքում դրա բացասական հետևանքները ապացուցման բեռը կրողի կողմից կրելու պահանջը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների իրացումն ապահովելու համար Օրենսգրքը նախատեսել է բավարար կառուցակարգեր դատարանի կողմից անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու, դատավարության մասնակցի կողմից ապացույցներ ներկայացնելու և դրանք հետազոտելու համար:

Բացի դրանից, վերոգրյալ նորմերից հետևում է նաև, որ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է անմիջականորեն գնահատել գործում եղած բոլոր ապացույցները, ապա դրանց հետազոտման և գնահատման միջոցով պարզել նաև գործի

լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը և այդ պահանջների պահպանման արդյունքում միայն որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցերը:

Այդ կապակցությամբ Մահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ձևավորված համապատասխան իրավակիրառ պրակտիկային: Այսպես, թիվ ՎԴ5/0029/05/14 վարչական գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

«...թեև ներքին համոզմունքը սուբյեկտիվ կատեգորիա է, այդուհանդերձ, օրենսդիրն այն դիտարկում է որպես ապացույցների գնահատման միջոց, որը հանգեցնում է իրավական գնահատականների, հետևաբար և դատավարական օրենսդրությամբ նախատեսել է դրա օբյեկտիվության պահանջմանն ուղղված որոշակի երաշխիքներ, մասնավորապես՝

1) որպես դատարանի ներքին համոզմունքի օբյեկտիվ հիմք պետք է հանդիսանա գործում եղած ամեն մի ապացույցի և ապացույցների համակցության բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությունը,

2) դատարանն ազատ է ապացույցների գնահատման գործում:

Ներքին համոզմամբ ապացույցների ազատ գնահատումը ենթադրում է, որ դատարանը կաշկանդված չէ տվյալ ապացույցին գործին մասնակցող և այլ անձանց տված գնահատականներով և արտահայտած կարծիքներով»:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում ևս բազմիցս անդրադարձել է դատական ակտերի հիմնավորվածության հարցին արձանագրելով, որ դատարանը ոչ միայն պետք է նշի այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում դատական ակտ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (*Ռազմիկ Մարությանն ընդդեմ Ստեփան և Անահիտ Մարությանների թիվ 3-54(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը*):

Նախկինում կայացրած իր որոշումներում անդրադառնալով գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու դատարանի լիազորության իրացման առանձնահատկություններին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վեճի լուծման համար էական փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահան-

ջելու, անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ դատավարական գործողությունների իրականացման դատարանի իրավունքը սահմանափակված է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառաբանված ներքին համոզման հանգելու դատարանի պարտականությամբ և պետք է բխի արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրությից (ՀՀ կառավարությանն առնթեր պետական եկամուտների կոմիտեի Արաբկիրի հարկային տեսչությունն ընդդեմ <<Ջորջ ընդ Բրանդն>> ՄՊԸ-ի թիվ ՎԴ/5525/05/08 վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):

4.3. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը: Նույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով:

Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա **ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար**:

Օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.

բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում.

գ) շահերի բախման իրավիճակում:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Վարչական ակտի հասցեատերը վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք չունի, եթե նա՝

ա) համապատասխան վարչական ակտի ընդունմանը հասել է

կաշառքի, սպառնալիքի կամ վարչական մարմնի պաշտոնատար անձին դիտավորյալ մոլորության մեջ գցելու միջոցով.

բ) համապատասխան վարչական ակտի ընդունմանը հասել է կեղծ կամ ոչ լրիվ փաստաթղթեր ներկայացնելու միջոցով.

գ) նախապես իմացել է վարչական ակտի ոչ իրավաչափ լինելու մասին կամ այդ մասին պարտավոր էր իմանալ՝ իր համար մատչելի տեղեկությունների հիման վրա»:

Վերոնշյալ նորմերից հետևում է, որ օրենսդիրը հստակ սահմանել է վարչական ակտի վիճարկման սահմանները՝ նպատակ ունենալով կանխատեսելի դարձնել վարչարարության ողջ գործընթացը, ինչը բխում է սահմանադրորեն նախանշված նպատակներից, մասնավորապես, Սահմանադրության 50-րդ հոդվածում ամրագրված անձանց պատշաճ վարչարարության իրավունքի իրացման անհրաժեշտությունից:

Այդ իսկ պատճառով վարչական ակտի իրավաչափությունը գնահատելիս անհրաժեշտ է, որ դատարանները վարչական մարմնի նկատմամբ դատական վերահսկողությունն իրականացնեն, նախ և առաջ, վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցների շրջանակներում:

Մյուս կողմից, Օրենսգրքի, մասնավորապես, 5, 18, 25, 27, 28, 29 և 99-րդ հոդվածների բովանդակությունից բխում է, որ Օրենսգրքը հնարավորություն է ընձեռում գործի քննության ընթացքում հետազոտել այնպիսի նոր ապացույցներ, որոնք հաստատում են վարչական ակտի օրենքի խախտմամբ կամ կեղծ փաստաթղթերի հիման վրա ընդունված լինելը, կամ որոնք հաստատում են, որ վարչական ակտի հասցեատերը համապատասխան վարչական ակտի ընդունմանը հասել է կաշառքի, սպառնալիքի, վարչական մարմնի պաշտոնատար անձին դիտավորյալ մոլորության մեջ գցելու կամ կեղծ կամ ոչ լրիվ փաստաթղթեր ներկայացնելու միջոցով: Վերոհիշյալ փաստերը դատական կարգով հաստատվելիս դատարանը լիազորված է ոչ իրավաչափ, հետևաբար՝ անվավեր ճանաչել տվյալ վարչական ակտը:

Ավելին, Օրենսգրքը ոչ միայն հնարավորություն է ընձեռում գործի քննության ընթացքում հետազոտելու նոր ապացույցներ, այլև գործի ի պաշտոնե քննության սկզբունքի շրջանակներում պարտավորեցնում է դատարանին ձեռք բերել բոլոր անհրաժեշտ ապացույցները, դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման հիման վրա հանգել պատճառաբանված ներքին համոզման, ինչը

պետք է բխի արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրությից:

Ելնելով վերոգրյալից Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթը, սահմանափակելով վարչական մարմնի վարչական գործի դատական քննության ընթացքում նոր ապացույցներ ներկայացնելու հնարավորությունը, չպետք է մեկնաբանվի այնպես, որ սահմանափակի անձանց դատական պաշտպանության իրավունքը, մասնավորապես, գործի արդարացի լուծման համար նշանակություն ունեցող նոր ապացույցներ ներկայացնելու հնարավորությունը:

Մինչդեռ, Օրենսգրքի վիճարկվող դրույթի ձևակերպումը կարող է տպավորություն ստեղծել, որ վիճարկման հայցի շրջանակներում վարչական ակտի իրավաչափությունը գնահատելիս դատարանները հետազոտում են բացառապես վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները: Դիմողի նկատմամբ նման մոտեցում է ցուցաբերել նաև վերաքննիչ վարչական դատարանը՝ Օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի «Վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում» դրույթին տալով սահմանափակ մեկնաբանություն, ինչի արդյունքում արգելափակվում է անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների իրացման հնարավորությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63-րդ, 64-րդ և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ «Վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում» դրույթը, նոր ապացույց ներկայացնելու առումով, կաշկանդում է միայն վիճարկվող ակտը կայացրած վարչական մարմնին:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի «Վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում» դրույթը դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման առաջին կետում տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

1 դեկտեմբերի 2020 թվականի
ՍԴՈ-1565



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱՎԹԱՍԹԵՐՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ» ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

8 դեկտեմբերի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Հ. Թովմայանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Ս. Պապիկյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2020 թվականի հունիսի 16-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարու-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 3-4(99-100)2020

թյան միջև Հայաստանի Հանրապետության նավթամթերքի մատակարարման ոլորտում առևտրատնտեսական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2020 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 1450-Ս որոշմամբ 2020 թվականի հուլիսի 16-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության նավթամթերքի մատակարարման ոլորտում առևտրատնտեսական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի սեպտեմբերի 11-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2020 թվականի սեպտեմբերի 11-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ Համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության նավթամթերքի մատակարարման ոլորտում առևտրատնտեսական համագործակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2020 թվականի հուլիսի 16-ին Նուր-Սուլթան քաղաքում՝ նավթամթերքի մատակարարման ոլորտում փոխշահավետ համագործակցության խորացման ու եվրասիական տնտեսական ինտեգրման ուղղությամբ առաջխաղացման նպատակներով:

2. Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, Համաձայնագրով ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

ա) ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը յուրաքանչյուր տարի՝ մինչև ընթացիկ օրացուցային

տարվա դեկտեմբերի 1-ը, կազմի Հայաստանի Հանրապետության տարածքում Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (այսուհետ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) 27-րդ խմբում դասակարգվող ապրանքների արտադրության, ներքին սպառման, մատակարարման, ներմուծման և արտահանման հաշվեկշիռը, ներառյալ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27-րդ խմբում դասակարգվող ապրանքների՝ Ղազախստանի Հանրապետությունից և Ռուսաստանի Դաշնությունից Հայաստանի Հանրապետություն մատակարարումների ծավալները (այսուհետ՝ ինդիկատիվ հաշվեկշիռներ) (Հոդված 3, կետ 1),

բ) Համաձայնագրին համապատասխան ստեղծել անհրաժեշտ պայմաններ՝ Ղազախստանի Հանրապետության տարածքից Հայաստանի Հանրապետություն ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27-րդ խմբում դասակարգվող ապրանքների ցանկի համաձայն ապրանքների մատակարարումները Համաձայնագրի կողմերի պետությունների տնտեսավարող սուբյեկտների (ռեզիդենտների) կողմից իրականացնելու համար լիազորված կազմակերպությունների ներգրավմամբ (Հոդված 4, կետ 1),

գ) ապահովել պայմաններ, որ ցանկով հաստատված, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27-րդ խմբում դասակարգվող Ղազախստանի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն մատակարարվող ապրանքները Համաձայնագրին համապատասխան առանց արտահանման մաքսատուրքերի գանձման, չարտահանվեն Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկրներ և ԵԱՏՄ երկրներ (Հոդված 7, կետ 1), իսկ սույն պարտավորության խախտման դեպքում Ղազախստանի Հանրապետությանը վճարել ԱՄՆ դոլարով հաշվարկված, խախտման փաստը հայտնաբերելու օրվա դրությամբ Ղազախստանի Հանրապետությունում գործող արտահանման մաքսատուրքերի ծավալին համարժեք փոխհատուցման գումարներ՝ արտահանված և վերաարտահանված ապրանքների համար (Հոդված 7, կետ 2),

դ) մինչև ընթացիկ օրացուցային տարվա նոյեմբերի 1-ը Ղազախստանի Հանրապետությանը սահմանված կարգով ներկայացնել տեղեկատվություն 9 ամսվա կտրվածքով ինդիկատիվ հաշվեկշիռների կատարման և ընթացիկ օրացուցային տարվա ընթացքում դրանց ակնկալվող կատարման վերաբերյալ, ինչպես նաև առաջարկներ հաջորդ օրացուցային տարվա համար ինդիկատիվ հաշվեկշիռների և արձանագրության կազմման վերաբերյալ (Հոդված 8 կետ 1),

ե) Ղազախստանի Հանրապետության իրավասու մարմինների հետ մինչև օրացուցային տարվա հունվարի 31-ը անցկացնել Ղազախստանի Հանրապետության և երրորդ պետությունների հետ Հայաստանի Հանրապետության փոխադարձ առևտրի վիճակագրության և ցանկով հաստատված, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27-րդ խմբում դասակարգվող ապրանքների արտահանման և ներմուծման վիճակագրության համեմատություն (Հոդված 8 կետ 2):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ց**.

1. 2020 թվականի հուլիսի 16-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության նավթամթերքի մատակարարման ոլորտում առևտրատնտեսական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

8 դեկտեմբերի 2020 թվական
ՄԴՈ-1566



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ՄՈՆՐԵԱԼՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 50-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ
«Ա» ԿԵՏՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

8 դեկտեմբերի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Ա. Սիմոնյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի հոկտեմբերի 6-ին Մոնրեալում ստորագրված «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի 50-րդ հոդվածի «ա»

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 3-4(99-100)/2020

կետում փոփոխություն կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր 2020 թվականի հունիսի 18-ի N 982-Ա որոշմամբ «2016 թվականի հոկտեմբերի 6-ին Սոնրեալում ստորագրված «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի 50-րդ հոդվածի «ա» կետում փոփոխություն կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Նշված որոշումը վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի հունիսի 25-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2020 թվականի հունիսի 25-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Զ Ե Ց**:

1. «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի 50-րդ հոդվածի «ա» կետում փոփոխություն կատարելու մասին» արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2016 թվականի հոկտեմբերի 6-ին Սոնրեալում: Այն նախատեսում է փոփոխություն կատարել 1944 թ. դեկտեմբերի 7-ին Չիկագոյում ստորագրված «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայում՝ ավելացնելով Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության Խորհրդի անդամների քանակը:

«Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիային Հայաստանի Հանրապետությունը միացել է Գերագույն խորհրդի 1994 թվականի մարտի 29-ի որոշմամբ (Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի Հ.Ն-1032-Մ որոշում):

Արձանագրությունն այն վավերացրած Պետությունների համար ուժի մեջ է մտնում 128-րդ վավերագիրն ի պահ հանձնելու օրվանից, իսկ Արձանագրությունը նշված ժամկետից ուշ վավերացրած ցանկացած Պայմանավորվող պետության համար ուժի մեջ է մտնում վերջինիս վավերագիրը Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությանն ի պահ հանձնելու պահից:

2. Արձանագրությամբ նախատեսվում է «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի 50-րդ հոդվածի «ա» կետի 2-րդ նախադասությունում «երեսունվեց» բառը փոխարինել «քառասուն» բառով:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 2016 թվականի հոկտեմբերի 6-ին Մոնրեալում ստորագրված «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի 50-րդ հոդվածի «ա» կետում փոփոխություն կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

8 դեկտեմբերի 2020 թվականի
ՍԴՈ-1567



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2016 թվականի Հոկտեմբերի 6-ին ՍՈՆՐԵԱԼՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 56-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

8 դեկտեմբերի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Ա. Միմոնյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի հոկտեմբերի 6-ին Սոնրեալում ստորագրված «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի 56-րդ հոդվածում

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 3-4(99-100)2020

փոփոխություն կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր 2020 թվականի հունիսի 18-ի N 1008-Ս որոշմամբ «2016 թվականի հոկտեմբերի 6-ին Մոնրեալում ստորագրված «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի 56-րդ հոդվածում փոփոխություն կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Նշված որոշումը վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի հունիսի 25-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2020 թվականի հունիսի 25-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի 56-րդ հոդվածում փոփոխություն կատարելու մասին» արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2016 թվականի հոկտեմբերի 6-ին Մոնրեալում: Այն նախատեսում է փոփոխություն կատարել 1944 թ. դեկտեմբերի 7-ին Չիկագոյում ստորագրված «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայում՝ ավելացնելով օդանավագնացության հանձնաժողովի անդամների քանակը:

«Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիային Հայաստանի Հանրապետությունը միացել է Գերագույն խորհրդի 1994 թվականի մարտի 29-ի որոշմամբ (Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի Հ.Ն-1032-Մ որոշում):

Արձանագրությունն այն վավերացրած Պետությունների համար ուժի մեջ է մտնում 128-րդ վավերագիրն ի պահ հանձնելու օրվանից, իսկ Արձանագրությունը նշված ժամկետից ուշ վավերացրած ցանկացած Պայմանավորվող պետության համար ուժի մեջ է մտնում վերջինիս վավերագիրը Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությանն ի պահ հանձնելու պահից: Արձանագրությունը վավերացվել է 45 պետության կողմից:

2. Արձանագրությամբ նախատեսվում է «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի 56-րդ հոդվածում՝ «կազմված է թվով տասնինը անդամներից» բառերը փոխարինել «կազմված է քսանմեկ անդամից» բառերով:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ց**.

1. 2016 թվականի հոկտեմբերի 6-ին Մոնրեալում ստորագրված «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի 56-րդ հոդվածում փոփոխություն կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

8 դեկտեմբերի 2020 թվականի
ՄԴՈ-1568



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ՍԱՆԿՏ
ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱԿՑԻԶՆԵՐԻ ՄԱՍՈՎ
ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՄԿԶՐՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

8 դեկտեմբերի 2020թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Պողոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի դեկտեմբերի 19-ին Սանկտ Պետերբուրգում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ծխախո-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 3-4(99-100)/2020

տային արտադրանքի ակցիզների մասով հարկային քաղաքականության իրականացման սկզբունքների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2020 թվականի հունիսի 18-ի N 995-Ա որոշմամբ «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ծխախոտային արտադրանքի ակցիզների մասով հարկային քաղաքականության իրականացման սկզբունքների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի հունիսի 25-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2020 թվականի հունիսի 25-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ը Գ Ե Ց**.

1. «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ծխախոտային արտադրանքի ակցիզների մասով հարկային քաղաքականության իրականացման սկզբունքների մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2019 թվականի դեկտեմբերի 19-ին Սանկտ Պետերբուրգում՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ծխախոտային արտադրանքի շուկայի գործունեության և ծխախոտային արտադրանքի շրջանառության ոլորտում մրցակցային միջավայրի զարգացման համար պայմաններ ստեղծելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, Համաձայնագրով ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- ծխախոտային արտադրանքի համար ակցիզների դրույքաչափերի ներդաշնակեցումը (մոտարկումը) իրականացնել Համաձայնագրի 2-րդ հոդվածում սահմանված սկզբունքներին համապատասխան (Հոդված 2),

- ծխախոտային արտադրանքի համար ակցիզների դրույքաչափերի ներդաշնակեցումը (մոտարկումը) իրականացնելու նպատակով սահմանել ակցիզների միասնական ինդիկատիվ դրույքաչափ (այսուհետ՝ ինդիկատիվ դրույքաչափ), ինդիկատիվ դրույքաչափի մակարդակին հասնելու 5-ամյա ժամանակահատված, ինդիկատիվ դրույքաչափից ակցիզների փաստացի դրույքաչափերի շեղման տարեկան տիրույթներ (Հոդված 3, կետ 1),

- ոչ ուշ, քան Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կուլեգիային առընթեր հարկային քաղաքականության ու վարչարարության հարցերով խորհրդատվական մարմնի աշխատանքների շրջանակներում ինդիկատիվ դրույքաչափի կիրառման ժամանակահատվածի ավարտից երկու տարի առաջ մշակել առաջարկություններ՝ ինդիկատիվ դրույքաչափի կիրառման հաջորդ ժամկետի համար ծխախոտային արտադրանքի համար ակցիզների դրույքաչափերի ներդաշնակեցման (մոտարկման) միջոցների վերաբերյալ (Հոդված 3, կետ 4),

- ապահովել, որ 2024 թվականին սիգարետների համար կիրառվեն ազգային արժույթով ինդիկատիվ դրույքաչափ՝ 1000 հատի համար 35 եվրոին համարժեք չափով (Հոդված 4, կետ 1),

- յուրաքանչյուր տարի մինչև օգոստոսի 1-ը, Հանձնաժողով ներկայացնել ՀՀ օրենսդրությանը համապատասխան սահմանման համար պլանավորվող հերթական օրացուցային (բյուջետային) տարվա համար ծխախոտային արտադրանքի համար ակցիզների դրույքաչափերի մասին տեղեկատվությունը, ինչպես նաև միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում ակցիզների պլանավորվող դրույքաչափերի մասին տեղեկատվությունը (առկայության դեպքում) (Հոդված 5, կետ 2),

- Միության մաքսային տարածքում առանց ակցիզների և այլ անուղղակի հարկերի վճարման ծխախոտային արտադրանքի իրացումը կանխելու նպատակով սահմանել ՀՀ և մյուս անդամ պետությունների լիազոր մարմինների միջև վարչական համագործակցության կարգը (այդ թվում՝ Միության շրջանակներում համապատասխան միջազգային համաձայնագրեր կնքելու միջոցով) (Հոդված 7):

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաս-

տատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2019 թվականի դեկտեմբերի 19-ին Սանկտ Պետերբուրգում ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ծխախոտային արտադրանքի ակցիզների մասով հարկային քաղաքականության իրականացման սկզբունքների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

8 դեկտեմբերի 2020 թվականի
ՍԴՈ-1569



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**1989 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՄԱՍԻՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԳՐԻ՝ ՄԱՀԱՊԱՏԺԻ
ՎԵՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՍԸՆՏԻՐ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

8 դեկտեմբերի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ արդարադատության նախարարի տեղակալ Բ. Գրիգորյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1989 թվականի դեկտեմբերի 15-ին ստորագրված «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի՝ մահապատժի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 3-4(99-100)2020

վերացմանն ուղղված երկրորդ կամընտիր արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2020 թվականի հունիսի 25-ի N 1071-Ա որոշմամբ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի՝ մահապատժի վերացմանն ուղղված երկրորդ կամընտիր արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի հուլիսի 3-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2020 թվականի հուլիսի 3-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի՝ մահապատժի վերացմանն ուղղված երկրորդ կամընտիր արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 1989 թվականի դեկտեմբերի 15-ին:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը (այսուհետ՝ Դաշնագիր) ընդունվել է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 1966 թվականի դեկտեմբերի 16-ի 2200 Ա(XXI) բանաձևով և ուժի մեջ է մտել 1976 թվականի մարտի 23-ին: Հայաստանի Հանրապետությունը «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրին միացել է 1993 թվականի հունիսի 23-ին:

2. Սույն Արձանագրությունը Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրվել է 2019 թվականի սեպտեմբերի 29-ին:

3. Սույն Արձանագրությամբ նախատեսված է, մասնավորապես, որ

ա) Արձանագրության կողմ պետության իրավագործության ներքո գտնվող ոչ մի անձ չպետք է ենթարկվի մահապատժի (հոդված 1, մաս 1),

բ) Արձանագրության յուրաքանչյուր Կողմ պետությունն ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ իր իրավագրության շրջանակներում մահապատիժը վերացնելու համար (հոդված 1, մաս 2):

4. Հաջորդիվ, Արձանագրությամբ նախատեսված են նաև Արձանագրությամբ ստանձնվող պարտավորություններից վերապահման թույլատրելի շրջանակը (հոդված 2, մաս 1) և վերապահում կատարելու ընթացակարգը (հոդված 2, մասեր 2 և 3): Արձանագրությամբ նախատեսված է նաև, որ Դաշնագրով կողմ պետության կողմից ստանձնված պարտավորություններից նույն Դաշնագրի 4-րդ հոդվածով նախատեսված Դաշնագրով ստանձնված պարտավորություններից շեղման հնարավորությունը չի վերաբերվելու Արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված մահապատիժի արգելքին (հոդված 6, մաս 1):

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի «Բոլոր հանգամանքներում մահապատիժի վերացման մասին» թիվ 13-րդ արձանագրությամբ արդեն իսկ ստանձնել է միջազգային պարտավորություններ, որոնց համաձայն Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է, մասնավորապես, մահապատիժը վերացնելու պարտավորություն, երաշխավորելով, որ ոչ ոք չդատապարտվի կամ չենթարկվի մահապատիժի:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի «Բոլոր հանգամանքներում մահապատիժի վերացման մասին» թիվ 13-րդ արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ գործով Սահմանադրական դատարանը 2007 թվականի ապրիլի 17-ին ընդունել էր դրանց՝ Սահմանադրությանը համապատասխանելու մասին ՄԴՈ-694 որոշումը:

6. Սահմանադրական դատարանը, ուսումնասիրելով Արձանագրությամբ նախատեսված պարտավորությունների բնույթը, գտնում է, որ դրանք բխում են Սահմանադրության 24-րդ հոդվածի 3-րդ

մասի դրույթից, որով նախատեսված՝ կյանքի իրավունքի պաշտպանության սահմանափակումը բացառված է Սահմանադրության 76-րդ հոդվածով:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ց**.

1. 1989 թվականի դեկտեմբերի 15-ին ստորագրված «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի՝ մահապատժի վերացմանն ուղղված երկրորդ կամընտիր արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

8 դեկտեմբերի 2020 թվականի
ՍԴՈ-1570



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ
339-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ, ԴՐԱ ՀԵՏ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ
ԱՌՈՒՄՈՎ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՀԱՇՏԱՐԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 16-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ
ՄԱՍԻ՝ ԴՐԱՆՑ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ՏՐՎԱԾ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ, ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

8 դեկտեմբերի 2020թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 3-4(99-100)2020

կան դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 40, 41 և 69-րդ հոդվածների,

դոնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի դիմումի հիման վրա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասի, դրա հետ համակարգային առումով փոխկապակցված «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի՝ դրանց իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 9-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2018 թվականի փետրվարի 27-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ից:

Օրենսգրքի՝ «Դիմումի քննությունը» վերտառությամբ 339-րդ հոդվածի վիճարկվող 5-րդ մասը սահմանում է.

«5. Դատարանը դիմումի քննության ժամանակ պարզում է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմքերի առկայությունը կամ բացակայությունը»:

Օրենսգրքի վերոհիշյալ հոդվածը լրացումների և փոփոխությունների չի ենթարկվել:

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2008 թվականի հունիսի 17-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2008 թվականի հուլիսի 12-ին և ուժի մեջ է մտել 2008 թվականի օգոստոսի 2-ից:

Օրենքի՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման վիճարկումը» վերտառությամբ 16-րդ հոդվածի վիճարկվող 1-ին մասը սահմանում է.

«1. Ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը կողմերը կարող են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով վիճարկել իրավասու դատարան ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելու միջոցով»:

Օրենքի վերոհիշյալ հոդվածը լրացվել է 2018 թվականի փետրվարի 9-ի ՀՕ-117-Ն ՀՀ օրենքով, մասնավորապես Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը «կարող են» բառերից հետո լրացվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով» բառերով:

Մինչ այդ, Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը գործում էր հետևյալ խմբագրությամբ. «1. Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմերի համար պարտադիր դարձած որոշումը կողմերը կարող են վիճարկել իրավասու դատարան ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելու միջոցով»:

Գործի քննության առիթը «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի՝ 2020 թվականի մայիսի 14-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանող կողմի գրավոր բացատրությունը, ինչպես նաև վերլուծելով Օրենսգրքի և Օրենքի համապատասխան նորմերը, վերջիններիս հետ փոխկապակցված այլ նորմերը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Ձ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը նշում է, որ մինչև Սահմանադրական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 9-ի ՄԴՈ-1051 որոշման կայացումը՝ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները ֆինանսական կազմակերպությունները բողոքարկում էին սահմանափակ հիմքերով, որոնք նախատեսված էին «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով: Հիշյալ որոշումից հետո ՀՀ դատարանները քննում էին Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումներն ըստ էության, ամբողջ ծավալով, մինչև վիճարկվող դրույթներն ուժի մեջ մտնելը:

Վիճարկվող դրույթներն ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ դատարանները տալիս են հետևյալ մեկնաբանությունը. «ՀՀ Սահմանադրական դատարանի 09.10.2012 թվականի թիվ ՄԴՈ-1051 որոշումը կայացնելուց հետո օրենսդիրը կանոնակարգել է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթը և նախանշել հստակ սահմաններ, ուստի քննարկվող դիմումներով վարույթը ենթակա է իրականացման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախա-

տեսված կանոնների համաձայն, որպիսի պայմաններում ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը ըստ էության վիճարկման ենթակա չէ»:

Դիմողը գտնում է, որ օրենսդիրը, Օրենսգրքի վիճարկվող դրույթն ընդունելով, ինչպես նաև փոփոխելով Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը, ըստ էության շրջանցել է Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1051 որոշման մեջ հստակ նշված այն մեկնաբանությունը, ըստ որի՝ եթե իրավաբանական անձն իր կամահայտնությամբ չի հրաժարվել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները դատական կարգով բողոքարկելու իրավունքից, ապա ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումների սահմանափակ բողոքարկման իրավունքը խախտում է անձի արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները:

Ելնելով վերոգրյալից դիմողը խնդրում է Օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասը, դրա հետ համակարգային առումով փոխկապակցված Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը՝ դրանց իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, ճանաչել Սահմանադրությանը հակասող և անվավեր:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը, վկայակոչելով Սահմանադրական դատարանի, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք դիրքորոշումներ, նշում է, որ դատարանի մատչելիության իրավունքը բացարձակ իրավունք չէ: Պատասխանողն անդրադառնում է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R(86)12 հանձնարարականին, որի 3-րդ պարագրաֆում անդամ պետություններին խորհուրդ է տրվում դատարանների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու համար ստեղծել համապատասխան մարմիններ, որոնք ներառված չեն դատական համակարգում և որոնց կողմերը կարող են դիմել ոչ մեծ գումարի հայցապահանջներով, ինչպես նաև իրավունքի կոնկրետ ոլորտների խնդիրներով վեճերի լուծման համար:

Ըստ պատասխանողի՝ գործող օրենսդրության համաձայն՝ Հաշտարարը հանդիսանում է անձանց իրավունքների պաշտպանության ապահովման այլընտրանքային ինքնուրույն ձև՝ օժտված վեճերի լուծման համար ինքնուրույնության բավարար աստիճանով: Պատասխանողը նշում է, որ Հաշտարարի կողմից կայացված և կողմերի համար դեռևս պարտադիր չդարձած որոշումը կարող է դատական կարգով վիճարկվել ըստ էության, եթե կողմերի միջև

առկա չէ Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից կամ մովի հրաժարվելու վերաբերյալ գրավոր համաձայնագիր: Մակայն, վիճարկվող դրույթը վերաբերում է կողմերի համար արդեն պարտադիր դարձած որոշմանը, որի չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումի քննության ժամանակ դատարանը պարզաբանում է պահանջի Հաշտարարին ենթակա չլինելու, Հաշտարարի կայացրած որոշման ընթացակարգային կանոնների պահանջների խախտման, Հաշտարարի անաչառությունը բացառող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Եզրափակելով, պատասխանողը գտնում է, որ Օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասը, դրա հետ համակարգային առումով փոխկապակցված Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում են Սահմանադրությանը:

3. Գործի շրջանակներում պարզելու ենթակա հանգամանքները

- արդյո ք Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ ֆինանսական կազմակերպության գրավոր համաձայնության բացակայության դեպքում Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները դատական կարգով ըստ էության վիճարկելու հնարավորության սահմանափակումը հանգեցնում է արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների խախտմանը:

- արդյո ք իրավակիրառ պրակտիկայում վիճարկվող նորմերին տրված մեկնաբանությունը համահունչ է Սահմանադրական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 9-ի ՄԴՈ-1051 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 74-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները և

ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ»:

Իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորող վերոհիշյալ սահմանադրական դրույթների բովանդակությունը բխում է մարդու իրավունքների պաշտպանության միջազգային հանրահայտ փաստաթղթերի պահանջներից, ինչպիսիք են՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան և այլն:

Իրավունքների պաշտպանության միջոցների շարքում դատական պաշտպանությունն առանձնահատուկ տեղ է գրավում, քանի որ իրականացվում է իշխանության տարանջատման համակարգում ինքնուրույն և անկախ կարգավիճակ ունեցող մարմնի կողմից: Դատական պաշտպանության իրավունքը բնութագրվում է որպես անձի հիմնական անօտարելի իրավունքներից մեկը և միաժամանակ որպես այլ իրավունքների ու ազատությունների ապահովման միջոց և երաշխիք:

Պետությունը պետք է ստեղծի անհրաժեշտ երաշխիքներ մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացման համար: Պետությունը պարտավորվում է ոչ միայն ճանաչել, պահպանել և պաշտպանել իրավունքները և ազատությունները, այլև ստեղծել պետական-իրավական այնպիսի կառուցակարգեր, որոնք արդյունավետ ձևով կարող են կանխել, վերացնել դրանց ցանկացած խախտումներ, վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն ևս արդարադատության մատչելիության իրավունքը հանդիսանում է արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարր. «... Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի

տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում» (*Case of KREUZ v. POLAND, application no. 28249/95, 19/06/2001*):

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով հանգամանորեն անդրադարձել է արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատական քննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին՝ կարևորելով դրանք որպես դատական պաշտպանության իրավունքի անհրաժեշտ բաղադրատարրեր՝ հավասարապես ընդգծելով դրանց կարևորությունը դատաբնօրհասակարգային բնագավառներում (քրեական, քաղաքացիական և վարչական):

Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանն իր՝ 28.11.2007թ. ՄԴՈ-719 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «...հայցը կամ դիմումը դատարան իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում, ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ...»:

Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների իրավակարգավորման հիմքում դրված են անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման սահմանադրաիրավական այն սկզբունքները, որոնց համատեքստում Սահմանադրական դատարանն իր վերոհիշյալ որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ: Այդ դիրքորոշումներն արտացոլում են նաև միջազգային իրավական փորձի համալիր ուսումնասիրության արդյունքները:

Միաժամանակ, դատարանի մատչելիության սահմանափակումների վերաբերյալ ՄԻԵԴ-ի արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «... պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի

դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (*Case of Khalfaoui v. France, application no. 34791/97, 14/03/2000*):

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում ևս անդրադարձել է դատարանի մատչելիության սահմանափակումների հարցին: Սասնավորապես, իր 24.09.2019թ. ՄԴՈ-1477 որոշման մեջ Սահմանադրական դատարանն ամրագրել է հետևյալը.

«- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես Սահմանադրության 63-րդ հոդվածով երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը»:

4.2. Օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն.

«5. Դատարանը դիմումի քննության ժամանակ պարզում է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմքերի առկայությունը կամ բացակայությունը»:

Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմերի համար պարտադիր դարձած որոշումը կողմերը կարող են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով վիճարկել իրավասու դատարան ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելու միջոցով»:

Օրենքի 17-րդ հոդվածի համաձայն.

«1. Իրավասու դատարանը չեղյալ է ճանաչում Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմերի համար պարտադիր դարձած որոշումը, եթե

1) պահանջը ենթակա չէ քննության Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից.

2) Ֆինանսական համակարգի հաշտարարը որոշում է կայացրել սույն օրենքով սահմանված ընթացակարգային կանոնների պահանջների խախտմամբ.

3) բացահայտվել են Ֆինանսական համակարգի հաշտարարի անաչառությունը բացառող հանգամանքներ»:

Սահմանադրական դատարանն իր՝ 09.10.2012թ. ՄԴՈ-1051 որոշման մեջ մանրամասն վերլուծության է ենթարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումների բողոքարկման ինստիտուտը.

«Սպառողների վեճերի արտադատական լուծման համար պատասխանատու մարմինների վրա տարածվող սկզբունքների մասին» Եվրոպական հանձնաժողովի 1998 թվականի մարտի 30-ի թիվ 98/257/EC հանձնարարականով սահմանված վեճերի լուծման արտադատական մարմինների, այդ թվում՝ օմբուդսմենների (հաշտարարների) գործունեության սկզբունքներից չափազանց սկզբունքի բովանդակությունը հանգում է հետևյալին՝ որոշումը կողմերի համար կարող է դառնալ պարտադիր միայն այն դեպքում, երբ կողմերը նախապես տեղյակ են եղել որոշման պարտադիր բնույթի մասին և հատուկ ընդունել են այն:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոհիշյալ հարցով «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումներն ուղղակի նախատեսում են Հաճախորդի ազատ կամահայտնությունը: Օրենքում առկա չէ որևէ դրույթ, որն ուղղակիորեն կվերաբերի Հաշտարարի որոշումը Կազմակերպության կողմից «հատուկ ընդունելուն», սակայն օրենքը նախատեսում է դրույթ, համաձայն որի Կազմակերպությունը կարող է Հաշտարարի գրասենյակի հետ կնքել գրավոր համաձայնագիր Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ (մասնավորապես՝ հոդվածներ 7 և 16): Վերջինս, հանդիսանալով Կազմակերպության ազատ կամահայտնության արդյունք, ըստ էության հավասարազոր է Հաճախորդի կողմից անվերապահորեն և գրավոր ձևով Հաշտարարի որոշումներին համաձայնելուն, այսինքն՝ այդ դեպքում **կողմերը կամավոր սահմանափակում են ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով սահմանված իրենց իրավունքների լիարժեք իրացման հնարավորությունը:**

Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ Կազմակերպությունը Հաշտարարի գրասենյակի հետ կնքված գրավոր համաձայնագրով, այսինքն՝ **իր ազատ կամահայտնությամբ**, հրաժարվում է Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից, օրենքով սահմանված հիմքերով Հաշտարարի կողմերի համար պարտադիր դարձած որոշումը վիճարկելու

սահմանափակ հնարավորություն նախատեսելն իրավաչափ է և սահմանադրականության խնդիր չի հարուցում: Իսկ այն դեպքում, երբ առկա չէ հիշյալ գրավոր համաձայնագիրը, Հաշտարարի որոշումներն իրավասու դատարան վիճարկելու հիմքերի սահմանափակումը՝ այնքանով, որքանով չի նախատեսում այդ որոշումները դատական կարգով ըստ էության վիճարկելու հնարավորություն, իրավաչափ չէ և հանգեցնում է ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով սահմանված իրավունքների իրացման արգելափակմանը: Իսկ մարդու և քաղաքացու հիշյալ իրավունքներն ու ազատությունները, ինչպես և սահմանված է ՀՀ Սահմանադրության 42.1-րդ հոդվածով, տարածվում են իրավաբանական անձանց վրա՝ այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ: Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը կարևոր է համարում շեշտել, որ այդ իրավունքների ու ազատությունների իրավաբանական անձանց նկատմամբ կիրառելի լինելու իրավակարգավորիչ դերը երաշխավորում է ոչ միայն իրավաբանական անձանց, այլև դրանցում միավորված ֆիզիկական անձանց իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության իրավական հնարավորություն»:

Հետևապես, Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ Օրենքի 17-րդ հոդվածի դրույթով Կազմակերպության՝ դատարան դիմելու իրավունքի սահմանափակումները համապատասխանում են Սահմանադրությանը միայն այն իրավակարգավորման շրջանակներում, երբ Կազմակերպությունը ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից կամովի հրաժարվելու վերաբերյալ օրենքով սահմանված կարգով համաձայնագիր է կնքել վերջինիս գրասենյակի հետ:

Սահմանադրական դատարանը շեշտում է նաև, որ իր որոշումները պետք է ընկալվեն իրենց կառուցվածքային ամբողջության մեջ (նախաբան, նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասեր)՝ ապահովելու այդ որոշումներով առաջադրված իրավակարգավորման բովանդակության, սկզբունքների ու առանձնահատկությունների, ինչպես նաև դրանցից բխող օրյեկտիվ և սուբյեկտիվ վարքագծի կանոնների իրացման հստակությունը: Այդ խնդրի իրագործմանն են միտված հատկապես Սահմանադրական դատարանի որոշումների նկարագրական-պատճառաբանական մասում արտահայտված **իրավական դիրքորոշումները**, որոնցում, որպես կա-

նոն, բովանդակվում են Սահմանադրական դատարանին հասցեագրված դիմումների առարկայի (բարձրացված հարցերի, սահմանադրաիրավական վեճերի) իրավավերլուծության արդյունքում դատարանի կողմից արված և որոշման եզրափակիչ մասի հիմքում դրված եզրահանգումները, որոնց էության և բովանդակության անտեսման դեպքում չի կարող երաշխավորվել դատարանի որոշման կատարումը:

4.3. Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/5370/02/14 քաղաքացիական գործով 02.12.2016թ. որոշմամբ տրվել է հետևյալ մեկնաբանությունը. «...Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Հաշտարարի որոշումը հաճախորդի կողմից ընդունելու պարագայում դառնում է պարտադիր և Կազմակերպությունն այդ որոշումը կարող է ըստ էության վիճարկել դատական կարգով, եթե նա Հաշտարարի գրասենյակի հետ կնքած գրավոր համաձայնագրով չի հրաժարվել Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից, իսկ այն դեպքում, երբ առկա չէ նման գրավոր համաձայնություն, ապա կազմակերպությունը Հաշտարարի որոշումը կարող է վիճարկել ոչ թե ըստ էության, այլ միայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով նախատեսված սահմանափակ հիմքերով»:

Սահմանադրական դատարանի 09.10.2012թ. ՄԴՈ-1051 որոշումից հետո Օրենսդիրը 09.02.2018թ. ՀՕ-117-Ն ՀՀ օրենքով փոփոխություն է կատարել Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում, ըստ որի՝ նշված մասը «կարող են» բառերից հետո լրացվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով» բառերով, որն ուժի մեջ է մտել 09.04.2018թ.:

Վերոնշյալ փոփոխությունից հետո Օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասի, ինչպես նաև վերջինիս հետ փոխկապակցված «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 17-րդ հոդվածի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի կողմից իրավական մեկնաբանություն չի տրվել, իսկ վերաքննիչ քաղաքացիական դատարանում տրվել է հետևյալ մեկնաբանությունը. «... ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 337-340-րդ հոդվածներով սահմանված են ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը չեղյալ ճանաչելու ընթացակարգին վերաբերող հատուկ նորմեր: Մասնավորապես ֆինանսական համակարգի հաշտարարի համապատասխան որոշման չեղյալ ճանաչման մասին դիմումը քննող

դատարանը սահմանափակվում է միայն պարզելով «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով նախատեսված հիմքերի առկայությունը կամ բացակայությունը: Հետևաբար օրենքով նախատեսված չեղյալ ճանաչելու հիմքերի առկայության դեպքում է միայն դատարանը որոշում կայացնում ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու մասին: (...)

(...) Վերաքննիչ դատարանը եզրահանգում է, որ ՀՀ Սահմանադրական դատարանի 09.10.2012 թվականի թիվ ՍԴՈ-1051 որոշումը կայացնելուց հետո օրենսդիրը կանոնակարգել է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթը և նախանշել հստակ սահմաններ, ուստի քննարկվող դիմումներով վարույթը ենթակա է իրականացման գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված կանոնների համաձայն, որպիսի պայմաններում ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը ըստ էության վիճարկման ենթակա չէ: Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել նաև, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 337-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է կազմակերպության կողմից ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը դատական կարգով վիճարկելու հնարավորության սահմանափակում այն դեպքում, երբ ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հետ կնքված համաձայնագրով կազմակերպությունը հրաժարվել է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից, որպիսի կարգավորումը համահունչ է ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1051 որոշմանը:

Միաժամանակ, սակայն, ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի ու դրան համապատասխան փոփոխված «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի հիմքով վերոնշյալ համաձայնագրի բացակայության դեպքում ֆինանսական համակարգի հաշտարարի` կողմերի համար պարտադիր դարձած որոշումը կարող է չեղյալ ճանաչվել միայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով, և ոչ թե ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման իրավաչափության ըստ էության քննության արդյունքում» (09.10.2019 թիվ ԵԿԴ/2336/02/17 քաղաքացիական գործ):

Վերոնշյալի հիման վրա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրի կողմից կատարված փոփոխության արդյունքում ներկայիս գործող կարգավորումը, դրան իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը համահունչ չեն Սահ-

մանադրական դատարանի 09.10.2012թ. ՄԴՈ-1051 որոշման մեջ Սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշմանը, քանի որ Սահմանադրական դատարանը հստակորեն արձանագրել էր, որ Հաշտարարի որոշումներն իրավասու դատարան վիճարկելու հիմքերի սահմանափակումն այնքանով, որքանով չի նախատեսում այդ որոշումները դատական կարգով ըստ էության վիճարկելու հնարավորություն, իրավաչափ չէ և հանգեցնում է Սահմանադրության 61-րդ հոդվածով սահմանված իրավունքի իրացման արգելափակմանը, որի արդյունքում և Օրենսդիրը պետք է կարգավորումը ձևակերպեր այնպես, որ Կազմակերպությանն ընձեռեր Հաշտարարի որոշումն ըստ էության վիճարկելու հնարավորություն, քանի որ ՄԴՈ-1051 որոշման ամբողջ էությունը հանդիսացել է տվյալ պահին գործող կարգավորմամբ առկա ոչ իրավաչափ սահմանափակման վերացումը:

Միննույն ժամանակ, վերոգրյալով չի բացառվում վեճերի լուծման այլընտրանքային միջոցների կիրառմամբ դատարանների ծանրաբեռնվածության թեթևացման և/կամ այլ իրավաչափ նպատակ հետապնդող նկատառումներից ելնելով տարբեր արտադատական ինստիտուտների և ընթացակարգերի ներդրումը վեճերի լուծման ներպետական համակարգում: Այդուհանդերձ, դա պետք է իրականացվի դատարանի մատչելիության և արդար դատաքննության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո: Մասնավորապես, պետության պոզիտիվ պարտականությունն է ապահովել, որ կիրառված սահմանափակումներն այն աստիճանի չսահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Իսկ դրա համար անհրաժեշտ է ապահովել սահմանափակման նպատակի իրավաչափությունը, կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև համաչափության ողջամիտ հարաբերակցությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ նշված դրույթը չի սահմանափակում Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հետ գրավոր համաձայնագիր չկնքած Կազմակերպության կողմերի համար պարտադիր դարձած որոշումը դատական կարգով **ըստ էության** վիճարկելու իրավունքը:

2. «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

3. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով, քանի որ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասը դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման առաջին կետում տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

4. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

8 դեկտեմբերի 2020 թվականի
ՍԴՈ-1571



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ**

Հ Ա Տ ՈՒ Կ Կ Ա Ր Ծ Ի Ք

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ ՍԴՈ-1571 ՈՐՈՇՄԱՆ
ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ-ի դիմումի հիման վրա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասի, դրա հետ համակարգային առումով փոխկապակցված «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի դրանց իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2020 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ ՍԴՈ-1571 որոշմամբ (հրապարակվել է 11.12.2020 թվականին) որոշել է.

«1. Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, համաձայն որի նշված դրույթը չի սահմանափակում Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հետ գրավոր համաձայնագիր չկնքած Կազմակերպության կողմերի համար պարտադիր դարձած որոշումը դատական կարգով ըստ էության վիճարկելու իրավունքը:

2. «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

3. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով, քանի որ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասը դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման առաջին կետում տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ: (...):»:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2020 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ ՍԴՈ-1571 որոշման հետ՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ իմ հատուկ կարծիքը՝ որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության **ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ**, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Այսինքն՝ Սահմանադրական դատարանի դատավորը հատուկ կարծիքում ոչ թե պատճառաբանում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը համապատասխանելու կամ չհամապատասխանելու վերաբերյալ իր դիրքորոշումը, այլ հիմնավորում է իր անհամաձայնությունը Սահմանադրական դատարանի **որոշման պատճառաբանական և (կամ) եզրափակիչ մասին (մասերին)**:

Տվյալ դեպքում Սահմանադրական դատարանը 2020 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ ՍԴՈ-1571 որոշման 4.1 կետում (էջեր 5-8) բացահայտել է դատական պաշտպանության, արդարադատության մատչելիության, արդար դատաքննության իրավունքների էությունը: Որոշման 4.2 կետում (էջեր 8-11) Սահմանադրական դա-

տարանը վկայակոչել է օրենսդրական կարգավորումներ, ապա մեջբերել Սահմանադրական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ ՄԴՈ-1051 որոշման պատճառաբանությունների զգալի մասը (էջեր 9-11): Որոշման 4.3 կետում (էջեր 11-13) Սահմանադրական դատարանը վկայակոչել է Վճռաբեկ դատարանի կողմից թիվ ԵԿԴ/5370/02/14 քաղաքացիական գործով 2016 թվականի դեկտեմբերի 2-ի որոշմամբ հայտնած դիրքորոշումը, ապա ներկայացրել է կատարված օրենսդրական փոփոխությունների էությունը և ձևավորված դատական պրակտիկան մեջբերելով թիվ ԵԿԴ/2336/02/17 քաղաքացիական գործով Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2019 թվականի հոկտեմբերի 9-ի որոշման պատճառաբանական մասից հատվածներ: Այնուհետև Սահմանադրական դատարանը ներկայացրել է վիճարկվող դրույթների սահմանադրականության վերաբերյալ իր հիմնավորումները՝ հայտնելով միայն հետևյալը.

«Վերոնշյալի հիման վրա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրի կողմից կատարված փոփոխության արդյունքում ներկայիս գործող կարգավորումը, դրան իրավակիրատ պրակտիկայում տրված մեկնաբանությունը համահունչ չեն Սահմանադրական դատարանի 09.10.2012թ. ՄԴՈ-1051 որոշման մեջ Սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշմանը, քանի որ Սահմանադրական դատարանը հստակորեն արձանագրել էր, որ Հաշտարարի որոշումներն իրավասու դատարան վիճարկելու հիմքերի սահմանափակումն այնքանով, որքանով չի նախատեսում այդ որոշումները դատական կարգով ըստ էության վիճարկելու հնարավորություն, իրավաչափ չէ և հանգեցնում է Սահմանադրության 61-րդ հոդվածով սահմանված իրավունքի իրացման արգելափակմանը, որի արդյունքում և Օրենսդիրը պետք է կարգավորումը ձևակերպեր այնպես, որ Կազմակերպությանն ընձեռներ Հաշտարարի որոշումն ըստ էության վիճարկելու հնարավորություն, քանի որ ՄԴՈ-1051 որոշման ամբողջ էությունը հանդիսացել է սովյալ պահին գործող կարգավորմամբ առկա ոչ իրավաչափ սահմանափակման վերացումը:

Մինևույն ժամանակ, վերոգրյալով չի բացառվում վեճերի լուծման այլընտրանքային միջոցների կիրառմամբ դատարանների ծանրաբեռնվածության թեթևացման և/կամ այլ իրավաչափ նպատակ հետապնդող նկատառումներից ելնելով տարբեր արտադատական ինստիտուտների և ընթացակարգերի ներդրումը վեճերի

լուծման ներպետական համակարգում: Այդուհանդերձ, դա պետք է իրականացվի դատարանի մատչելիության և արդար դատաքննության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո: Մասնավորապես, պետության պոզիտիվ պարտականությունն է ապահովել, որ կիրառված սահմանափակումներն այն աստիճանի չսահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Իսկ դրա համար անհրաժեշտ է ապահովել սահմանափակման նպատակի իրավաչափությունը, կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև համաչափության ողջամիտ հարաբերակցությունը:»:

Նկատի ունենալով, որ Սահմանադրական դատարանն իր որոշման մեջ ներկայումս գործող օրենսդրական կարգավորումների շրջանակներում որևէ նոր դիրքորոշում չի ներկայացնում և փաստորեն կրկնում է 2012 թվականի հոկտեմբերի 9-ին հայտնած իր դիրքորոշումը, իսկ որոշման պատճառաբանական մասում վերհանված և վերլուծված չեն նախկին և գործող կարգավորումների միջև առկա տարբերությունները, վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների էությունը՝ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իրավունքների էության լույսի ներքո, սույն հատուկ կարծիքի պատշաճ իրավական հիմնավորվածությունն ապահովելու համար հարկ էմ համարում անդրադառնալ հետևյալ իրավական հիմնահարցերին.

1. Ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումի քննության ընթացքում ընդհանուր իրավասության դատարանն արդյո՞ք իրավասու է անդրադառնալ Հաշտարարի որոշման հիմնավորվածությանը և քննության առարկա դարձնել որոշման **նյութաիրավական հիմնավորվածությունը**:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 339-րդ հոդվածի 5-րդ մասը, դրա հետ համակարգային առումով փոխկապակցված «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասը՝ դրանց իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, արդյո՞ք համապատասխանում են Սահմանադրությանը:

Դատարան դիմելու իրավունքը դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի անքակտելի տարրն է: Միևնույն ժամանակ վեճերի այլընտրանքային լուծման մարմինների ստեղծումն ուղղված է վեճերի արագ և արդյունավետ լուծմանը: Եվ հենց արդարադատության արդյունավետության և մատչելիության ապահովման տեսանկյունից կարևորվում է վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացումը: Նման պայմաններում անհրաժեշտ է օրենսդրությամբ հավասարակշռել վեճերի լուծման այլընտրանքային եղանակների արդյունավետ գործունեությունը դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների հետ:

Շուկայական տնտեսության զարգացմանը և ֆինանսական ոլորտի կազմակերպությունների գործունեության ընդլայնմանը զուգահեռ կարևորվում է սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը՝ նկատի ունենալով քաղաքացիաիրավական շրջանառությունում վերջիններիս ավելի «թույլ» դիրքում լինելը շուկայում ավելի պրոֆեսիոնալ մասնակիցների (մասնավորապես բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և այլն) հետ հարաբերություններում: Պատահական չէ, որ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 2015 թվականի դեկտեմբերի 22-ի 70/186 բանաձևում (General Assembly Resolution 70/186 on Consumer Protection (A/RES/70/186)) ընդգծվում է **սպառողների պահանջների** բավարարման արդյունավետ ընթացակարգեր նախատեսելու անհրաժեշտությունը (3-րդ բաժին, 5-րդ կետ): Բանաձևի 5-րդ բաժնի «F» գլխում, որը վերաբերում է վեճերի լուծմանը և փոխհատուցմանը (պահանջների բավարարմանը), կարևորվում է իրավական այնպիսի միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը, որոնք հնարավորություն կընձեռեն սպառողներին ներկայացնել իրենց պահանջներն **արդյունավետ**, արդար և հասանելի ընթացակարգերի (այդ թվում՝ վեճերի այլընտրանքային լուծման) միջոցով: Ընդ որում, կարևորվում է սպառողների պահանջների **արագ**, արդարացի, թափանցիկ, **ոչ թանկ**, **հասանելի** և **չձևականացված (ոչ ֆորմալ)** քննությունը (5-րդ բաժին, 37-41-րդ կետեր):¹

Հայաստանի Հանրապետությունում Ֆինանսական համակարգի հաշտարարի ինստիտուտը ներդրվել է 2008 թվականի հունիսի 17-ին ընդունված և 2008 թվականի օգոստոսի 2-ին ուժի մեջ մտած «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքով՝ հիմք ընդունելով «Դատարանների աշխատանքի չափազանց ծանրաբեռ-

¹ Տե՛ս https://unctad.org/system/files/official-document/ares70d186_en.pdf կայքում:

նվաճությունը կանխելու և նվազեցնելու միջոցառումների վերաբերյալ» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1986 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ R (86)12 հանձնարարականը (*Recommendation No. R (86) 12 Of The Committee of Ministers to Member States Concerning Measures to Prevent and Reduce the Excessive Workload in the Courts*) և «Սպառողների վեճերի արտադատական լուծման համար պատասխանատու մարմինների վրա տարածվող սկզբունքների մասին» Եվրոպական հանձնաժողովի 1998 թվականի մարտի 30-ի թիվ 98/257/EC հանձնարարականում (*Commission Recommendation of 30 March 1998 on The Principles Applicable to the Bodies Responsible for Out-Of-Court Settlement of Consumer Disputes*) ամրագրված սկզբունքները: Վերջինս, ի թիվս այլնի, նախատեսում է արդյունավետության սկզբունքը, որը մասնավորապես ենթադրում է, որ պահանջի ներկայացման և որոշման կայացման միջև կարճ ժամանակ պետք է լինի:² Ընդ որում, Օրենքի ընդունման հիմնավորումներում նշվել է, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի նպատակը ֆինանսական ոլորտում սպառողների իրավունքների պաշտպանությունն է, նրանց բողոքների արագ, արդյունավետ և անվճար քննությունը, ֆինանսական համակարգի նկատմամբ հանրության վստահության բարձրացումը և ֆինանսական միջնորդության ավելացումը:³

Վերոգրյալի հիման վրա հարկ եմ համարում ընդգծել, որ հատկապես սպառողների մասնակցությամբ վեճերի այլընտրանքային լուծման համակարգերի (այդ թվում՝ Ֆինանսական համակարգի հաշտարարի) գործունեության արդյունավետությունը որոշվում է հաշվի առնելով, թե որքան արագ, արդարացի և ոչ ծախսատար եղանակով է սպառողը հասնում իր հարուցած վեճի լուծմանը: Ուստի, եթե պահանջի ներկայացման և վեճի վերջնական լուծման միջև ժամանակային տևողությունը երկար կամ ծախսատար լինի, ինչն անխուսափելի է դատարանների չափազանց ծանրաբեռնվածության⁴ և արդարադատության թանկարժեքության պայմաններում, ապա ոչ միայն խախտվում է արդյունավետության սկզբունքը,

² Տե՛ս <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A31998H0257> կայքում:

³ Տե՛ս օրենքի ընդունման հիմնավորումները <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=2905&Reading=0> կայքում:

⁴ Նշված հարցը բազմիցս բարձրաձայնվում է պետական իշխանության տարբեր մարմինների կողմից՝ այդ թվում առաջարկելով զարգացնել Հայաստանի Հանրապետությունում վեճերի այլընտրանքային լուծման միջոցները (տե՛ս, օրինակ, Բարձրագույն դատական խորհրդի կողմից մշակված «Հայաստանի Հանրապետությունում արդարադատության արդյունավետության համալիր բարելավման մասին» 2018թ. հայեցակարգը, «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 10.10.2019թ. որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը):

այլ նաև խաթարվում է վեճերի այլընտրանքային, արտադատական լուծման մեխանիզմների ողջ էությունը:

Գտնում եմ, որ գործող օրենսդրական կարգավորումն ապահովում է Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով վեճերի այլընտրանքային, արտադատական լուծման արդյունավետության և դատական պաշտպանության իրավունքի միջև արդարացի հավասարակշռությունը՝ ապահովելով ինչպես Հաճախորդի կողմից իր իրավունքների արդյունավետ պաշտպանությունը, այնպես էլ Կազմակերպության կողմից իր սահմանադրական իրավունքների արդյունավետ իրացումը:

Այսպես, Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը դատական կարգով վիճարկելու կողմերի իրավունքը: Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ Կազմակերպությունը կարող է Գրասենյակի հետ կնքված գրավոր համաձայնագրով հրաժարվել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից:

Միևնույն ժամանակ Օրենքի 17-րդ հոդվածով սահմանված են իրավասու դատարանի կողմից Ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը չեղյալ ճանաչելու հետևյալ երեք հիմքերը.

1) պահանջը ենթակա չէ քննության Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից.

2) Ֆինանսական համակարգի հաշտարարը որոշում է կայացրել նույն օրենքով սահմանված ընթացակարգային կանոնների պահանջների խախտմամբ.

3) բացահայտվել են Ֆինանսական համակարգի հաշտարարի անաչառությունը բացառող հանգամանքներ:

Սահմանադրական դատարանը 2012 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ ՍԴՈ-1051 որոշմամբ նշել է, որ Օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով Կազմակերպության՝ դատարան դիմելու իրավունքի սահմանափակումները համապատասխանում են Սահմանադրությանը **միայն այն իրավակարգավորման շրջանակներում**, երբ Կազմակերպությունը Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից կամովին հրաժարվելու վերաբերյալ օրենքով սահմանված կարգով համաձայնագիր է կնքել վերջինիս գրասենյակի հետ:

Վերոնշյալից բխում է, որ Սահմանադրական դատարանը Կազմակերպության՝ դատարան դիմելու իրավունքի սահմանափա-

կումները Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչել այն դեպքում, երբ Կազմակերպությունը Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից կամովին հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր է կնքել վերջինիս գրասենյակի հետ, իսկ այն դեպքում, երբ առկա չէ գրավոր համաձայնագիր, Հաշտարարի որոշումներն իրավասու դատարան վիճարկելու հիմքերի՝ Օրենքի 17-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումները չեն գործում, և Կազմակերպությունն ունի Հաշտարարի որոշումները դատական կարգով **ըստ էության** վիճարկելու հնարավորություն:

Ընդ որում, պետք է ընդգծել, որ Սահմանադրական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ ՍԴՈ-1051 որոշման կայացումից հետո Օրենքի 17-րդ հոդվածը փոփոխությունների չի ենթարկվել:

Սահմանադրական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ ՍԴՈ-1051 որոշման կայացումից հետո՝ 2016 թվականի դեկտեմբերի 2-ին, թիվ ԵԿԴ/5370/02/14 քաղաքացիական գործով կայացրած որոշմամբ Վճռաբեկ դատարանը կիրառել է Սահմանադրական դատարանի նշված որոշումը և այդ նույն որոշման հիման վրա եզրահանգել, որ Հաշտարարի որոշումը հաճախորդի կողմից ընդունելու պարագայում դառնում է պարտադիր, և Կազմակերպությունն այդ որոշումը կարող է ըստ էության վիճարկել դատական կարգով, եթե նա Հաշտարարի գրասենյակի հետ կնքած գրավոր համաձայնագրով չի հրաժարվել Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից, իսկ այն դեպքում, երբ առկա է նման գրավոր համաձայնություն, ապա Կազմակերպությունը Հաշտարարի որոշումը կարող է վիճարկել ոչ թե ըստ էության, այլ միայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով նախատեսված սահմանափակ հիմքերով:

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1051 որոշման և դրա հիման վրա կայացված Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/5370/02/14 քաղաքացիական գործով որոշման համաձայն՝ Ֆինանսական համակարգի հաշտարարի պարտադիր դարձած որոշումը՝

1) կարող էր վիճարկվել «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքի 17-րդ հոդվածով նախատեսված **սահմանափակ** հիմքերով՝ անկախ նրանից Կազմակերպությունը հրաժարվել է պարտադիր դարձած որոշումը վիճարկելու հնարավորությունից, թե ոչ,

2) իսկ **ըստ էության** կարող էր վիճարկվել միայն այն Կազմակերպության կողմից, ով չէր հրաժարվել Ֆինանսական համակարգի հաշտարարի պարտադիր դարձած որոշումը վիճարկելու իրավունքից:

Հարկ է նշել, որ ինչպես Սահմանադրական դատարանի 2012 թվականի թիվ ՍԴՈ-1051 որոշումը, այնպես էլ Վճռաբեկ դատարանի 2016 թվականի թիվ ԵԿԴ/5370/02/14 որոշումն ընդունվել են նախորդ քաղաքացիական դատավարության օրենսգրքի գործողության պայմաններում, որը որևէ կարգավորում չէր պարունակում Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումների վիճարկման (չեղյալ ճանաչման) վերաբերյալ:

Մինչդեռ գործող Օրենսգրքով նախատեսվել են Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթին վերաբերող մի շարք իրավակարգավորումներ: Մասնավորապես, Օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվել է, որ Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմերի համար պարտադիր դարձած որոշումը կողմերը կարող են վիճարկել դատական կարգով Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելու միջոցով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմերի համար պարտադիր դարձած որոշումը չի կարող վիճարկել այն կազմակերպությունը, որը ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հետ կնքված համաձայնագրով հրաժարվել է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից:*

Օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *դատարանը դիմումի քննության ժամանակ պարզում է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմքերի առկայությունը կամ բացակայությունը:*

Մինևույն ժամանակ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-117-Ն օրենքի 2-րդ հոդվածով «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը

փոփոխվել է, և «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը «կարող են» բառերից հետո լրացվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով» բառերով՝ ստանալով հետևյալ խմբագրությունը. *«Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմերի համար պարտադիր դարձած որոշումը կողմերը կարող են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով վիճարկել իրավասու դատարան ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելու միջոցով»:*

Վերոնշյալ նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ Սահմանադրական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ ՍԴՈ-1051 որոշումը կայացնելուց հետո Օրենքով նախատեսվել է, որ Հաշտարարի որոշումը կարող է վիճարկվել Օրենսգրքով սահմանված կարգով, իսկ Օրենսգրքով նախատեսվել են այն սահմանները, որի շրջանակում դատարանը պետք է քննի Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմերի համար պարտադիր դարձած որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումը: Մասնավորապես, դատարանը պարզում է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու՝ Օրենքով նախատեսված հիմքերի առկայությունը կամ բացակայությունը և չեղյալ է ճանաչում Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը, եթե պարզում է, որ պահանջը ենթակա չէ քննության Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից կամ Ֆինանսական համակարգի հաշտարարը որոշում է կայացրել Օրենքով սահմանված ընթացակարգային կանոնների պահանջների խախտմամբ կամ բացահայտվել են Ֆինանսական համակարգի հաշտարարի անաչառությունը բացառող հանգամանքներ: Դատարանը վերոնշյալ սահմաններում դիմումի քննության արդյունքներով իր որոշմամբ ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է դիմումը՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն չեղյալ ճանաչելով ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը կամ ամբողջությամբ մերժում է դիմումը:

Այլ կերպ ասած՝ դատարանն իրավասու չէ վերոնշյալ սահմաններից դուրս անդրադառնալ Հաշտարարի որոշման հիմնավորվածությանը և քննության առարկա դարձնել որոշման նյութաիրավական հիմնավորվածությունը և դիմումը քննելիս պարզում է միայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքի

17-րդ հոդվածով նախատեսված այն հիմքերի առկայությունը կամ բացակայությունը, որը դիմումատուն վիճարկում է դատարան ներկայացված դիմումով:

Պետք է ընդգծել նաև, որ Օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասի և Օրենքի 17-րդ հոդվածի կիրառության գծով դատական պրակտիկան ևս զարգացել է վերոնշյալ մեկնաբանությամբ:⁵

Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումներն ըստ էության վիճարկելու անթույլատրելիությունը բխում է վեճերի այլընտրանքային, արտադատական լուծման մեխանիզմների էությունից: Նույն մոտեցումն օրենսդիրը որդեգրել է ոչ միայն Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումների, այլ նաև օրինակ արբիտրաժի վճիռների վիճարկման հարցում: Վեճերի լուծման այլընտրանքային ձևերի էությունը հենց դատարանները շրջանցելն է՝ բացառությամբ խիստ սահմանափակ դեպքերի, երբ կասկած է առաջացնում ոչ թե վեճի լուծումը նյութաիրավական իմաստով, այլ վեճը լուծելու գործընթացի օրինականությունը:

Այսպիսով, ելնելով այն հանգամանքից, որ Օրենքի նպատակը ֆինանսական ոլորտում սպառողների իրավունքների և շահերի պաշտպանությունն է, **նրանց պահանջների արագ, արդյունավետ և անվճար քննությունը**, գտնում եմ, որ Օրենսդրի կողմից սահմանվել են այնպիսի կանոնակարգումներ, որոնք ուղղված են նշված նպատակի իրագործմանը: Հաշվի առնելով վերոհիշյալ նպատակները և դրանց կենսագործման անհրաժեշտությունը՝ հենց Սահմանադրական դատարանը թիվ ՄԴՈ-1051 որոշմամբ նշել է, որ կարևորում է Հաշտարարի ինստիտուտի դերը և նշանակությունը անձանց իրավունքների պաշտպանության, խախտված իրավունքների վերականգնման և վեճերի լուծման գործում՝ որպես 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով սահմանված իրավունքների իրացումն ապահովող **այլըն-**

⁵ Օրինակ՝ թիվ ԼԴ2/0039/02/19 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 19.06.2019 թվականի որոշմամբ նշել է հետևյալը. «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը նախատեսում է միայն ընթացակարգային կանոնների պահանջների պահպանված լինելու հանգամանքը պարզելու դատարանի պարտականությունը, և որևէ դրույթով նախատեսված չէ դատարանի լիազորությունը գնահատելու կայացված որոշման օրինաչափությունն ու հիմնավորվածությունը նյութական օրենսդրության նորմերի, դրանց կիրառման գործընթացների համատեքստում: Այլ կերպ ասած, նշված վարույթի շրջանակում դատարանը իրավասու է ստուգելու, թե արդյոք պահպանվել են «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի հոդվածներով նախատեսված որևէ գործողության տեղի ունենալու, կատարելու կամ կատարվելու կարգը, որևէ գործի իրականացման համար նախատեսված, ընդունված և հաստատված գործողությունների հետևողականությունն ու հաջորդականությունը: Քննարկվող նորմի իմաստով դատարանը այլ հանգամանքներ պարզելու կամ հաստատելու լիազորություն չունի»:

տրանքային, իրավական հնարավորություն: Մինչդեռ Սահմանադրական դատարանի 2020 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ ՍԴՈ-1571 որոշմամբ տրված մեկնաբանությունը նսեմացնում և անարդյունավետ է դարձնում Ֆինանսական համակարգի հաշտարարի ինստիտուտի դերը:

Կարևոր է ընդգծել, որ Ֆինանսական համակարգի հաշտարարը չի քննում այն պահանջները, որոնց վերաբերյալ վեճ է քննվում դատարանում կամ արբիտրաժային տրիբունալում, կամ որոնց վերաբերյալ առկա է դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վճիռ կամ որոշում: Եթե այդ հանգամանքները բացահայտվում են այն փուլում, երբ Հաճախորդի կողմից ներկայացված պահանջն արդեն իսկ քննվում է Հաշտարարի կողմից, ապա **Հաշտարարը պարտավոր է դադարեցնել պահանջի քննությունը:** Վերոնշյալը բխում է Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից, համաձայն որի Ֆինանսական համակարգի հաշտարարը մերժում է պահանջի քննությունը, եթե դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում քննվում է հաճախորդի և Կազմակերպության միջև նույն պահանջի առարկայի վերաբերյալ գործ, ինչպես նաև Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից, համաձայն որի Ֆինանսական համակարգի հաշտարարը իր որոշմամբ դադարեցնում է պահանջի քննությունը, եթե պահանջի քննության ընթացքում պարզվում է, որ դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում քննվում է հաճախորդի և Կազմակերպության միջև նույն պահանջի վերաբերյալ գործ:

Սահմանադրական դատարանը, թիվ ՍԴՈ-1051 որոշմամբ մեկնաբանելով ներկայացված իրավանորմերը, արձանագրել է, որ նշված կանոնակարգումից հետևում է, որ օրենսդիրը բացառում է ֆինանսական ոլորտում օրենքով նախատեսված շրջանակներում գույքային պահանջի քննության կառուցակարգային **անարդյունավետության դրսևորում:**

Նույն որոշմամբ Սահմանադրական դատարանը նաև նշել է. «Այն դեպքում, երբ Հաճախորդն անվերապահորեն և գրավոր ձևով համաձայնվում է Հաշտարարի որոշման հետ, վերջինս կողմերի համար դառնում է պարտադիր: (...) Այստեղից հետևում է, որ **մինչև անվերապահորեն և գրավոր ձևով որոշմանը համաձայնելը կամ որոշմանը չհամաձայնելու դեպքում ինչպես Հաճախորդը, այնպես էլ Կազմակերպությունը կարող են դիմել դատարան և պահանջել գործի ըստ էության քննություն:** Ինչն էլ փաստում է, որ այդ դեպքում Հաճախորդը և Կազմակերպությունը չեն զրկվում ՀՀ Սահմանա-

դրության 18 և 19-րդ հոդվածներով երաշխավորված իրենց իրավունքների իրացման հնարավորությունից»:

Այսինքն, Հաշտարարի կողմից **պահանջի քննության ողջ ընթացքում Կազմակերպությունը կարող է դիմել դատարան և պահանջել գործի ըստ էության քննություն, որի դեպքում Կազմակերպության դեմ ուղղված նույն պահանջի քննությունը Հաշտարարի կողմից բացառվում է, ուստի Կազմակերպությունները չեն զրկվում գործի ըստ էության քննություն ունենալու իրավունքից:**

Նշվածից հետևում է, որ այն պայմաններում, երբ Կազմակերպությունը սեփական կամքով հրաժարվում է վեճը դատարանում քննարկման առարկա դարձնելու իր իրավունքից, նման պայմաններում չի խաթարվում Կազմակերպությունների դատական պաշտպանության իրավունքի բուն էությունը, քանի որ նրանք ոչ թե ընդհանրապես զրկված են դատարան դիմելու իրավունքից, այլ միայն Հաշտարարի որոշումը պարտադիր դառնալուց հետո զրկվում են նույն վեճը նյութաիրավական առումով դատական քննության առարկա դարձնելու հնարավորությունից:

Նշվածը հիմնավորելու համար կարելի է նաև գուգահեռներ տանել Հաշտարարին ներկայացված պահանջի քննության ընթացքում Կազմակերպության կողմից դատարան (չ)դիմելու և քաղաքացիական դատավարության շրջանակներում պատասխանողի կողմից հակընդդեմ հայց (չ)ներկայացնելու միջև: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանողն իրավունք ունի մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը հակընդդեմ հայց ներկայացնել ընդդեմ հայցվորի՝ սկզբնական հայցի հետ համատեղ քննելու համար:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված հիմքով հակընդդեմ հայց չներկայացնելը պատասխանողին **զրկում է** հետագայում այնպիսի հայց ներկայացնելու հնարավորությունից, որը կարող էր ամբողջությամբ կամ մասնակիորեն բացառել սկզբնական հայցի բավարարումը, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է սույն հոդվածով սահմանված կարգով հակընդդեմ հայց ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:

Նշված հոդվածի բովանդակությունից հետևում է, որ եթե սկզբնական հայցով պատասխանողը Օրենսգրքի 140-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված հիմքով, այն է՝ *հակընդդեմ հայցի բավարարումն ամբողջությամբ կամ մասնակիորեն բացառում է*

սկզբնական հայցի բավարարումը, չի ներկայացնում հակընդդեմ հայց, ապա այլևս զրկվում է այդ հարցով հետագայում դատական պաշտպանություն հայցելու իրավունքից, նույնիսկ եթե հետագայում այդ հայցը ներկայացվել է հայցային վաղեմության ժամկետում: Նման կարգավորման նպատակը տվյալ գործի առավել արագ և արդյունավետ լուծումն է: Ընդ որում, Սահմանադրական դատարանը 2019 թվականի հունիսի 18-ի թիվ ՍԴՈ-1464 որոշմամբ արձանագրել է, որ Օրենսգրքի 140-րդ հոդվածի 4-րդ մասը **համապատասխանում է** Սահմանադրությանը:

Նույն կերպ, եթե Կազմակերպությունը Հաշտարարի կողմից պահանջի քննության ընթացքում չի դիմում դատարան, ապա տրամաբանական է, որ այլևս չի կարող այդ գործը դատարանում դարձնել քննարկման առարկա: Ավելին, եթե հակընդդեմ հայց չներկայացնելը պատասխանողին զրկում է հետագայում այդ գործով դատական պաշտպանություն ստանալու իրավունքից ընդհանրապես, ապա այս դեպքում Կազմակերպությունը ոչ թե ընդհանրապես է զրկվում դատական պաշտպանություն ստանալու իրավունքից, այլ կարող է հետագայում ևս հայցել դատական պաշտպանություն, սակայն Օրենքով նախատեսված սահմանափակ հիմքերի շրջանակում: Ընդ որում, Սահմանադրական դատարանը վերը վկայակոչված որոշմամբ հատկապես կարևորել է այն հանգամանքը, որ հակընդդեմ հայց ներկայացնելը միտված է արդարադատության արդյունավետության, մասնավորապես, տվյալ դատական գործի առավել **արդյունավետ** և **ողջամիտ ժամկետում** քննության իրավունքի ամրապնդմանը: Անհրաժեշտ եմ համարում ընդգծել, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքով որպես տվյալ օրենքի նպատակ է համարվում նաև Հաշտարարին ներկայացված պահանջների **արագ, արդյունավետ** և անվճար քննությունը:

Նկարագրված իրավիճակը ևս մեկ հավաստումն է այն հանգամանքի, որ առանձին դեպքերում անձինք կարող են ստիպված լինել դատական պաշտպանության իրենց իրավունքն իրացնել որոշակի ժամկետային սահմանափակումների շրջանակում, ինչը, սակայն, չի խաթարում այդ իրավունքի էությունը:

Անհրաժեշտ եմ համարում վկայակոչել նաև դատարանի մատչելիության սահմանափակումների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված իրավական դիրքորոշումները, որոնց համաձայն.

- այս իրավունքը **բացարձակ չէ**, և պետությունները կարող են այն իրացնելու հնարավորությունը պայմանավորել որոշակի պահանջներով և չափանիշներով (Luordo v. Italy, 2003թ. հոկտեմբերի 17-ի վճիռ, Staroszczyk v. Poland, 2007թ. հուլիսի 9-ի վճիռ, Stanev v. Bulgaria, 2012թ. հունվարի 17-ի վճիռ և այլն),

- պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել **որոշակի պայմաններ**, «...պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (Case of Khalfaoui v. France, application no. 34791/97, 14/03/2000),

- սահմանափակումները չեն կարող համապատասխանել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, եթե չեն հետապնդում **իրավաչափ նպատակ**, կամ բացակայում է ընտրված միջոցների և հետապնդվող իրավաչափ նպատակի միջև պատճառական կապը (Case of Marini v. Albania (application no. 3738/02), Judgment of 18 December 2007, para. 113):

Սահմանադրական դատարանը 2016 թվականի հուլիսի 12-ի թիվ ՍԴՈ-1293 որոշմամբ նշել է. «*դատարանի մատչելիությունը կարող է ունենալ այնպիսի սահմանափակումներ, որոնք չեն խաթարում այդ իրավունքի բուն էությունը, (...) իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանների առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և չհանգեցնի իրավունքի էության խախտման (...)*»:

Վերոշարադրյալ իրավանորմերի և իրավական դիրքորոշումների համապարփակ վերլուծությունից հետևում է, որ որոշակի սահմանափակումներն ինքնին չեն կարող դիտվել իբրև դատական պաշտպանության իրավունքի խախտում, սակայն այդ սահմանափակումները պետք է լինեն ողջամիտ, չհանգեցնեն այդ իրավունքի բուն էության խաթարման, ինչպես նաև սահմանափակման ու հե-

տապնդվող նպատակի միջև պետք է լինի արդարացի հավասարակշռություն:

Ամփոփելով վերոնշյալը՝ պետք է ընդգծել, որ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից չհրաժարված Կազմակերպություններն ընդհանրապես զրկված չեն իրենց և Հաշտարարին պահանջ ներկայացրած հաճախորդի միջև առկա վեճը դատարանում ըստ էության քննարկման առարկա դարձնելու հնարավորությունից, ուստի մինչև Հաշտարարի կողմից պահանջի քննության ավարտը սեփական կամքով այդ իրավունքից չօգտվելու դեպքում հետագայում Հաշտարարի որոշումը դատարանում սահմանափակ միայն Օրենքով նախատեսված հստակ հիմքերով վիճարկելու հնարավորություն ընձեռելն իրավաչափ է:

Ընդ որում, նման սահմանափակումը բխում է Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դրույթից, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների **արդյունավետ** դատական պաշտպանության իրավունք, իսկ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և **ողջամիտ ժամկետում** քննության իրավունք: Հետևաբար պետք է ընդգծել, որ դատական պաշտպանության արդյունավետության մասին կարելի է խոսել, եթե ի թիվս այլնի, ապահովված է նաև **իրավունքների և ազատությունների ողջամիտ ժամկետներում արդյունավետ պաշտպանությունը**: Մինչդեռ այն դեպքում, երբ Հաշտարարի կողմից պահանջի քննության արդյունքներով կայացված որոշումն ըստ էության բողոքարկելու և դատական կարգով նույն վեճը կրկին քննելու հնարավորություն է նախատեսվում, խախտվում է իրավունքների և ազատությունների **ողջամիտ ժամկետներում, հետևաբար նաև արդյունավետ** դատական պաշտպանության իրավունք ունենալու Սահմանադրությամբ նախատեսված պահանջն այնքանով, որքանով որ անձը, ով դիմում է իրավունքի պաշտպանության այլընտրանքային մարմնին՝ Ֆինանսական համակարգի հաշտարարին, զրկվում է ողջամիտ ժամկետում իրավունքի պաշտպանության հնարավորությունից և ավելի երկար ժամանակում է հասնում վեճի վերջնական հանգուցալուծմանը, քան անմիջապես դատական պաշտպանության դիմելու դեպքում: Մինչդեռ վեճերի լուծման այլընտրանքային մարմինները, ինչպիսին է նաև Ֆինանսական համակարգի հաշտարարը, կոչված են ապահովելու պահանջների արդյունավետ և արագ քննությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է արձանագրել, որ վիճարկվող դրույթները և դրանց պրակտիկայում տրված մեկնաբանությունը համապատասխանում են Սահմանադրությանը, քանի որ Կազմակերպության համար ապահովվում են անհրաժեշտ երաշխիքները: Նախ, Կազմակերպությունը սեփական կամահայտնությամբ է հրաժարվում Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից: Ընդ որում, նկատի ունենալով, որ Կենտրոնական բանկը և Գրասենյակն իրենց ինտերնետային կայքերում հրապարակում են այն Կազմակերպությունների ցանկը, որոնք Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագրեր չեն կնքել (հիմք՝ Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մաս), Կազմակերպությունը նախքան համաձայնագիր կնքելու կամ չկնքելու մասին որոշում կայացնելը հնարավորություն է ունենում գնահատելու մրցակցային շուկայում իր ռիսկերը, հետագայում հաճախորդներ ներգրավելու հնարավորությունը և ըստ այդմ կայացնել իր որոշումը՝ հրաժարվել կամ չհրաժարվել որոշումների վիճարկման հնարավորությունից: Բացի այդ, Կազմակերպությունը Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից պահանջի քննության ընթացքում իրավունք ունի դատարանում հայց ներկայացնելու միջոցով բացառել հաշտարարի կողմից պահանջի քննությունը:

Այսպիսով՝ նման պայմաններում պետք է արձանագրել, որ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը Օրենքով նախատեսված հիմքերով վիճարկելու իրավական պահանջն ինքնին չի արգելափակում Կազմակերպությունների՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման հնարավորությունը՝ հաշվի առնելով այն, որ նման իրավունքից Կազմակերպությունը կարող է անարգել օգտվել մինչև Հաշտարարի կողմից պահանջի քննության ավարտը, հետևաբար՝ նաև նման սահմանափակմամբ վնաս չի հասցվի դատարանի մատչելիության իրավունքի բուն էությանը: Հաշտարարի որոշումը Օրենքով նախատեսված հիմքերով վիճարկելու իրավական պահանջով հետապնդվում է իրավաչափ նպատակ, այն է՝ ողջամիտ ժամկետներում իրավունքի պաշտպանության հնարավորության ապահովումը:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասը, դրա հետ

համակարգային առումով փոխկապակցված «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը՝ դրանց իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, համապատասխանում են Մահմանադրությանը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԱՏԱՎՈՐ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«17» դեկտեմբերի 2020թ.

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցե՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81(189)
E-mail: armlaw@concourt.am
<http://www.concourt.am>

Ստորագրված է տպագրության՝ 17.01.2021թ.
Դասիչ՝ 77754
Գրաչափը՝ 70X100 1/16
Տպաքանակը՝ 100

Вестник Конституционного Суда Республики Армения N 3-4(99-100)2020
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 3-4(99-100)2020
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 3-4(99-100)2020